235
Q-77

№ 2000

4525 1692-ԱԿ

# ԾԱՂԻԿ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ

Զորս յիշատակէ եկեղեցի Հայաստանեայց 'ի կարգի Յայսմաւուրաց, քաղեալ եղելոցն 'ի տօնացուցի։

Վերածեալ 'ի կարգ Աշխարհաբառինց բառ-անձանց՝ 'ի Հ. Պետրոսէ Վրդպտէ Ագնե-րեան, 'ի միաբանութենէ ամենապատուին Տն Մխիթարայ Աբբայի։

Եւ տպագրեալ հրամանաւ գերա-պատւին Աբբահօր Տն Ստեփան-նոսի երկրորդի՝ Ագոնց։

Արդեամբք ուրուք բարեպաշտի։

Յամի 1803. ՌՄԾԲ։

'Ի ՎԵՆԵՏԻԿ

'Ի Վանս սրբոյն Ղազարու։

Հրամանաւ Մեծաւորաց։

Հայաստանի ազգային գրադարան

1804-2008

# ԱՌ ՎԿԱՅԱՍԷՐՍ։

Գիտեմք՝ զի որք միանգամ առնուն զա-
նուշահոտութիւն առաջնոյ ծաղկան փո-
նելի ուրց, խնկոյն քաղաքին և երկրորդէ-
այսմ՝ առնուլ հոտր ՚ի շտապէ և ուրց յե-
շտապելեաց ըստ յայսմաւուրաց զպէսպէսութիւն։
Թո՛ղ զի զուլ ուղխաւ ՚ի ուղղանէ փօնեն այլ
եկեղեցիք. որպէս և զմանն՝ զորս մեք փո-
նեմք, այլ առանց փօնելոյ ՚ի կարգի յայս-
մաւուրաց խորհրդոց յիշատակեն։ Արդ պատ-
ճառն է յայտնի. զի խորատանելիոր աղգի
քրիստոնէից գեղեցիկ իմն բարեկարգութե
առաջնեալ են փօնել զառաւել միջնաւոր
ութս, կմ զհասարակեալս ՚ի սահմանս խորհրդոց.
ոպ և ամենեքին զայնպիսիս՝ որք հնոյն ձա-
մանակի և երևելի գործովք ծանուցեալ են
ընդ ամ աշխարհ։ Իսկ զայլոց բազմաց ըստ
զյիշատակն ոչինն անքինք արժանագրեալ ՚ի
յայսմաւուրս խորհրդոց՝ է զի սակաւք, և
է զի յուղուլ յաղգաց քրիստոնէից։
Իսկ այսպէս ուրցն ամենեցուն՝ որոց անուանք
յայտնի են, արժանաւոր պարտ ընծայի՝
թէ ու փօնախմբութիւն, գո՛նէ յիշատակութիւն ՚ի
կաթողիկէ եկեղեցւոջ, կա՛մ համառաւթեր ա-
ռելոյ, և կմ ՚ի մանաւանդ աղգս և ՚ի լե-
զուս մատծելոյ։ Իսկ հեփեղութիւն ցանկալի
վարուց նոցա՝ եթէ՛ փօնել ոչ իցեն, և
եթէ յիշատակել, միայն առաջի դնի ամ

առաքինասէր անձանց. որ և է նպատակ
Գործոյս՝ անհնարելի պէ։
Ո՛ւ հեռի 'ի նպատակէ այսմ՝ որ ոչ փառ
որոճէ 'ի սրտի ընդ ճգնութե. անց և զան֊
գատանս հարկս նոցա յանձնառու լինին,
փաղելով որպէս զասացեալն 'ի Շնորհատուոյն։

Անդ մարտիրոսք՝ ընդ պսակին,
որք և մարտեան՝ ըստ օրինին.
Կոյսքըն մաքուր՝ Թագին պճնին,
որք փեսային՝ սպասեցին...
Իւրաքանչիւր՝ յարգար մասին,
առցեն 'ի քէն՝ զոր գործեցին.
Ամուսնացեալքն՝ ըստ օրինին,
և ճգնաւորքն՝ որք առանձին.
Եւ ամենայն՝ որք ըստ կարգին,
զիւրոյ անձին՝ գործեալ բարին.
Քեզ ընծայեն՝ իբրև ծաղիկ,
'ի հոտ անոյշ՝ և երկնային։
Յն որդի. ՉԻԲ։




Խաչելութ̄ին տ̄ն մերոյ ․

# ԾԱՂԻԿ
## ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ
Յիշատակելեաց .

Ըստ կարգի Աբյէուբէնից :

## Ա.

Աբդաս, և Աբդիշու եպիսկոպոսունք Հին պարսից՝ էին յաւուրս յազկերտի արքային : Սէն աբդիշու (Թ այլոց՝ աբդյէսուս), որ էր 'ի քաղաքէն սախարայ՝ առաքինի քարոզ Ճշմարտութեան, նախ ըմբռնեցաւ . զի քեռորդին իւր՝ որ էր սարկաւագ, մատնեաց զնա թգրին իբրև ապստամբ : Եւ թգրն յետ քննելոյ զանմեղութիւն նր՝ ետ տանել զնա առ եղբայրն իւր ներսիհ, որ ստիպէր զնա յուրացումն . Իսկ նա յանդիմանեաց զմոլորութիւն նր . վյ արկեցին դահիճք զեղն մինչև 'ի ճարճատումն ոսկերաց՝ եօթն անգամ, և կիսամահ արկին 'ի բանտ :

Յետ այսորիկ կոչանաւորեցաւ և աբդաս (որ և աբդիոս, կամ աւդա) եղյան խէրխաղիդայ , Է նմին և ԺԷ քահանայք , Թ սարկաւագունք , ԺԶ աբեղայք , Է կուսանք , և այլ քրիստոնեայք իբր ԼԷ : Զոսա եւս դատեալ ներսիթայ՝ մատնեաց կապանօք 'ի ձեռս մոգպետին , որ կոչէր մամեթի , և 'ի խոստովանիլ վկայիցն զուարթ գլխօք զՔս , հրաման ետ մոգպետն՝ ամբոխին , և հարին զբերանս նց քարամբք , և ապա գլխատեցին : 'Ի նմին աւուր հանին և զոբեն արդիշու 'ի բանտէն , և զնր եւս հատին զգլուխ՝ 'ի փառս փրկչին : Հ. Յ. Լ: ՚ի յայսմաւուրս Հայոց , Յունաց , և Լատինացւոց . մայիս . 16 :

Աբդաս , կմ աբդիոս սպարսիկ քրիստոնեայ՝ էր 'ի ներդուլ քաղաքէ , ջերմեռանդն յածպաշտութե՛ 'ի հալածանս շապհոյ կմ յազկերտի . և զն զբլս 'ի պարսից ձգէր 'ի նր հաւատս , կալաւ զնա մոգպետն , և բռնանադատէր երկրպագանել արեգական և հրոյ : Եւ յոչ հաւանիլն՝ հարին գաւազանօք զփոր նր , և տանջեցին յառաւօտէ մինչև ցօր հասարակ . ապա իբրև մեռեալ տարան ընկեցին 'ի տուն իւր . ուր զինի սակաւ ժամուց աւանդեաց զհոգին իւր

ու_

ուրախութ՟ 'ի ձեռս ն՟յ : Հ. պտ. ֆեպր. 20 : Յ. սէպտ. 5 :

ՍԲԵՂԱՅԻ ՍԻՆԷԱՑԻՆ ՀԵՐԻՆ , Ի ԲՌՆՈՒԹԵԱՅ , կամ հռայիթու եգիպտացւոց՝ էին միայնակեացք 'ի Ժամս սբյն անտոնի աբբայի, և սբյն պետրոսի աղեքսանդրու հայրապետին : Եւ եղև 'ի մեռանիլ իշխանին բլեմացւոց՝ ք՟ սարակինոսաց բնակելոց յարաբիա և 'ի սահմանս եգիպտոսի՝ յանապատէն յորդանանու մինչև 'ի լեառն սինայ, յանկարծակի յարձակեցան բարբարոսքն 'ի վ՟ր աբեղայից հանդարտելոց յանապատի . և 'ի խնդրելն 'ի նցէ գանձս և ինչս՝ նոքա ցուցանէին զմաշկեղէն հանդերձս իւրեանց , և զաղքատին խուղս կմ՟ զքարանձաւս իւրեանց . թող զի բ՟վք անյարկ կային բացօթեայ : Ընդ որ դառնացեալ մարդադէմ գազանացն , վ՟ռ ատելուե՟ն զոր ունէին առ քրիստոնեայս՝ սուր հանին և սպանին զն՟ս ազգի ազգի կըտտանօք . զոմանց զգլուխս յերկուս բաժանեցին , զայլս ը՟ մէջ կարեցին , զոմանս անդամ անդամ յօշեցին . ոմանց զսուրն 'ի վ՟ր սրտին դնելով 'ի թիկնամէջսն 'ի դուրս հանին . և այսպէս կրկին պսակաց՝ ճգնութե՟ և մարտիրոսութե՟ արժանի եղեն ն՟ք միանձունքն թուով իբր ձ՟ . զի 'ի

սինա առին նահատակեն անձինք լ՟ը․ և 'ի ռուլթա կմ՟ 'ի հռայիմ՝ խմ՟ ։ Եւ 'ի գիշերին յայնմիկ տեսին բարբա_րոսքն զլեառն սինայ վառեալ 'ի բոց հրոյ, և զահի հարեալ՝ թողին զլեռնա կուրեանց․ և փախեան ։ Իսկ երկուք յաբեղայից անտի՝ որոց անուանք էին սաբա և եսայի, 'ի կոտորածի անդ կենդանի պահեցան 'ի մէջ բազմութե անկելոց․ և թաղեցին զնը ընկերս իւրեանց, և աւանդեցին գրով զկա_տարումն նց ։ Են՝ որք ասեն, թէ կէս մի 'ի սոցա եբր հարիւր ամօք յե_տոյ նահատակեն լցեն 'ի նոյն լեառն սինա յաւուրս սըյն նեղոսի աբբայի ։

Հ․ յունվ․ 11 ։ Յ․ Լ․ յունվ․ 14 ։

ԱԲԵՐԿԻՈՍ՝ էր առաքելագործ եպս յերապօլսոյ փռիւգացւոց յերկրորդ դարու յաւուրս մարկոսի անտոնի_նոսի կայսեր՝ իմաստասէր կոչեցելոյ․ և առեալ յոյժ շնորհս սքանչելագոր_ծութե՝ բժշկեաց երիս դիւահարս․ և քարոզութը դարձոյց և մկրտեաց հինգ հարիւր անձինս․ բերէին առ նա հիւանդս յամ կողմանց, և նա բժշկէր յանունն տն․ ուղ և զխաւարեալ աչս մօր քաղաքապետին և այլոց ոմանց լուսաւորեաց․ և յանջրդի տեղւոջ՝ ուր ծունր եդ յաղօթս, ջուր բղխե_ցոյց առողջարար ։ Եւ 'ի հանել զդե՝

յե_

յերիտասարդէ միոջէ ապառնացաւ նմ՟
դեն՝ վարել զնա մինչև 'ի հռովմ. և
գնացեալ եմուտ 'ի լուկիանա դուստր
անտոնինոսի կայսեր, և աղաղակէր
'ի բերանոյ աղջկանն՝ ասելով, ոչ ե-
լանեմ աստի՝ եթէ ոչ եկեսցէ ծա-
ռայն ա՟յ աբերկիոս յերապօլսեցի ։
Եւ առաքեաց թագաւորն արս՝ բե-
րել զնա, և սբ՟ն եւ զկնի նց՟ 'ի Ճա-
նապարհ հետիոտս. և վաղագոյն ք՟
զհեծեալսն եհաս 'ի հռովմ. և տե-
սեալ զնա դիւին՝ անարգէր զսբ՟ ե-
պիսկոպոսն. և նր՟ սաստեալ դիւին
անուամբն յ՟ի՝ հալածեաց յաղջկա-
նէն ։ Եւ ասէ ցդեւն. փխնկ զի աշխատ
արարեր զիս գալ 'ի յերապօլեայ մին-
չև 'ի հռովմ, արդ և ես հատուցից
քեզ. և հրամայեաց նմ՟ յանուն տ՟ն՝
բառնալ զմարմարիոնեայ բագինն մի,
որ մերձ էր յալքունիս, և տանիլ մին-
չև 'ի յերապօլիս. զի տեսցեն ժողո-
վուրդքն զզօրութի՟ անուանն ք՟ի, և
փառաւորեսցեն զնա ։ Ապա եկն և
սբ՟ն աբերկիոս յարեւելս, և շրջեցաւ
'ի բզ՟մ քաղաքս քարոզութ՟ և նշանա-
գործութ՟, մինչև կոչել զնա հաւա-
տացելոց հաւասար առաքելոց ։ Եւ
յետ ա՟մի դարձեալ 'ի քաղաք իւր,
և ընկալեալ յայտնութի՟ 'ի տ՟նէ վ՟ս
մերձենալոյ վախճանի իւրոյ՝ կազ-
մեաց զտապան իւր, և գրեաց 'ի նմ՟

բանս հանճարեղս և դժուարիմացս · և ձեռնադրեալ զաւագերէց իւր փոխանակ իւր յեպիսկոպոսութիւն՝ տարածեաց զձեռս , և օրհնելով զժողովուրդն՝ աւանդեաց զհոգին իւր առ ա՛ծ , և թաղեցաւ փառօք ։ Հ. Յ. Լ.

Հոկտ. 22 ։

ԱԲՈՒԴԻՄՈՍ վկայն էր 'ի Տենեդոյ կղզւոյն ( ռմկ. պօղճա ատասը , ) յաւուրս Դիոկղետիանոսի · և վ՜ք քրիստոնէութե՜ կալան զնա , և ստիպէին յուրացուլ · և իբրև ո՛չ էառ յանձն , այլ անարգեաց զկուռս և զկռապաշտս , կապեցին զնա 'ի չորս ցիցս , և չարչարեցին խիստ գանհիւք · և իբրև ո՛չ կարացին հաւանեցուցանել զնա ուտել 'ի զոհից կռոց , քերեցին զմարմինն երկաթի քերչօք · և ապա հատին զգլուխն ։ Իսկ 'ի վեցերորդ ժամու աւուրն երևեցան արքայի հրեշտակք սուսերաւորք , և ցուցին նմ՛ զհոգի սրբ՜յն Աբուդիմոսի արիաբար սպառազինեալ · և ասէն , ահա զծառայն ա՛յ զոր դու կարծէիր բառնալ 'ի կենաց · զի գիտասցես՝ թէ յետ մահուանն կենդանի է մեռեալն վ՜ն ք՜ի , և կարող է և յաղթող ՜ըդէմ դի՛ւաց՝ զորս դուդ պաշտես ։ Իսկ անօրէն բռնաւորն՝ թէպէտ և սա ժամն զահի հարաւ , բայց ոչինչ օգտեցաւ · այլ առա-

ռուել մաղեգնեալ հրամայեաց այրել զմարմին սրբին : Հ. օգ. 25 : Յ. Լ.յուլ. 15 :

Աբրահամ, կմ՝ աբրամ եպս պարսից՝ էր յարտաուել ջղջէ՛ ՚ի հալածանս շապուհոյ արքայի երկայնակեցի. և զբղմս ՚ի պարսից ածէր ՚ի հաւատս քնի. վՃ որոյ մատնեցաւ երկաթի կապանօք ՚ի ձեռս ադէլփարայ մոգպետի. և իբրև ատիպէին զնա զոհել արեգական և հրոյ, նա շնորհալից բերանով քարոզէր նա զՃշմարտութիւն յա̃ծային գրոց: Յայնժամ տանջեցին զերանելին աղէի աղէի խոշտանգանօք. և նա յիմի կարդայր զանունն յսի յօգնականուե̃ն. և յետ բանտարկուե̃ն՝ միւսանգամ դատեցաւ և տանջեցաւ. և մինչդեռ ՚ի բերանն էր խոստովանութն ամենայն երրորդութե̃ն՝ հատին զլուխ նր յարտաքոյ քաղաքի անդ:
Հ. փետր. 8 : Յ. փետր. 4 :

Աբրահամ քահանայ անապատաւոր՝ արդար կոչեցաւ՝ էր ասորի ուռհայեցի, աշակերտ սրբյն յակոբայ մծբնայ հայրապետի. զոր քրիստոնեայ ծնողք նր բռնութե̃ մուծին ՚ի կարգ̃ի. իսկ նա յետ եօթն աւուր հրաժարեալ ՚ի կնոջէն՝ կամակցութե̃ նր, արգել զանձն ՚ի խուց մի՝ երկու մղոնաւ հեռի ՚ի քաղաքէն, ՚ի պատուհանէ տանըն-ղէր.

զհօգեւորական կերակուր ։ Յետ տասն ամաց 'ի մեռանիլ ծնողաց իւրոց՝ ետ բաշխել զինչս նց աղքատաց ․ և ե̃ղս քաղաքին բնակչաց զոր̃ն վ̃ն առաքինուե̃ նր̃ , և ձեռնադրեալ զնա քահանայ՝ յղեաց 'ի գեօղ մի կռապաշտից ․ ուր կործանեաց զկուռս նց , և տանջեցաւ 'ի նց̃է զբ̃զմ ժամս , մինչև դարձոյց զն̃ս , և մկրտեաց հաւատոգին ․ և դարձեալ տանջանեցաւ 'ի խուղ իւր , և յիսուն ամ ճգնեալ անդադար աղօթիւք և արտասուօք՝ յաղթեաց ա̃մ հնարից դիւ̃ին ։ Սա եդ և զորբ դուստր եղբօր իւրոյ զմարիամ 'ի խուց մի , և ուսոյց նմ զա̃մ կարգ ճգնուե̃ ․ այլ իբրև պատրանօք չարին անկաւ մարիամ 'ի մեղս , և դարձաւ յԱծ̃ , գնաց աբրահամ արդարն Ծ̃իկ զգեստուք 'ի խնդիր կորուսելոյն ․ և դարձոյց զնա յառաջին կարգ իւր ․ և այնքան սուգաշխարութ̃ ճգնեցաւ Մարիամ , մինչև լինել սքանչելագործ ․ և այնպէս երկոքեան եւս սրբութ̃ կատարեցան 'ի միայնարանս իւրեանց ։ Զգործս սր̃ոյն աբրահամու գրեաց աշակերտակից նր̃ սր̃ն եփրեմ ։ Հ․ հոկ․ 28 ։ Յ․ հոկ․ 29 ։ Լ․ մրտ․ 16 ։

ԱԳԱԹԻ ԿԱՄ ԱԳԱԹԱ կոյս՝ ( որ թարգմանի բարի ,) էր 'ի պանորմայ քղաքէ սիկիլիայ կղզւոյն , չքնաղ յոյժ և մեծա_

ծառուն և պայծառացեալ առաքինու-
թե̃ 'ի հաւատս քո̃ի ․ զոր կալան կա-
պաշտք 'ի հալածանս դեկոսի , և տա-
րան առ կոճինկոխանոս կամ կուն-
գխանոս դատաւոր կատանայ ք̃ղքի ․
որք մինչև հարցեալ էր նո̃ , խոստո-
վանեցաւ կոյսն զքրիստոնէութիւն իւր ,
և յանդիմանեաց զկռապաշտութիւն ։
Զարմացեալ դատաւորին ը̃ համար-
ձակութ և ը̃ իմաստութի̃ նորին՝ ըն-
եղև ամօթով ․ եւ հարկանել ուժ-
գին , և հատանել սրով զստինս նո̃ ,
և արկանել 'ի բանտ ․ ուր երևեցաւ
նմ̃ ո̃ք առաքեալն պետրոս 'ի կեր-
պարանս բժշկի՝ հանդերձ լուսաւոր
պատանեկաւ միով , և մատուցանէր
կուսին զդեղ ինչ՝ զի ողջասցի 'ի վէ-
րացն ։ Ասէ աղախին ․ ես դեղ ունիմ
զք̃ն , որ բժշկէ զիս առանց դեղոյ ։
Ասէ պետրոս ․ և զնա նա առաքեաց
առ քեզ , զի աշակերտ եմ նո̃ . և ա-
ռաքեալ ։ Եւ զայս ասացեալ՝ անյայտ
եղև , և կոյսն գտաւ ողջացեալ բոլո-
րովին , և գոհացաւ զա̃յ ։ Ապա հա-
նին զնա 'ի բանտէ , և քարշեցին 'ի մ̃ր
մանր խեցւոյ , և այրեցին հրով ըղ-
խոցս վիրացն ․ յայնժամ եղև շար-
ժումն , և կործանեցաւ կէս քաղա-
քին կատանայ ․ և 'ի դիմել ամբոխին
'ի մ̃ր դատաւորին սպանանել զնա՝
դադարեցան դահիճք 'ի տանջելոյ ըզ-
կոյսն ։

կոյսն, և եդին անդրէն 'ի բանտ. ուր 'ի գիշերին յայնմիկ յաղօթս կալով աղաւթեայ՝ աւանդեաց զհոգին իւր առ Ած. և հաւատացեալքն առին զմարմին նր, և եդին 'ի տապանի 'ի նշանաւոր տեղւոջ. և արար Ած 'ի ձեռն նր նշանս բժշկ: Հ. ճէփր. 4: Յ. Լ. ճէփր. 5:

ՓԵԲՐՈՆԻԱ վկայուհին՝ էր աշակերտ Նիկողայոսի ուրումն և կնոջ նր սպաւլինեայ կմ պոլինեայ, որք 'ի Ժմկի հալածանաց (Թերևս դիոկղետիանոսի) ուրացեալ էին զՀւտս. բայց ագաթոկլես ոչ եթող զքս, և անօրէն տիկինն ստիպէր զնա ևս դաւանալ 'ի կռապաշտութի. և ոչ կարացեալ հաւանեցուցանել՝ ծանր ծառայութբ և խոշտանգանօք չարչարէր զամս ութ. մինչև երբեմն քարամբք ջարդել զոսկերս նր, և երբեմն փայտիւ և ուռամբ հարկանել զգլուխն և զթիկունս. ապա հատեալ զլեզու նր՝ եւ արկանել 'ի բանտ անսնունդ. որում Թռչունք բերէին պտուղս 'ի ծառոց 'ի կերակուր: 'Ի վախճանի տիկինն նր մտեալ 'ի բանտն՝ շողացեալ ակնով այրեաց զերեսս և ըղկուրծս նր, կմ հրացեալ նիզ մխեաց 'ի փողս նր, և այնպէս կատարեցաւ 'ի քս: Այլք ասեն՝ Թէ դաստուարըն.

ընկէց զնա 'ի հուր, և այնպէս նահատակեցաւ: Հ. սէպ. 25: Յ. սէպ. 16: Լ. սէպ. 17:

Ագաթոնիկէ. տես 'ի Կարպոս:

Ագաթոնիկոս վկայն, և ընկերք նր՛ էին նիկոմիդացի և պոնտացի քրիստոնեայք՝ որք երևեցին 'ի հալածման մաքսիմիանոսի. որոյ հրամանաւ շրջեցաւ եւտողմիոս կոմս 'ի նիկոմիդեայ մինչև 'ի պոնտոս, և սպան զքր̃ս յաղքատաց վ̃ հաւատոց. և զնշխարս նոցա կալեալ՝ տանջէր ուրանալ զքս̃, և զոհել կռոց. և իբրև ոչ առին յանձն, վարեաց զնս̃ ը իւր՝ տանիլ առ թգ̃րն. և տեսեալ զոմանս 'ի նոցանէ՝ զի առ տկարութե չկարէին ընթանալ, սպան սրով: Իսկ զայլս եած կապանօք առ թգ̃րն, որ էր յայնժմ 'ի սիղիւմբրիա Թրակացւոց, և թգ̃րն եւս հատանել զգլուխս նց̃. և են անուանք գլխաւոր նահատակացս, որք էին իշխանք փառաւորք և գիտնաւորք, Ագաթոնիկոս, զոտիկոս, զենոն, թէոպրեպոս, ակինդինոս, պրինկիպոս, և սևերիանոս: Հ. փպ. օգոս. 21. յէւս. 20: Յ. օգոս. 22: Լ. օգ. 22. և ապր. 20:

Ագաթոպոդոս կմ ագաթոպոդոս ծերունի սարկ.

Հայաստանի Ազգային գրադարան
1807-2008

սարկաւագ, եւ Թէոդուլոս ընթերցող երիտասարդ՝ էին եղբարք հարազատք Թեսաղոնիկեցիք, եւ ծաղկեալք բարեպաշտութ՟ 'ի հալածանս մաքսիմիանոսի. զորս գան հարեալ էարկ 'ի բանտ փաւստինոս դ՟ուք Թեսաղոնիկոյ. եւ ն՟ք ուրախ եղեն՝ զի կատարեցաւ երազն, զոր միապէս տեսեալ էր երկոցունց յաւուր միում, ունել 'ի մատունս իւրեանց ոսկի մատանիս, եւ յակունս մատանեաց գրեալ էր մարտիրոսու՟ն նոցա: Տեսին եւ այլ երազ 'ի բանտի, որպ՟ թէ կային 'ի նաւի, որ խորտակեցաւ յալեաց, եւ ընկղմեցան նաւորդք. այլ ինքեանք ելին 'ի լեառն մի բարձր, եւ ապրեցան: Եւ ահա է՟ սուսաւորն հանին զն՟ա 'ի բանտէ, եւ տարեալ զն՟ա հաստատուն 'ի հ՟ւ՟ս՝ ընկղմեցին 'ի ծով. այլ աղքատականաց ն՟ց գտեալ զմարմինս ն՟ց 'ի ծովափին՝ Թաղեցին պատուով:

Հ. ապր. 5: Յ. Լ. ապր. 4:

Ագապէ. տօն է՟ Իրինեայ:

Ագապիա եւ Թէոնէ (կամ Ագապիա եւ Քիոնա) էին 'ի գաւառ Թրակէ պաղեստինոյ 'ի հալածանս դիոկղետիանոսի. զորս մ՟ն 'ի ք՟ն հ՟ւ՟թց, եւ քարոզէր այլոց զճշմարտութիւն, արկին 'ի բանտ. եւ յաւուր՝ յորում նահատա-

կե-

կեցաւ 'ի քաղաքի անդ տիմոթէոս
երևելի վկայն, ընկեցին և զոսա ա-
ռաջի գազանաց. և այնպէս կատա-
րեցան 'ի ք՟ս. կի՟ ը այլոց, սրբու-
հին թեկղ գազանակուր եղև. իսկ
ո՟բն ապասխոս բ՟զ՟մ և այլ տանջանօք
կատարեցաւ : Հ. փղ. օգոս. 30. յետ.
օգոս. 24: Յ. Լ. օգոս. 19: Աւոր. ան-
էտորիոսի :

Սագապիոս կի՟ ագապիոս՝ համաձայն հայ-
րապետ, էր համամայեցի՝ նատեղ յա-
թոռ մ՟բյն ակեղոսի յամի ա՟ն 535.
վ՟ս ամծահաճոյ վարուց իւրոց և ուղ-
ղափառ վ՟դապուեն : Սա 'ի տեղւոյ չի-
նուե եկեղեցւոյ կամեցաւ երթալ 'ի
կոստանդնուպօլիս առ. յուստինիա-
նոս կայսրն. և 'ի հասանելն յեղա-
գա՝ բժշկեաց զայր մի կաղ և համր,
հաղորդելով զնա 'ի մ՟ք խորհրդոյն.
և 'ի մտանել 'ի թ՟գաւորեալ ք՟ղ՟քն՝ ե-
բաց զաչս կուրի միոյ յունկի դրուն
ք՟ղ՟քին՝ եդեալ զձեռս 'ի վ՟ր ն՟ր ան-
ուանմբն տ՟յ. և ընկալան զնա մեծաւ
պատուով թ՟գ՟րն և ամ՟ ք՟ղ՟քն : Անդ
էր յայնժմ անթիմոս եպ՟ս տրապի-
զոնայ. որ էր եւտիքի և սևերիանո-
սի հերձուածողն, և առեալ զպատ-
րիարգութի կոստանդնուպօլսի՝ սեր-
մանեալ էր զաղանդ իւր 'ի քաղաքի
անդ. վ՟ս կշտամբեաց զնա ո՟բ հայ-
րա-

քաղաքէն Ագապիտոս , և ընկեցեալ
զնա յաթոռոյն՝ ձեռնադրեաց փոխ
նր̃ պատրիարգ Քղքին զՄինաս զայր
ուղղափառ և առաքինի՝ վկայեալ յամենց.
և ինքն երանելին Ագապիտոս մինչ-
դեռ կամէր դառնալ 'ի Հռովմ՝ հի-
ւանդացաւ , և փոխեցաւ առ Քս̃ ,
զոր թաղեցին 'ի տաճարի սրբ̃ց ա-
ռաքելոց : Հ. ապր. 15: Յ. ապր. 17:
Լ. ապր. 20:

Ագնանէս , այն է Աձգնէս. ( Յունաց՝
ազնիւ . որ թարգմանի առ նմ̃ ողջախոհ ,
կամ հագնի . և առ լատինն՝ գառն ) . էր
առ դիոկղետիանոսիւ 'ի Հռովմայ՝
կոյս պարկեշտ և իմաստուն . որ զբզ̃մ
կանայս խրատեաց դառնալ 'ի չար
ձնորհէ և 'ի կռապաշտութէ : Վս̃յ
իշխան Քղքին սիմփրոնիոս կալաւ
զնա , և ստիպէր կամ զոհել կռոց ,
և կամ գնալ 'ի պոռնկատունն : Եւ
'ի մերժել սրբուհւոյն զանօրէն հրա-
մանսն՝ ետ բռնի տանել զնա 'ի տուն
պղծութե̃ . ուր 'ի մտանել առ նա
անառակ երիտասարդաց՝ նա զձեռս
յերկինս տարածեալ՝ զքս̃ կոչէր յօգ-
նականութի . և երիտասարդքն առ-
ժամայն թուլանային , և ահիւ մե-
ծաւ արտաքս փախչէին . բայց զի մի
ոմն 'ի նոցանէ յանդգնեցաւ բռնան
հարկանել 'ի նա կոյսն , նոյնժամայն
ան-

անկաւ և մեռաւ ։ Կոչեաց իշխանն զկոյսն , և հարցանէր՝ թէ զիա՞րդ մեռաւ երիտասարդն ․ և նա պատամեաց՝ թէ ը̅ իս էր հրեշտակ տ̅ն իմոյ , որ պահէր զիս 'ի պղծութեց ․ և տղին այն յահէ տեսլեան հրեշտակին մեռաւ ։ Ասէ իշխանն ․ եթէ Ճշմարիտ է բանդ , յարո՛ զմեռեալն ․ և յաղօթել կուսին ծնրադրութե̅՝ յարեաւ մեռեալն , և զահի հարան ամենքին ․ իսկ բռնաւորն համարեալ զկոյսն իբրև դիւթ և կախարդ՝ ետ այրել զնա ․ այլ ըստ ոմանց շիջաւ հուրն , և ապա գլխատեցաւ ․ և այնպէս կատարեցաւ փառաւորե̅լ կոյսն ադնես յամի տ̅ն 304 ։ Որ և յետ ութ աւուրց երևեցաւ փառօք ծնողաց իւրոց , և փարատեաց զսուգ ն̅ց ։ Բժշկեաց և զկոստանդիա զդուստրն կոստանդիանոսի՝ որ դիմեալ էր 'ի տապան ն̅ր նաև ը̅ զմկրտութին , և ապա մկրտեալ՝ շինեաց եկեղեցի 'ի պատիւ սրբուհւոյն ադնեսի , որ ը̅ս ասելոյ հերոնիմոսի՝ յամ ազգս և 'ի լեզուս է հռչակեա̅լ ։ Հ․ յուն․ 10։ Յ․ յուն․ 5։ Լ․ յնվ․ 21․ և 28։ Աճառ․ առ-
Էադնէսի ։

Սովփոս ( ըստ այլոց՝ ապր․ , կմ̅ ապր․ ) սքանչելագործ վկայն՝ էր իսաւրացի՝ զօրական լիկիանոսի ․ և վ̅ն հալածանաց

նաց առանձնացաւ 'ի լեառն , և եղև ճգնաւոր կատարեալ, մինչև առնել նշանս բզմս · այս ծանուցեալ յարքայազուն որսորդաց՝ պատմեցաւ դիոկղետիանոսի · և նա յղեաց ճծ զօրականս՝ բերել զնա · այլ սբն դարձոյց զնս 'ի քս՝ բղխեցուցանելով ջուր յանջրդի վայրի զծնգրչյն · և թգրն մատնեաց զնս և զայլ ևս կապեալս վն անուանն քսի՝ 'ի ձեռս ակիւղինոյ կմ ակուլինոսի եպարքոսի · և նր տարեալ զնս 'ի պոնտոս՝ ետ կախել զսբն ագլխս զներաց , և քերել երկաթի ճանկօք , և արկանել 'ի բանտ · ուր երևեցաւ նմ տր , և ողջացոյց զվէրս նր : Ապա արկին զնա 'ի հուր բորբոքեալ, և ել անախ անվնաս , և եգին անդրէն 'ի բանտ · յայնժամ հւտցին կինն և դուստրն եպարքոսի , և կոչեցան սեղագիա և թէոդոսիա : Եւ դատաւորն ետ հատանել զգլուխս նց, և աղխոսի , և ճծ զօրականաց : Եւ եկեալ եղս սինոդ քղքի իր թադէոս՝ էառ զմարմին սրյն աղխոսի , և թաղեաց պատուով · և 'ի լինել աքանչելեաց 'ի տապանէ նր՝ հաւատացին այլ ևս ժբ զօրականք , և նք ևս կատարեցան սրով :

Հ. նոյ. 20 : Յ. Լ. նոյ. 19 :

Նաթանա էպս տարսոնի՝ էր ծաղկել 'ի

'ի կիլիկիա և յիսաւրիա առաքելա-
կան քարոզութ̃բ և զօրութ̃բ յաւուրս
վաղերիանոսի կայսեր ։ Իր յայնժամ
'ի սելևկիա իսաւրացւոց և Խանթիաղ-
կիմ Անթիմա գուսար մեծատուն և
կռապաշտ ծնողաց . որ հաւատաց 'ի
ք̃ս , և փութայր մկրտիլ . և զմայրն
ևս ջանայր դարձուցանել յետս 'ի
կռոց . բայց մայր նր̃ ոչ կամէր , այլ
հնարէր խափանել և զբարի խոկ-
դատերն ։ Յայնժամ սրբուհին խան-
թուչ առել է̃ իւր երկու ծառայս՝
պատճառանօք գնալոյ առ դայեակն ,
գնմեաց գնալ 'ի տարսոն առ ո̃ք եպս̃
աթանաս , և հայցել զմկրտութի . իսկ
աթանաս 'ի ձեռն հրեշտակի տ̃ն եղ
է̃ առաջ նր̃ . և 'ի վր̃ ձնդրհի նշա-
նաւ խաչի ջուր բղխեցոյց , և նովին
մկրտեաց զնա . երևեցան և երկու
հրեշտակք՝ որք պայծառ հանդերձ
զգեցուցանէին կուսին ։ Ապա 'ի
հաղորդել զնա եպս̃ին՝ տեսանէին
ծառայքն խանթուշի , զի կայր առ
նմ̃ կին մի փառաւոր՝ ունելով 'ի
գլուխն պսակս երկու՝ և խաչ մի .
վ̃յ հաւատացին և խնդրեցին 'ի ք̃ս ,
և մկրտեցան . որոց անուանք են Խա-
րիտինոս , և Նէոֆիտոս ։ Եւ զի 'ի դառ-
նալն 'ի սելևկիա դժտեցան ը̃ խան-
թուշայ՝ մայրն նր̃ և դայեակն , հրա-
ժարեցաւ 'ի նոցանէ հրամանաւ ե-
պս̃ին ,

ծախին , և զգեցեալ մազեղէն՝ կրօնա_
ւորեցաւ 'ի լերին Ճգնութ՟ զամս ի՟է.
ուր յետ յաղթելոյ նմ՝ փորձանաց
դիւին՝ ծանեաւ 'ի ձեռն Հրեշտակի
զվախճան իւր. և տարածեալ 'ի վ՟ր
վիմի՝ ունելով զձեռն խաչանման 'ի
վ՟ր սրտին՝ աւանդեաց զհոգին. և
յետ չորից ամաց յայտնեցաւ սքան_
չելեօք, և ամփոփեցաւ 'ի ձեռն աբ_
բահամու անապատաւորի. և շինե_
ցաւ մատուռն և վանք 'ի վ՟ր տապա_
նի ն՟ր: Իսկ ն՟ը եղեն ախթանոս մատ_
նեցաւ 'ի ձեռս վաղերիանոսի, և
գլխատեցաւ վ՟ն անուան ք՟նի. և
մարմին ն՟ր եղաւ յեէմ յարծաթի
տապանի: Ըմբռնեցան և խարխախմու
և նեղափիոսս վ՟ն 'ի ք՟ն հաւատոց. և
ընկալան քերանս և տանջանս, և 'ի
վախճանի գլխատեցան և ն՟ք: Հ.
ոէպ. 3: Ց. Լ. օգ. 22:

Սուքիաս անգիտայքէ՝ երկու եղբարք
և լ՟ի ընկերօք նահատակեցաւ յա_
ւուրս դեկոսի կի՟ դիոկղետիանոսի
կայսեր. Ջզի էր յայնժմ Մարկոս ոմն
հռվմէ քրիստոնեայ՝ որ 'ի լերինս ան_
տիոքայ պիտիդեայ արածէր զոչխարս
և վ՟ն աքանչելի սրբուէ ն՟ր հնազան_
դէին նմ երէ վայրիք. և 'ի փախչելն
յորսորդաց՝ գային լեզուին զոսս
ն՟ր. լուաւ զայն դուրն մանկնոս,

 և

և առաքեաց Է զօրականս բերել զՍՂ-մարկոս, և նա 'ի ձնմրհի գարձայց քնն 'ի հետս քնի. վասնորոյ զօրականքն գլխատեցան 'ի նինկլիա. իսկ սբն մարկոս վարեցաւ 'ի վճռն քղքս. և յարժամ խնդրէին յանտոխք ախոխեայ դարբինս երկաթոյ՝ 'ի շինել գործի տանջանաց վն նր, եկին երեք եղբարք՝ Աւետիս, Աղէքսանդրոս, և Դաւիթոս. և աշխատս եղեն բազմօք՝ անկարացան կակղել զերկաթն հրով և կռանել. վասյ հաստատեցին 'ի քն, և գլխատեցան ընդ սրբոյն մարկոսի. նոյնպէս զարձան յայնժամ 'ի հաւատս և երեք զարմանկէք նր Յոհաննէս, Մէնաս, և Եղեւթերոս. և նոյնպէս կատարեցան սրով. Է անուանք անձինք են: Հ. հոկ. ԺԲ: Յ. Լ. ռէպս. 28:

Ալեէրոս Դոմնոյի երկու եղբարքն և այլ բզմ ընկերօք նահատակեցաւ 'ի հալածանս ըլկլանոսի. բզն երեք եղբարքն յերոպիա՝ Ալեէրոս, Իլեւդելեա, և կէսպէնոս՝ որդիք վիտալիանի իշխանի զաւառին ուսեալ զքրիստոնէութի յանեփինոսէ ումեմնէ՝ մկրտեցան. և մատնեցան հանդերձ նովաւ և երաշնոխ. և այլ ևս ժդ. ; կին ԲԾ ընկերօք 'ի ձեռս գտուրի ուրուք՝ որ արքունի հրամանաւ հալածէր զքրիստոնեայս յերոպիա, և առաքեցան 'ի հռոմ.

և քննել զնս դիտմեգեայ դժուրի 'ի պատխղոս՝ եւ դնել քար ծանր 'ի վր սրտին ոնեսիմեայ․ որով աւանդ_ եաց նա զհոգին․ և զերազմին այ. լովքն հանդերձ եւ գլխատել․ իսկ զերեակին եղբարս յղեաց 'ի սիկիլիա, ուր կատարեցան տանջանօք հրոյ կմ քարկոծմամբ ։ Հ. ոէպ. 28. Ն. տպր. 20. բոփ ֆէու: Յ. Լ. ճայ. 10:

Սակինոս խոստովանող էրս՝ էր յաւուրս դեկոսի կայսեր․ զոր վն համարձակ քարոզութեն կալաւ մարկիանոս հեւ_ պատոս․ և լռել զվդպտութենր յղղա փրկական անօրէնութեն ; և միւսան_ գամ գալստեան փրկչին , և վասն զօրարթնոց երկնից , գան եհար զնա ուժգին , և էարկ 'ի բանտ․ բայց զնմ բանս սքյն գրեաց , և յղեաց առ թգրն․ և նր տեսեալ՝ թէ չիք ինչ մնասակար 'ի վարդապետութե նորա , հրամայեաց ազատել զնա եղոն․ որ և յետ լուսաւորելոյ զբզմս՝ ոքանչե_ լի քղքավարութբ հանգեաւ 'ի քս ։ Հ. տպր. 11: Յ. ճրփ. 29. յորս ոչ յիշի քաղաք սքյս կմ թեմնր ։ Իսկ առ լատինս սովին անուամբ նշանակի եպս ամիդ քղքի , այլ առանց որոշ_ ման ժմկի․ քղի դնի՝ յիշատակ * յա_ * միդ միջագետաց՝ սքյն ակակիոսի * եպսի , որ վն ազատելոյ զգերեալս՝

* զու_

• զանօթս իսկ եկեղեցւոյ ձուլեաց , և վաճառեաց * : Ն. տպ. 9 :

## Սկսանկեոս Հկայ՝ հրկկին . տես 'ի կարգն տօնելի օրց :

Սկերուբէն կմ աշոկեղենա կոյսն մատաղ՝ էր 'ի մխիլոպօլիս քղքէ փիւնիկեցւոց , որ և բիբլոս պաղեստինու , յաւուրս գիոկղետիանոսի ( ըր ամանց՝ տրայիանոսի ) , դուստր եւտոլմիոսի ազնուականի , մերձեալ հնգամեայ յեւստաթեոսէ եպիսկ . և 'ի տասնամենից և 'ի մեր տուան նմ շնորհք յոյ , զի ըշնամնահասակ աղջկունս ուսուցանէր 'ի բաց կալ 'ի կռապաշտութենէ , և հաւատալ յմն քրիստոսի , և երկկիրպագանել քնի և որ խաչն նր : Վսյ մատնեաց զնա նիկանդրոս կմ նիկոմիդոս առն յատեան վաղերիանոսի դքեշխի . ուր 'ի համարձակ դաւանել կուսին զքն՝ ապտակեցին և գանեցին զնա ուժգին , և ապա հրացեր չամփուրս եդին յականջսն , մինչզի հոսէր ուղեղն արիւնախառն ը ընդդունա և ը լսելիս . ապա յաղօթել նր 'ի բանտին՝ բժշկեաց զնա հրեշտակ այ , և կացոյց առաջի դքեշխին . որ եւ հրաման տայր գլխատել զերանելին , և այնդն կատարեցաւ 'ի քն , կմ ը ամանց՝ նախ

ք զհարկանել դահճին աւանդեաց զհոգին իւր առ ած : Հ. փսլ. յունիս. 13: Յեր. 14: Յ. Լ. յունիս. 13:

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻ՝ էր առ Մաքսիմիանոսիւ, այր ջերմ յածպաշտութե . որ կործանեաց զսեղան զդիցն կռոց , և յանդիմանեաց առաջի Թագաւորին զմոլորութն հեթանոսաց . և 'ի հրամայել կայսեր գլխատել զնա՝ անկաւ դողումն 'ի վր դահճին , և ձեռն նր թուլացաւ : Իսկ սբ վկայն յաղօթս եկաց , և լռեաց զձեռս՝ ասելով . սբ սբ սբ տր զօրութեց . և ապա այլ ոմն 'ի դահճաց կարօղ եղև գլխատել զնա : Յայնժամ տեսանէր Թագաւորն , զի չորս հրեշտակք 'ի հանդերձս սպիտակս առին զհոգի սբյն , և ելին յերկինս . յորմէ զահի հարեալ Թոյլ ետ քրիստոնէից Թաղել զնա փառօք 'ի Թեսաղոնիկէ , և մեղմացոյց զհալածանսն : Հ. փետ. 18: Յ. Լ. նոյ. 9:

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍ ՀՌՈՎՄԱՅԵՑԻ՝ էր զօրական առ Մաքսիմիանոսիւ 'ի գնդէ նուռմերիանոսի կոմսի . 'ի զոհել երբեմն կոմսին ամ բանակաւն՝ իբրև հրաժարեցաւ աղէքսանդրոս , և յայտնեաց զքրիստոնէութն իւր , ազդ եղև կայսեր . և դատել առաջի նր՝ ձաղկե-

կեցաւ. և այսպ մատնեալ 'ի ձեռս ոխերիմանոյն դատաւորին՝ վարեցաւ բռնի տանջանօք 'ի հռովմայ մինչև 'ի բիւզանդիա. ուր խանձողեցին զկողս նր̅, և հարին չքով. եկեալ էր ը̅ նմ̅ և մայր նր̅, որ քաջալերէր զնահատակն. այսպ ածին զնա 'ի բերիա. ուր ա-ղօթիւք ջուր բղխեցոյց, և զմ̅ծս դարձոյց յեսս 'ի կռոց. և յետոյ կա-տարեցաւ սրով 'ի դրիզիպար ք̅ղքի թրակիոյ: Հ. փք. ապր. 28: յէո. 27: Յ. մայ. 13: Լ. մրտ. 27:

Ս. Աղէքսանդրոս պապն հռովմայ՝ ծն̅ 'ի բռու-դեօղն ք̅ղքէ մերձ 'ի հռովմ, (որոյ վկայաբանութիւն փոքր մի նման է նախ-ընթացին), վն̅ 'ի.քն̅ հաւատոց մատ-նեցաւ առ մաքսիմիանոսին 'ի ձեռս նախագրեալ ոխերիմանոյն կմ̅ ոխե-րոյն դատաւորի. և իբրև ոչ հաւա-նեցաւ զոհել կռոց, կախեցին զնա զմիոյ ձեռանէն, և կապեցին վէմ մեծ խոտորնակի զմիոյ ոտանէն. այլ 'ի սրահիլ կենդանի ըս̅՝ տարաւ զնա դատաւորին զհետ իւր 'ի կարթագի-նէ, և անդ եւ տանջեաց քերանօք. յետոյ տարեալ եղև վկայն 'ի մար-կիանուպօլիս. ուր ջահիւք այրեցին զերեսս նր̅. անտի տարան 'ի թիրաք՝ ըս̅ 'ի թրակիա. և յետ բռնի տանջա-նաց հատին զգլուխ սբ̅յն: Հ. ծէփ.

20։ Յ. ֆէփ. 25։ Տես և զայլ աղեք-
սանդրոս վկայ զօրական՝ ը̅դ̅ Անտա-
նինեայ կուսին ։

Ա. ԼԻՊԻՈՍ ՍԻՒՆԱԿԵԱՑ՝ էր յադրիանու-պօլսոյ պափղագօնիոյ յաւուրս հե-րակլի կայսեր. անկեալ ՚ի մ̅ջ̅ վարս, և հասեալ յաստիճան սարկաւագութե. և զի ցանկայր ճգնողական կարգի՝ եգիտ յանբնակ վայրի եւրում գա-ւառի սիւն մի բարձր, յորում կանգ-նեալ կայր բագին. զոր ՚ի վայր կոր-ծանեալ՝ եկաց ինքն ՚ի վ̅ր̅ այնր սեան զամս բազումս՝ բացօթեայ զցայգ և զցերեկ, արեւակէզ և ցրտահար. և ծաղկեցաւ սքանչելեօք. ը̅դ̅ որ նա-խանձեալ դիւ̃քն կոշկոճեաց զնա. քա-րամբք, յորմէ կրեալ երանելին զցաւս կողից զամս ժ̅գ̅. և հասեալ ՚ի խոր ծերութե՝ փոխեցաւ առ ա̅ծ̅ հարիւր և ութ ամաց ։ Հ. փոփ. նոյ. 22։ Յ. նոյ. 26.

Ա. ՄԲՐՈՍԻՈՍ այր սքանչելի՝ էր ՚ի դա-սէ սինկղիտոսաց հռովմայ յաւուրս որդւոց մեծին կոստանդիանոսի, հան-ճարեղ և ներհուն ա̅ծ̅ային և ար-տաքին դպրութեց. որ և եղև հոգա-բարձու քաղաքաց և գաւառաց ար-դարակորով անուանեալ. սա խաղա-ղացոյց և զխռովութիւն յարուցեալս

յա-

յորխանոսաց 'ի միգուլէ, այն է Մեգիոլան կամ միլան քղք իտալիոյ. և վն առաքինութե իւրոյ հաւանութբ յոլովիանոսի կայսեր ընտրեցաւ եպս այնր քղքի. որ և մաքրեաց զայնոսիկ կողմանս յաղանդոյն արիոսի զօրաւոր բանիւ և ճշմարիտ վարդապետութբ իւրով, և ծաղկեցոյց զժողովուրդըն ամ բարեկարգութբ յաւուրս Մեծին Թէոդոսի: Եւ այնչափ էր նախանձայուզութն սրբ հայրապետին 'ի վր եկեղեցական իրաւանց, մինչզի արիաբար ընդդէմ եկաց Թէոդոսի Թագաւորի, և ոչ եթող զնա մտանել 'ի տաճարն այ 'ի տօնի ծննդեանն քի, վն սնապարտ արեանցն եղելոց 'ի Թեսաղոնիկէ հրամանաւ նր. և 'ի խոնարհիլ բարեպաշտ արքային՝ յետ արժանաւոր ապաշխարութե ընկալաւ զնա քաղցրութբ. և 'ի վախճանիլ նր՝ պատուեաց ներբողական ճառիւք: Գրեաց և այլ բզմ ճառս և մեկնութիւնս ճարտար և խորին իմաստիւք՝ 'ի հաստատութն ճշմարտութե, և եթող յետ իւր յիշատակ յաւիտենական. և եղև առաջինն 'ի չորից գլխաւոր վարդապետց եկեղեցւոյն հռովմայեցւոյ. զի ըն առելոյ յայսմ աւուրս մերոց,* որք
* ջահ լուսափայլեաց յեկեղեցին նա_
* խանձաւոր գոլով ուղղափառ հա_
* ւատոյ, և տապալիչ հերձուածո_

ի զայց *. և հասեալ՝ ի բերրիոք ծերու-
թեն՝ հանգեաւ խաղաղութբ ՚ի քս : Հ.
դեկ. 12: Յ. դեկ. 7: Լ. դեկ. 7. և ապր. 4:

Ստեռայն սրբն այ՝ հնոց և նորոց՝ ամե-
յիշատակի՝ համախումբ կատարի յե-
կեղեցւոջ. նախ՝ զի որովհետև յայտ-
նիքն են թուով, իսկ անյայտքն ան-
թիւ, ըստ հանուր յիշատակաւս ամէն
տօնախմբեսցին ՚ի կաթողիկէ եկե-
ղեցւոջ, և ըստ այսմ եղեւ կայ հան-
րական ներբողեան ՚ի յայսմաւուրս
մեր: Եւ երկր՝ զի որովհետև հե-
թանոսք պարծէին ՚ի բազմութն սուտ
աստուծոց իւրեանց, և կատարէին տօնս
և մեծական ուրախութն ՚ի պատիւ նց.
ըստ հնոյն արժան էր քրիստոնէից
պարծիլ ՚ի բազմութն ընտրելոց Ճշմար-
տին այ. վն հայրապետին հռովմայ
Բոնիփակիոս չորրդ՝ որ նստաւ յամի
607, սրբեաց ՚ի հռովմ զտաճար կռոց,
որ կոչիւր բանթէոն, զը ամենադից
մեհեան, նուիրեաց զայն ՚ի պատիւ
նը ածածնի և համօրէն մարտիրո-
սաց, և կարգեաց զտարեկան յիշա-
տակ նց ՚ի սկիզբն նոյեմբերի: Եւ
պապս Գրիգոր չորրորդ հանդիսացոյց
զնոյն տօնախմբութի ՚ի պատիւ ամ
սրբց այ յամի 837. զոր այլք դնեն
յամի 738, առ Գրիգորիւ երրորդիւ:
՚Ի մեզ թէպէտև ընդ յիշատակ ընի

ամ

ժամ սրբյս, բայց յորժամ երկար է միջոցն 'ի սբ գերորդայ մինչև 'ի յիսնակաց բարեկենդանն, թէ երբ յաւելեալ լինի ութերորդ շաբաթ յառաջ քան զյիսնակամուտն, յայնմ եօթնեկի սոյն է՝ ըշ· հրեշտակաց ։ կշ· մարգարէից ։ եշ· առաքելոց ։ և շբ· ժամ սրբց հնոց և նորոց, յայտից և անյայտից ։ Հ. Լ. Նոյեմբ. 1 ։

Ամոն կմ անուն որ հայրն՝ էր եգիպտացի, առաքինի 'ի մանկութէ · որ բռնի մուծեալ 'ի կարգ ծի՝ հաւանեցոյց զհարսն իւր կալ ընդ միմեանս սրբութբ իբրև եղբայր և քոյր · և այս 'ի մեռանիլ ծնողաց երկոցունց յաւուրս հալածանաց մաքսիմիանոսի՝ որբասէր ամուսինն եմուտ 'ի վանս կանանց, և սբն ամոն եղև առաջնապատաւոր 'ի կողմանս Թեբայեցւոց 'ի լերինն Նիտրիոյ՝ սքանչելի քաջաքաւարութբ և նշանագործութբ, առաջնորդ լեալ բազմութե երեքհազար խստակրօն միայնակեցաց · և լի աւուրբք և արդեամբք հանգեաւ 'ի տր · իսկ զելս հոգւոյ նր յերկինս պարակցութբ հրեշտակաց՝ ետես սբ հայրն անտոն, և պատմեաց աշակերտաց իւրոց ։ Հ. փք. ապր. 25 ։ յէրա. 28 ։ Յ. հոկ. 4 ։ Այլ է 'ի սմանէ ամոն կամ ամմոնիոս միայնակեաց՝

Ժամակից ոսկեբերանին և եպիփա-նու ։ Տե՛ս և 'ի Թէոդորոս ։

ԱՄՓԻԼՈՔԻՈՍ (որ և գրի ԱՄՓԻԼՈԽԻՈՍ կամ ԱՄՓԻԼՈՔԻՈՍ) եպս իկոնիոյ՝ էր ա-շակերտ սրբոյն բարսղի կեսարացւոյ, ըստ ոմանց և գրիչ վարուց նորա. միան-գամայն և գործակից նորա և գրիգորի ածաբանի 'ի Նազիանզական վարս, և 'ի յաղթահարել ածաբան վրդպտութե իւրով զհերձուածօղս ժամկին ։ Սա մտեալ երբեմն առ մեծն Թէոդոս՝ ետ զաւորական ողջոյն յարգութե թա-գաւորին. իսկ արկադէոսի արքայոր-դւոյն՝ որ նստէր ընդ աջմէ հօրն, վեր 'ի վերոյ ետ զողջոյն թեթևագոյն ։ Եւ 'ի դժուարել արքային ընդ այն, ասէ ցնա սբ եպսն. տեսանես ա՛ր-քայ՝ զի ոչ տարար զանարգանս որ-դւոյ քո. և արդ՝ դիտեա՛, զի և ածյն ածն չկարէ տանել զարհամար-հանս միածնի իւրոյ յերեսաց քրս-մարտ հերետիկոսաց՝ որք զօրացել են յաւուր յայսմիկ ։ Զարմացեալ թգրին ընդ իմաստութե սբյն՝ առ ժա-մայն խնդրեաց քարտէս, և գրեաց ձեռօք իւրովք խափանել զհամար-ձակութի արիանոսաց, եւնոմեանց, տաբէրեանց, մակեդոնեանց, և այլո-ղինարխոսաց ։ Սորա և զայլ բզմ ինչ սբն ամփիլոքիոս յօդուած եկե-ղեց.

զհեցւոյ՝ բանիւ և գրով. և լի ա-
ւուրբք հանգեաւ 'ի քս։ Հ. հոկտ.
26։ Յ. հոկ. 19։ Լ. նոյ. 23։

Եդեսիոս կամ Աեդեսիոս. տես Ապ-
փիանոս։

Եղեալաս և փոքրոն կամ ափոէ՝ էին յազգէն պարսից 'ի հալածանս շապհոյ։ Այխթալաս քուրմ էր կռոց. և ան-կեալ յախտ անբուժելի, և ոչ գտեալ ուստեք հնարս, եդ 'ի մտի երթալ առ եպիսն քրիստոնէից, և յելանելն 'ի ձնողրն՝ բժշկեցաւ. վսյ հաւատաց 'ի քս, և մկրտեցաւ. և այնուհետև եղև քարոզ ճշմարտութե առ հեթա-նոսս, մինչև դարձուցանել զբզմս։ Կոչեաւ զնա իշխանն ջղքին, և հրա-մայեաց քրիստոնէի միումհատանել զաւնկն այխթալայ. և նա առ ահի գողալով կատարեաց զհրամանն. և նոյնժամայն չորացաւ ձեռն իւր, իսկ զսբն արկին 'ի բանտ։ Իսկ տափոն էր սարկաւագ. զոր կալեալ 'ի նոյն աւուրս վս 'ի քս հաւատոց՝ գան հա-րին ուժգին, և եդուն 'ի մոգպետն. ը նմին և զայխթալաս. և մոգպետն եհան զնս առաջի թագաւորին. յոր-մէ հարցեալ և հաստատուն գտեալ 'ի հաւատս քնի՝ գլխատեցան։ Հ. փբ. տեկ. 16. յէտ. 16. և 22։ Յ. տեկ. 11։

Սանդխտա պարսիկն (որոյ ճիմն անյայտ,) էր այր Տիկ, բայց քրիստոնէից հաւատով, սա մտեալ 'ի քղքն արտաւէզ (որ և արվէլ) յանդիմանեաց զմոլորութն կռապաշտից. վսյ կալան զնա քղքացիքն, և չարաչար գանիւք խոշտանգեալ՝ քարշեցին արտաքս իբրև զմեռեալ. և յետ ժամուց ինչ բացեալ զկայծն զբերանն՝ ասէ ցմերձակայս. արիք կացէք յաղօթս, զի տեսանեմ սանդուղս յերկրէ յերկինս հասեալ. և արք հրեշտակք՝ որք ելանեն 'ի վեր և ասեն ցիս. եկ ը մեզ, և հանգուք զքեզ 'ի քղքն լի լուսով և ցնծուե: Եւ զայս ասացեալ՝ աւանդեաց զհոգին իւր ուրախուե առ ած: Հ. Յ.

Ի. ԴԷԿ. Ի:

Սանդխտա քահանայ՝ ուխտ ընկերօք նահատակեցաւ առ դիոկղետիանոսիւ: Քշեալ 'ի խոստովանիլ անանխայի զքս ած առաջի մաքսիմանի դատաւորի, և 'ի թշնամանել զկուռս, գանեցին ուժգին. ապա արկին առաջի գազանաց, այլ ոչ մերձեցան 'ի նա. վսյ հրամայեց շամփուրս խարշացուցին 'ի վր որովայնն, և քացախով և աղիւ և խոզդով չփեցին, և արկին 'ի բանտ. ուր մնաց անսուաղ զաւուրս եօթն. զոր տեսեալ Պէփրոն բանտապանին՝

ան-

անկաւ յուսոյ նր, և մկրտեցաւ ։ Յետ այսորիկ եկն այլ դատաւոր մաքսի-միանոս անուն. և ետ կապել զանա-նիա և զպետորոս յանիւս, և հոլովել մինչև 'ի ջարդուած ամ ոսկերաց. կմ ըս այլոց՝ կապել յանիւն եդ 'ի վր հրացեալ կասկարայի. այլ 'ի պահել նց տերամբ անվնաս՝ հովացին եօթն դահիճքն՝ որք տանջէին զնս. և հրա-մանաւ դատաւորին արկան ամքին՝ ըն ինն վկայք, 'ի ծով. և այնպս կա-տարեցան 'ի քս ։ Հ. յնվ. 30 ։ Յ. յնվ. 27 ։

Սանափառնա կոյս հաւաղճայեցի՝ էր կրօ-նաւորել 'ի վանս է այլ կուսանաց. և 'ի հալածանս դեկոսի և վաղերիա-նոսի մատնեցաւ իբրև գլխաւոր և երիցագոյն 'ի կուսանս՝ 'ի ձեռս պրո-քոսի դատաւորի, անուր 'ի պարս-նոցի. և յանձնէհէր դաճանիլ նր պհա-ւասս քնի՝ ապրասկս հանին նմ. ա-պա տարածեցին 'ի վր հրոյ, և հե-ղին 'ի վր նր ձիւթ և ձէթ եռացեալ՝ յետոյ քերեցին զմարմինն. հատին զստինս նր. 'ի բաց կորզեցին զեղն-գունս. կտրեցին զձեռս և զոտս. և ջարդեցին զատամունսն. և 'ի վախ-ճանի հատին զգլուխ փառաւոր կու-սին ։ Այլ մինչդեռ 'ի տանջանս էր սրբուհին, խնդրեաց ջուր. և մա-

տոյց

տոյց զայն նմ՛ ոմն կիւրեղ անուն · վ̄յ և զկիւրեղ գլխատեցին, որ եղև անզուգական վարձ տալոյ նր̄ զջուր բաժակաւ յանուն քս̄ի : Հ. հոկ. 19. Յ. հոկ. 12: Լ. հոկ. 28 :

Անաստասիա կին հռովմայեցի՝ էր 'ի ժմկս դիոկղետիանոսի՝ դուստր հօր հեթանոսի, և մօր քրիստոնէի, ուսեալ առ սուրբ խրիսոգոնոսի վ̄դպտի հաւատացելոց, և միրոնեալ 'ի նմանէ · բայց հայր նր̄ ետ զնա 'ի կնութի̄ն պոպղիոսի առն հեթանոսի · որ սկսաւ խոշտանգել զաղախիննս նորին արկանելով 'ի բանտ՝ վս̄ ատելոյ նր̄ զկռապաշտութի̄ն : Այլ յընկղմիլ պոպղիոսի 'ի ծով՝ 'ի գնալն դեսպանութե̄բ 'ի պարսս, ազատացեալ սրբուհին անաստասիա՝ շրջէր իբրև աղքատ գծուծ հանդերձիւք և միով աղախնաւ · և մտեալ 'ի բանտս՝ դարմանէր զնահատակս, և բաշխէր զինչս իւր կարօտելոց : Վ̄յ մատնեցաւ 'ի ձեռս դատաւորաց, և վարեցաւ ազգի ազգի տանջանօք մինչև 'ի սահմանս բիւզանդիոյ · և ապա առ ժմկ մի թողաւ ազատ · որ և հանդիպեալ սրբուհւոյն թէոդիտեայ՝ որ կատարեցաւ երեք որդւովք, քաջալերեաց զնա · բայց բռնեալ զնահատակուն նոցա, և զայլ եւս անթիւ բազմութի̄ն 'ի միում գիշերի,

րի · Լոյր գառնամլես · զոր խմացեն հեթանոսաց՝ մատնեցին 'ի ձեռս փըլրոսի եպարքոսին Լուրիկեցւոց · և նա եւ զնա 'ի ձեռս ուլպիանոսի քրմապետի՝ առնել իւր. կին · իսկ սրբուհին անարգեաց զնմ հրապոյրս ուլպիանոսի · և 'ի կամիլ նր մերձենալ 'ի նա՝ կուրացաւ · վսյ արկին զսրբուհին 'ի բանտ անսուաղ զաւուրս բզմս · և ապա Է այլ մահապարտաց ընկեցին զնա 'ի խորս ծովուն ։ Բայց սրբուհին զերծաւ կենդանի 'ի կղզին պալմիւրեի կմ պալմարիոյ · ուր դատաւոր տեղւոյն 'ի նահատակել որով և պէսպէս տանջանօք զբազմութիւն հաւատացելոց՝ իբր երկերիւր արանց, և եօթանասուն կանանց, եւ կապել և զսրբուհին անաստուածն 'ի չորս ցիցս, և այրել հրով · զորոյ զմարմինն առեալ կին մի հաւատացեալ՝ ապողոնիա անուն, թաղեաց 'ի պարտիզի իւրում · և յետոյ շինեաց 'ի վր նր վկայարան ։ Եւ եղև անուանեալ մին 'ի նշանագործ վկայուհեաց ։ Հ · դէկ · 21 ։ Ց · դէկ · 22 ։ Ղ · դէկ · 25 ։

Անդրէաս կրօնաւոր կրետացի՝ էր մի յերևելի արանց յութերդ դարու · որ 'ի ժմս կոստանդեայ կայսեր կոպրոնիմոս կմ կաւալինոս կոչեցելոյ

է-

եկեղ՟ ՚ի կոստանդնուպօլիս , ջատա-
գով լինէր պատուոյ ս՟ր պատկերաց
և նշխարաց ս՟րց . և յայտնապէս կըշ-
տամբէր զմոլորութ՟ե պատկերամար-
տից ։ Ընդ որ բարկացեալ Թագաւորն՝
ետ հարկանել զնա արջառաջլօք , մին-
չև տորոբեցաւ ա՟մ մարմինն . և ևս
ետ ջարդել զբերան ն՟ր քարամբ , և
զատամունսն խորտակել , և կապել
զուճան յատս ն՟ր , և քարշել ը՟ն մէջ
ք՟ղքին . հուսկ յետոյ ձկնավաճառ
ոմն եհատ կացնով զաջոյ ոտն ս՟րյն ,
և այնու աւանդեաց զհոգին իւր առ
ա՟ծ . և ՚ի լինել սքանչելեաց ՚ի ձեռն
ս՟րյն՝ Թաղեցին զնա պատուով ՚ի տե-
ղի մի ս՟ր՝ կրկին կոչեցեալ ։ Հ. հոկ.
18 ։ Յ. ծածագր. հոկ. 17 ։ Լ. հոկ. 17 ։

Անդրոնիկոս անտիոքացի ոսկերիչ , և
ամուսինն ն՟ր Աթանասիա էին ՚ի վեց-
եր՟դ դարու՝ անձինք երկիւղածք յա՟յ
յոյժ , աղքատասէրք և աղօթասէրք .
որքա յետ վախճանելոյ երկուց զա-
ւակաց իւրեանց ՚ի միումաւուր՝ միա-
բան յօժարութ՟ե յանձն արարեալ զան-
ձինս ՚ի կամս ա՟յ , բաժանեցին զինչս
իւրեանց յաղքատս . և գնացեալ
յուխտ յեգ՟իպ՝ անցին յաղեքսանդրիա .
և գտեալ ՚ի սկիտէ զհայրն դանիէլ՝
ուսան ՚ի նմէ զճ՟նպրհ կատարելութ՟ե ։
Անդրոնիկոս կրօնաւորեցաւ առ ոտս

հօրն

Հօրն Դանիէլի, և աթանասիա աստուած_
նացաւ ի կուսան կանայս. և յետ
ճգնելոյ զամս երկոտասան սքանչելի
առաքինութբ՝ հանդիպեցան մեռանելոց
'ի գնալն միաբանդամ յեկէմ. և լուաւ
գնացին և դարձան. զի թէպէտ ա_
թանասիա ծանեաւ զանդրոնիկէ,
այլ սա ոչ ծանեաւ զնա, զի զգեցեալ
էր առնացի. և ապա հաճոյ Հօրն
դանիէլի բնակեցան յուխտաստանէ կի
ժանո. որ այց անուանեալ նոյ հայրն դա_
նիէլ. և 'ի փոխիլ նոց երջանիկ մա_
հուամբ՝ թաղեաց զնոսա ծերն հան_
դերձ բազմութբ սկիտացւոց, օրհնելով
զնս 'ի վարս հարանց: Հ. ֆեբ. 7:

Յ. մրտ. 2: Լ. հոկ. 9:

Ս. Անթիմոս՝ Հեղայ հաւատափառն կոչեցեալ
'ի յարութենէն յովհաննու, էր մի յա_
ռաջին աշակերտաց 'ի ժամս առա_
քելոց, ձեռնադրեալ 'ի նոյն եպս
եպիսկոպոսաց քաղաքի ամասիացւոց, և
ծառայեաց առաքելական քարոզութբ
մինչև 'ի ծերութի իւր. սա աղօթիւք
փրկեաց հաշմեաց զգեա, և ան_
գործ արար զխաբէութիս նոցին՝ որ 'ի
բագինս. մինչզի դևքն երևեցան կա_
պուտ խոխանաց, և ասեն. ոչ կա_
րեմք կալ 'ի տեղիս յայս, և ոչ ըն_
դունիմք զձեռնձերուսն զոհից ձերոց.
զի անթիւ քրիստոնէից գլխաւորն
բանա

քանանայ 'ի վ՜ր մէր: Այս կալաւ զա-
ռաւօր քաղաքին զնք եպսն, և ոչ
կարացեալ հաւանեցուցանել զնա զո-
հել կռոց՝ եւ արկանել 'ի ցուլ պղ-
ղնձի ջեռուցեալ և շողացեալ. ուր ա-
զօթեալ սՃյն՝ աւանդեաց զհոգին,
ոնք 'ի քաղցր քուն լինելով. և հա-
ւատացեալքն առին զնշխարսն սՃյն, և
թաղեցին պատուով 'ի նոյն քաղա-
քին պերգամայեցւոց: Հ. տպր. 10: Յ.
Լ: տպր. 11:

Սանոյշ ուքեանէին՝ (որ է՟ մլքայ անխ-
ախա) էր 'ի թեսաղոնիկեայ առ մաք-
սիմիանոսի կայսերաւ, որք մնացեալ
'ի բարեպաշտ ծնողաց, և առաքինի
վարուք քաղաքավարեալ. և եղև 'ի
միում աւուր յերթալ նր է՟ առվորու-
թե յեկեղեցի՝ է՟ առաջ եղև նմ մին
'ի զօրականաց հեթանոսաց. և սաս-
տէր զնա 'ի մեհեանն երթալ, և զո-
հել կռոց: Եւ յէ՟դէմ դառնալ սրբ-
բուհւոյն և 'ի թշնամանել զդևս, խո-
ցեաց զնա այրն սրով կամ դեղար-
դեամբ է՟ կողս և է՟ սիրտն. և նր
անկեալ յե կեր՝ գոհանայր զնէ,
թաւթաւել յարիւն մինչև աղօթիւք
աւանդեաց զհոգին: 'Ի նոյն աւուրս
նահատակեցաւ անդ և եղբ նորին
քեղքի որ և կոչիւր անխ-ախա: Հ.
տպր. 16: Յ. Լ: տէկ. 30:

ԱՀՆ.

Սանդխտոս բժիշկ՝ էր 'ի սեբաստիոյ. որ զնմ հիւանդս բժշկէր անուամբն քնի, և փոխկ վարձու դարձուցանէր զնն 'ի հաւատս: Վսյ կալեալ զնա ադրիանոս դատաւոր՝ (թերևս 'ի հալածանս դիոկղետիանոսի), և յետ բզմ չարչարանաց՝ էարկ 'ի կաթսայ եռացեալ. և զի անվնաս պահեցաւ, ընկեց առաջի գազանաց, և նք ոչ մերձեցան. ասի եւս՝ թէ ինձ մի 'ի գազանաց անտի մարդկային բարբառով խօսեցեալ իցէ իբրև զէշն բաղաամու, և յանդիմանեալ զկռապաշտս: Յետ այսորիկ 'ի կործանել սրբյն աղօթիւք զբագինս կռոց՝ եղև հրաման հատանել զգլուխ նր. և 'ի բղխել կաթին հանդերձ արեամբ՝ հաւատաց Կիրակոս դահիճն, և նզովեաց զկուռս. վսյ և նա ևս կատարեցաւ սրով: Հ. օգոստ. 28: Յ. Լ. յուլ. 15.

Սոփոնիէ եպիսկոպոսն էր 'ի Նիկիոյ 'ի հալածանս դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի. և վն 'ի քն հաւատոց մատնեցաւ 'ի ձեռս արիսկիղիանոսի իշխանին. և յետ դանից արկաւ 'ի բանտ. զոր կրկին քննեալ՝ քերեցին 'ի կախաղանի զմարմինն, և խանձոզեցին հրով. ապա հրացել շամփրօք

ծա-

ծակեցին զերկոսին թաթս ձեռաց, և զաջողունս ոտից. իսկ երանելին կենին գոչանալով փառաւորէր զԱծ. յայնժամ բուրեաց 'ի նմէ հոտ անուշութե խնկոց. և եկն ձայն յերկնից՝ որ քաջալերէր զնա: Յետոյ փակեցին զնա 'ի բանտի, ուր բժշկեցաւ 'ի Տնէ. և մնաց անդ զամս երկու յանապանելի նեղութիւն. և իբրև ոչ էառ յանձն թողուլ զՔս, 'ի վախճանի արկաւ 'ի լիճ. ուր երևեցան երկու հրեշտակք, և առանդեցին զհոգի նր, և զմարմինն հանին 'ի ցամաք. զոր թաղեցին քրիստոնեայք ըստ հրամանին՝ որ եղև նր 'ի տեսլեան: Բայց ոմանք ասեն զկատարումն նր սրով լինել: Հ. պտ. ծայ. 10: յետ. ծայ. 10. և յունիս 13: Յ. Լ. յունիս 12:

Անտոնինէ կոյս, և Աղէքսանդրոս զօրականն՝ էին 'ի կապադովկայ կմ 'ի կորդոմայ գեղջէ ('ի սահմանս բիւզանդիոյ) 'ի ժամս մաքսիմիանոսի: Սրբուհին անտոնինէ՝ պարկեշտ աղախինն Քի մատնի 'ի ձեռս փեստոսի դատաւորի, և չառեալ յանձն ուրանալ զՔս, արգելաւ 'ի տուն պոռնկութե իբրև 'ի բանտի. ուր անարատ մնաց նա՝ կացեալ անմեղ զաւուրս երիս. և 'ի չորրորդում գիշերի

չէրի ծագեաց յերկնից լոյս , և ա-
ռւան նմ կերակուր պքանչելեօք 'ի
տնէ : Այս միւսանգամ դատեալ
զնա՝ բրածեծ և սրածեծ արարին .
և դր̄ձլ արկին 'ի պանդկատունն :
Յայնժամ երիտասարդ մի 'ի քաջ
զօրականէն՝ աղեքսանդրոս անուն՝
հրամանաւ հրեշտակի տն եմուտ 'ի
բանտն . և արկեր զնովաւ զքղամիդ
իւր՝ քաջալերեալ եհան 'ի դուրս 'ի
տեղւոջէն , ոչ թէ ինքն իցէ ելեալն ,
և ինքն եկաց 'ի ներքս 'ի տեղի նր .
ապա 'ի գալ այլոց անտաւակ զինուո_
րաց՝ 'ի վեր եղ բանն . վն կոչեայ դա_
տաւորին զաղեքսանդրոս առաջի իւր .
և 'ի խոստովանիլ նր համարձակ զքս ,
կախեցին զնա , և սրով կոտորեցին
զմարմինն . և նր զօրացեալ յերկնա_
ւոր ձայնէ՝ արիաբար տարաւ տան_
ջանաց , և արկաւ 'ի բանտ ը անտո_
նինեայ : Այս զերկոսին ես դատէր
փեստոսն՝ եւ հատանել զմատունս
ձեռաց և ոտից նց , և զնս ընկենուլ
'ի հուր , և այնպէս կատարեցան 'ի
քս , և մարմինք նց ամփոփեցան 'ի կոս_
տանդնուպօլիս : Հ . յունի . 9 : Յ . յու_
նի . 10 : Լ . ծոյ . 3 :

Սոփոնենոս Հնոյ՝ կրկին , դտանես 'ի
կարգի տօնելի սբց : տես և ասա ը
Մելասխոլոսի :

ԱՀՆ

ԱՆՏՈՆԻՆՈՍ ՔԱՀԱՆԱՅ, կմ ը այլոց՝ այր ծեր, էր 'ի կեսարիոյ պաղեստինոյ առ մաքսիմիանոսիւ. զոր կալեալ փիրմիլիանոս իշխան գաւառին վն 'ի քն հաւատոց, ը նմին և զերիս ընկերս մանկագոյնս, որոց անուանք էին Նիկեփորոս, Զեբինաս, և Գերմանոս, և նահատակեաց սրով 'ի կեսարիա: Ընդ նոսին ըմբռնեցաւ և Մանաթեա (ը այլոց Մանեթան, կմ Էննաթա) կոյս սկիւթոպօլսեցի. զոր յետ շրջեցուցանելոյ մերկ ը քղաքն, ծանր տանջանօք չարչարեցին. յորոց անվնաս պահեցաւ նա մեծամեծ սքանչելեօք հանդերձ, և դարձոյց զբզմս յանհաւատից յածային վարդապետութե. վրջ արկին զնա 'ի հնոց բորբոքեալ. ուր յետ երկար աղօթից աւանդեաց զհոգին: Հ. փք. հոկ. 31: Յ. Է. նոյ. 13:

ԱՆՖԻԼՈՔԻՈՍ. տես Ամփիլոքիոս:

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ՝ առաջին թագաւոր Հայոց 'ի ցեղէ Բագրատունեաց. էր որդի Սմբատայ սպարապետի խոստովանող կոչեցելոյ, այր ընտիր ամ ձրիւք հոգւոյ և մարմնոյ, և գովելի վարուք առաջի այ և մարդկան. որ իւրով խոհական իմաստութբ և կատարեալ առաքինութբ խաղաղացոյց

ԸՂ-

զխռովութիւն հայաստանեայ ի յերեսաց
օտարաց և ընտանեաց, և հայրա-
պետութ խնամով յանձանձեաց զաղէ-
խուր • ջանացաւ բառնալ և զերձիմն
երկպառակութիւն եկեղեցւոյ 'ի ձեռն
ժողովոյն շիրակվանու • և մն այսր
ամի արժանի եղև պսակիլ թագա-
ւոր հայոց՝ կրկին թագաւ, զոր ընկա-
լաւ յամիրապետէն այլազգեաց և 'ի
կայսերէն յունաց վասըն արշակունե-
ւոյ • և յայնմ հետէ առաւել ևս
բարեկարգեաց զհայաստան Ն, և
պայծառացոյց զեկեղեցիս բարեզար-
դութբք • և այնպէս ըն արդեամբք ըն
օրինակի ամծանէր թագաւորաց հան-
դեաւ խաղաղութ 'ի քն, յամի 889 •
ՅԼԸ• կացեալ իշխան ամս • ին• և
թագաւորեալ այլ ևս ամս է։ Հ․ պ․
ձայ․ 27․

Ընդ սմին յիշատակին և այլք 'ի բա-
րեպաշտ յազնուրդաց և յազգատոհմէ-
նր • և առաւելապէս՝ (բաց յորդւոյ
սորա 'ի մեծաւոր նահատակէ • զո-
րոյ զյիշատակն դտանես առանձինն,)
Աշոտ երկրորդ՝ ողորմածն կոչեցեալ,
որդի աբասայ որդւոյ սմբատայ որդ-
ւոյ առաջնոյն աշոտոյ • քանզի սա
բաց յայլոց պանծալի առաքինութեց՝
եա զանձն 'ի շինութ եկեղեցեաց և
վանորէից • և առաւելաւ յողորմա-
ծութ և 'ի խոնարհութ • զի ոչ միայն

շի․

չինեաց աղքատանոցս և հիւանդա֊նոցս, այլ և սեղանակից իւր առնէր աղքատս հիւանդս, զկաղս և զկոյրս. և ի շխանս իւր փառաւորս անուա֊նէր զնս̃, և զձերս նց̃ համարէր իւրև ականս պատուականս, և զբաժակն իւր թագաւորական մատուցանէր նց̃, և զմնացորդս նոյն բաժակին ինքն ըմպէր. և այնքան առատաձեռնու֊թ̃ բաշխէր կարօտելոց, մինչև դատար֊կել զգանձս իւր: Սոյնպէս և երա֊նելին կողակից նր̃ գլխոյն խոսրովա֊նոյշ գործակից էր յամ̃ բարեգոր֊ծութիս առն իւրոյ. որ և շինեաց զհռչա֊կաւոր վանս սանահնի և հաղբա֊տու. Հ. պտմ. ճայ. 27:

Տապաւոր, կէտ ապատորը, այն է ԱՀԷԷայ Օր, էր մին յերևելի հարց Չփնաւո֊րաց, ստանկաւէլի ծերութ̃ և խստա֊կրօն վարուք. որ ունէր ը̃ իւրև հա֊զար կէս սուրբ հայար միաբանս. և սուանց դպրութե՛ ի սեպանու էր դրոց֊ ունէր և զշնորհս բժշկութե, և զոգի ծածկատեսութե. ոչ ունիս տեսա֊նել 'ի վարս հարանց: Այլ թէ ո֊մանք զարատ որոգինեանց արկանեն 'ի վը̃ սորա, քննեացուք յԸ̃արձակն գործոյս: Հ. ապր. 28: Յ. ծամակր. օգ. 7:

Սադդուկեցիք (կամ արդարենիք) էր 'ի մարդկա քաղաքէ լինդացւոց · որոյ շրջեալ 'ի զանազան տեղիս՝ դարձոյց զբազումս յանհաւատից · մ͞ն կալեալ եղև յիկոնիոն քղքի , և կոչեցեալ կապանօք առաջի ատենակալին իշխանին՝ խոստովան եղև զանձնէ լինել ծառայ ք͞սի : Եւ 'ի սոփալել զնա իշխանին երդնուլ 'ի բախտն արքային՝ չեռաւ յանձն · զի մի կարծեսցի Ճանաչել զայլ ո͞ք բացարձակ՝ բաց 'ի բռ-լորեցունց սպարչէն : Այլ յետ հարուածոց 'ի խաչ հանելին զերանեալն , և գեղարդեամբ խոցեցին · և այնպէս կատարեցաւ 'ի ք͞ս : Հ. փտ. յուլ. 22:
յեմ. 27: Յ. յուլ. 9: Լ. յուլ. 10:

Սպփռնիմոս՝ (որ է յն", աստօնօմոս) էր եպս խոսալացւոց առ դիոկղետիանոսիւ · և մ͞ն հալածանաց ժամանակին դնայ 'ի բիւթանիա · ուր ընակեալ 'ի դիւղն սիւրէ առ կուռնելիոսի ուսեալն մծառէր առն , քարոզէր և դարձուցանէր զբազումս , մինչև չինեալ եկեղեցի յանուն հրեշտակապետին (միքայէլի , կամ գաբրիէլի՝) ձեռնադրեաց զկոռնելիոս սարկաւագ · և յետ քարոզել յայլ ևս տեղիս՝ եկն և ձեռնադրեաց զկկոռնելիոս եպս : Եւ մինչդեռ յա-

ւուր միում մատուցանէր զն̃ր պատարագ յեկեղեցին՝ զոր ինքն շինեաց, գիմեցին 'ի վ̃ր ն̃ր կռապաշտք սուսերօք և բրօք և քարամբք. և ցրուեալ զքրիստոնեայսն՝ սպանին զն̃ըն առաջի ն̃ր սեղանոյն. զոր առեալ հաւատացելոց՝ թաղեցին 'ի գեօղն կոչեցեալ վանբլուր. և 'ի ժամանակս կոստանդիանոսի շինեցին 'ի վ̃ր գերեզմանին եկեղեցի: Հ. Յ. Լ. ոկտ. 12:

Ապփիանոս (որ և գրի ապպիանոս, ամփիլիոս, կամ անփիլիոս,) և եղբայր ն̃ր Եդեսիոս (որ 'ի մեզ գրեալ է եղիսէոս,) էին 'ի քաղաքէն լիւկիոյ՝ առ մաքսիմիանոսիւ. և 'ի գալ խուրեանց 'ի բերիտոն՝ աշակերտեցան սբ̃յն պամփիլեայ մարտիրոսին: Յետ այսորիկ ապփիանոս ըմբռնեցաւ յուրբանոս իշխանէ. և 'ի խոստովանիլ զք̃ն 'ի ձայն ցնծութ̃ե երգոց՝ խոշտանգեցին զնա դանիւք. ապա օծին զմարմինն սբ̃յն ձիթով, և հրով խանձողեցին՝ հանդերձ քերանօք, մինչև 'ի բանալ կողից. և 'ի տեսանել զանպարտելի համբերութ̃ե ն̃ր՝ ընկեցին 'ի ծով. յորմէ զերծաւ ը̅ ոմանց, և առ դուռն քաղաքին աւանդեաց զհոգին: Իսկ եդեսիոս վարեցաւ յաղէքսանդրիա՝ 'ի սատապանս պղնձի մետաղաց. ուր տեսեալ

սեաւ նորա զհերակղեոս իշխանն՝ զի ան-ողորմ տանջէր զքրիստոնեայս, ա-պաժոյժ եղեալ՝ յարձակեցաւ 'ի վերայ իշխանին, և զգետնեալ զնա՝ գանեաց· վերայ եկեալ զօրականաց՝ այնչափ հա-րին զեդեսիոս, մինչև եհան զոգին· և զմարմինն արկին 'ի ծով· կէս ա̄ այլոց՝ մինչև էր մեռեալ 'ի ծով ըն-կեցին: Ընդ սոսա դասեն ոմանք և զՄենոն վկայ, զորոյ ծակեցին կա-պաշուք զականջունս, և կախեալ գլխի-վայր՝ տանջեցին մինչև 'ի մահ: Հ· տպր· 4: Յ· տպր· 2: Լ· տպր· 8·

Ահօրբ· սա Ենողեմե:

Ռուփոս՝ (ըստ այլոց Ռուփէսոս,) էր բժիշկ ճարտար 'ի տիւան քաղաքէ Կապադովկիոյ առ Դիոկղետիանո-սիւ· և ըմբռնեալ վասն քրիստոնէական հա-ւատոց 'ի Մաքսիմիանոս կէս 'ի Մաք-սիմոս դատաւորէ՝ զկուռսն անար-գեաց, և զՔրիստոս Աստուած դաւանեաց, վասն հարին զնա դալար բրօք, մինչև առո-րիւ ամենայն մարմնոյն, և երևել աղեացն: Եւ յետ բանտարկութեան՝ տեսեալ զհա-ստատութիւն նորա 'ի հաւատս՝ հարին բևեռս յոտս նորա, և կապեալ ընդ ձի ամեհի՝ վարեցին ընդ քարինս և ընդ թուփս, մինչև աւանդեաց զոգին· և զմարմինն 'ի գետ ընկեցին· այլ սքանչելեօք հանեալ արտաքս, և թա-

ղեցաւ 'ի լերին։ Հ. յուլ. 12։ Յ.Կ. նոյ. 9։

Ասափ մարգարէ և Երգիչ՝ էր որդի բարաքեայ՝ իշխան ղևտացւոց. զոր կարգեաց դաւիթ գլուխ սաղմոսերգուաց յանդիման խորանին և տապանակին 'ի սբն սիոն։ Են՝ և որք զսաղմոս ինչ, յորոց 'ի վերնագրի կայ անուն ասափայ, համարին յօրինեալ 'ի նմին ասափայ։ Յիշատակ սորա գտանի ուրոյն 'ի ձեռագիր յայսմաւուրս մեր ևեթ փետր. 3։

Ասկղաս (ճծ հյ. և լռ), կմ ասկղաճ (ճյն՞.) էր 'ի Թեբայիդ գաւառէ եգիպտոսի, մատնեալ վս 'ի քս հաւատոց 'ի ձեռս արրիանոսի դատաւորի. որ ետ կախել զվկայն, և տանջեալ գանիւք և քերանօք՝ եարկ կիսամահ 'ի բանտ։ Եւ 'ի նաւել դատաւորին յայն աւուրս է գետն՝ աղօթեաց սբն, զի ոչ հասցէ 'ի ցամաք՝ մինչև գրով տացէ վկայութիւն Ճշմարտութե։ Յայնժամ արգելան գնացք դատաւորին 'ի ջուրս. և գիտացեալ զզօրութիւն քսի՝ գրեաց առ սբն, թէ Ճշմարտապէս մեծ է ածն քրիստոնէից, և ոչ գոյ այլ ած՝ բաց 'ի նմէ։ Զայս արտօրեալ՝ յաջողութբ ել 'ի ցամաք. բայց համարելով զսբն կա-

կախարդ կարօղ չրոց, եւ այրել զկողս նր. եւ այսպէս կապեալ վէմ մի մեծ յոտս նր՝ ընկէց 'ի գետն. եւ այնպէս կատարեցաւ վկայն քի. իսկ մարմին նր գտաւ 'ի ցամաքի, եւ թաղեցաւ 'ի հաւատացելոց: Հ. Յ. հայ. 20: Լ. յնէ. 23:

Սոփիոս էր եղս գիւղականոյ մակեդոնացւոց առ տրայիանոսիւ, լուսաւոր վարդապետ ճշմարտութե. զոր կալեալ ագրիկողայոսի դատաւորի՝ եւ հաստատուն գտեալ 'ի հաւատս, էարկ 'ի բանտ. եւ այսպ գան հարեալ կապարեայ գնտովք, եւ օծանել մեղու եւ կախել զփայտէ 'ի վր պարսպին 'ի սօթածամու. եւ մեղուք եւ պիծակք կրծեցին զամ մարմին սրբյն, այլ նա գոհանայր զայ. եւ այնպիսի փառաւոր վկայութբ աւանդեաց զոգին: Իսկ քահանայք նորա առին զմարմինն գաղտ, եւ թաղեցին պատուով:

Յայնմ ժամանակի վն հալածանաց փախուցեալ էին յիտալիոյ 'ի գիւղակիոն ոմանք 'ի հաւատացելոց՝ Պէրէգրինոս, Լուկիանոս, Պոմպէոս, Իսիւքիոս, Պապիոս, Սատուռնինոս եւ Գերմանոս. որոց տեսեալ զքաջ նահատակուն սրբյն Սոփիոսի եղսի՝ խոստովանեցան յայտնապէս զքրիստոնէու_

Թի իւրեանց. վայ և հրամանաւ տը-
րիկողայսի յետ չարաչար գանից
ծովահեղձոյց եղեն. զորոց զմարմինս
ստ ափն ծովու ծածկեալ՝ յետ ինն
ամսոց յայտնութ՟ նոյն սրբոյ եհան ա-
ղեքսանդրոս եպսն, և ամփոփեաց
պատուով. յետոյ չինեցաւ 'ի վր՟ նց
մատուռն : Հ. փղ. յունիս. 3. և յուլ.
6 : Յնւ. յուլ. 11 : Յ. յուլ. 6. և 7 :
Լ. յուլ. 7 :

Սոփոմ անջնոջէ. տես 'ի կարգի տօ-
նելեաց Աստուածանք Երկ :

Սպիրիդոնէս՝ (Թ աւուրց Դեկտեմբերի,)
էր որդի պրոբոսի կայսեր՝ և ժա-
ռանգ Թագաւորութե՟ հռովմայեցւոց,
վայ յամանց կոչի արքայ հռովմայ. սա
եղև քրիստոնեայ հանդերձ եղբարբ
կին հօրեղբարբ իւրով դոմետիոսիւ,
որ կարգեցաւ եպս բիւզանդիոյ. իսկ
և յաջորդք նր պրոբոս և մետրոփա-
նէս ասին լինել որդիք սորին տոր-
ներակէսի, կին դոմետիոսի : Իբր եղև
յաւուրս հալածանաց ըմկեանոսի
կայսեր՝ եկն տորներակէս 'ի նիկոմի-
դիա, և խրատեաց զնա յետս կալ 'ի
կոտորելոյ զքաջ զօրականս քնի. զի
'ի պակասիլ առէ քրիստոնեայ զօ-
րացդ՝ զօրանան Թշնամիք Թագաւո-
րութեդ : Յայնժամ հարցեալ և խնա-
ցեալ

ցեալ լիկինիանոսի՝ թէ և նա քրիստո-
նեայ է, հնարէր ողոքանօք և սպառ-
նալեօք դարձուցանել զնա 'ի պաշ-
տօն կռոց. և իբրև ոչ կարաց, հրա-
մայեաց հատանել զգլուխ երանել-
ւոյն։ Իսկ գոմէոփոս կին գոմէոփա-
նոս եպ̃ս բիւզանդիոյ գողացաւ զմար-
մին սր̃յն, և տարեալ ամփոփեաց
յարկիւրոպօլիս՝ ուր էին նշխարք
սր̃յն ադրիանոսի և կնոջ նր̃ անա-
տոլայ, և այլոց վկայից՝ ը̃. սր̃յն եւս-
տաքէոսի, որ համարի առաքեալ բիւ-
զանդիոյ ։ Հ. օգոս. 30 ։ Յ. Լ. օգ. 26 ։

ԱՐԴԱԼԻՈՆ կմ̃ ԱՐԴԱՂԻՈՆ կատակողն՝ էր
առ մաքսիմիանոսիւ միմոս ծաղրա-
ծու 'ի խրախճանս թագաւորի և մե-
ծամեծաց նր̃. և յաւուր միում ձևա-
ցոյց առաջի նց̃ 'ի թէատրոնի զնա-
հատակութիւն մարտիրոսաց իբրև ը̃
խաղս. և կացուցել զոմն իբրև դա-
տաւոր՝ ինքն ձևացաւ մարտիրոս։
Այլ տր̃ փոխեաց զմիտս նր̃ 'ի կա-
տականաց 'ի ճշմարտութիւն. քանզի
սկսեալ ը̃նդ խաղս դաւանիլ զինքն
քրիստոնեայ՝ այպս դարձաւ և ասէ
առ ատենանն. գիտասջիք ամ̃ք՝ զի
ես ճշմարիտ քրիստոնեայ եմ. այսու-
հետև ոչ այպանօք և ոչ ը̃ խաղս խօ-
սիմ ը̃ ձեզ, զի շնորհքն ք̃սի ծագեաց
'ի սրտի իմում. այսուհետև սատուգա-

պէս անարգեմ և Թքանեմ 'ի կուռս ձեր . և սկսաւ անհնարին Թշնամանս ձգել 'ի դէմ հեթանոսաց մի առ մի . Ը որ բարկացեալ կռապաշտից՝ ար_ կին զնա 'ի բորբոքեալ հուր . և այն_ պէս կատարեցաւ 'ի ք͞ս 'ի մահ վկ_ բաւորելով զբեղլար : Հ. ապր. 16 : Յ. ապր. 17 : Լ. ապր. 14 :

Սուրբադոն կին արշալոյն՝ աղախին էր ակրոսիւղոսի առն կռապաշտի , որ էր նախապատուին 'ի քաղաքին որիմի_ սոյ փախուգացելոյ առ աբրիանոս կայ_ սերաւ . և յաւուր ծննդեան տէր_ տիւղոսի կին որդւոյ նր՝ յորում սո՛ն մեծ առնէին 'ի մէհենին կռոց , ոչ կա_ մեցաւ արկանել գնալ անդր և հա_ ղորդ լինել նց , զի քրիստոնեայ էր . վ͞ս այ տանջեաց զնա տր͞ն իւր գանիւք և բանտիւ և սովու , և այսպէս մաշ_ նեալ 'ի 'ի ձեռս դատաւորին , որ եա կախել զնա և քերել . և տեսեալ ժողովրդեան զհամբերութի երանելին կնոջն՝ եստուն արձակել զնա . և նա եկեալ գնաց 'ի մօտակայ լեառն : իսկ 'ի կամիլ զօրականաց դարձուցանել զնա յետս , դիմեաց սրբուհին աղօ_ թիւք առ ա͞ծ . յայնժամ պատառե_ ցաւ վէմն , և ընկալաւ զնա 'ի ներքս լինելով գերեզման նմ . եկին քարա_ հատք հրամանաւ դատաւորին՝ խոր_

տա

տնկել զվէմն , և հանել զնա ․ և 'ի լինել որոտմանց և կայծականց՝ բազումք սատակեցան յանհաւատից , և այլ ևս բազումք դարձան 'ի հաւատս ։
Հ․ սեպ․ 19 ։ Յ․ սեպ․ 18 ։ Լ․ սեպ․ 17 ։

Տրիփիլլէս կամ Տրիփոփիլլէս կիպրացի՝ էր Լեւկոնայ աւագ եկեղեցւոյն դամաս քաղաքին կիպրոսի ․ սա վն հալածանաց մաքսիմիանոսի թաքուցեալ էր յայրս ․ և ընկալեալ յայտնութի 'ի տնէ իջանել 'ի մայրաքաղաքն , և մարտիրոսանալ , եկն 'ի տաճար սբյն բառնաբայ՝ որ յԼեդրոս , և պատմեաց Դեմետրիանոսի սարկաւագի , և Աթանասի դպրի զտեսիլն ․ և էջ է նո 'ի սաղամինա , և յանդիման լեալ սաբինոսի դատաւորին՝ խոստովանեցաւ զհաւատս քի ․ վնյ յետ սաստիկ գանից հատին զգլուխ սբյն ։ Արդա քննեաց դատաւորն և զդեմետրիանոս և զաթանասիոս ․ և փորձեալ զնս խիստ ստանջանօք կմ հրով , իբրև ետես՝ զի պահեցան կենդանի , ետ զլխատել և զնս ․ իսկ քրիստոնեայք թաղեցին զերեսին սբս 'ի միում տապանի ։
Հ․ յունիս ․ 27 ։ Յ․ յունիս ․ 23 ։

Տրոփիման կամ Տրոփիմոսէ՝ էր ծերունի քահանայ եկեղեցւոյն Լաւոդիկեց-

ւոյ առ դիոկղետիանոսիւ · սա գնաց ը̅ մխիթանոսի եպ̃սի, և խոր_տակեաց զնմ̃ կուսս մեհենին · զոր խմացեալ կոմսի տեղւոյն՝ դիմեաց յեկեղեցի ունիլ զնա̃ · այլ 'ի Ճանա_պարհի յանկարծակի ըմբռնեալ 'ի խիստ ցաւոց՝ յղեաց առ եպ̃սն աղա_չելով, զի աղօթս արասցէ վս̃ իւր, խոստանալով չառնել ինչ չար, և այնպէս բժշկեցաւ ։ Իբրև 'ի վերայ էանց ամ մի, գնաց կոմսն 'ի կեսա_րիա, և հանդիպեալ արտեմանայ քա_հանայի՝ կալաւ զնա և էարկ 'ի բանտ · և դատեալ յատենի՝ ստիպէր զո_հել կռոցն · իսկ ո̅ք քահանայն մեր_ժեաց զնա, և աղօթիւք խորտակեաց զբագին ասկղեպիոսի, և հալածեաց զեօթն վիշապս բռնեալս 'ի մեհենի նր̅ · մինչև հաւատալ բիւրաւորսի քրմի 'ի ք̅ս ։ Յայնժամ հրամանեաւ կախն, և կտրատեցին պատառ պատառ 'ի մարմնոյ արտեմանայ, և արկին 'ի հուր, և. զնա հանին 'ի կաթսայ ե_ռացեալ · յորմէ ապրեցաւ սքանչե_լեօք · և յետ բազում և մեծամեծ գործոց՝ խաղաղութ̅ աւանդեաց զհո_գին 'ի ձեռս ա̅յ ։ Հ. ապր. 11 ։ Յ. ապր. 12. Լ. հոկ. 8 ։

Սուրբ նոր վկայն բաղխշեցի 'ի ման_կութե եղև քանկակար արուեստիւ 'ի

սա_

սալամաստ քաղաքի առ. ոտս պարս_
կի ուրուՄն. յորմէ 'ի կարծիս եղեն
ոմանք յայլազգեաց՝ թէ յայլազգուե̃
դարձեալ իցէ մանուկն. վ̃յ յետ ան_
ցանելոյ իբր Է ամաց՝ տեսեալ զնա
'ի քաղէշ այր ոմն պարսիկ, սնդէր՝
թէ դու այլազգի էիր 'ի սալամաստ.
իսկ առագ ես պատասխանի. ես
քրիստոնեայ էի՛ և եմ՝ և եղէց, ծա_
ռայ ք̃ի մ̃յն իմոյ օրհնելոյն 'ի բար_
ձունս: Յայնժամ պարսիկն ձգեաց
զնա բազմութ̃ե համախոհից իւրոց
յատեան ամիրային՝ որ կոչիւր ամիր
շարափ. և ն̃ր ոչ դտեալ պատճառս՝
կամէր արձակել. այլ 'ի հաճել ըղ_
միտս ամբոխին՝ յղեաց առ դատա_
ւորն, որ ասի ղատի. յորմէ հարցե̃լ
վկային՝ համարձակ դաւանեցաւ զք̃ս
ա̃ծ, և զինքն ծառայ ն̃ր. և էր ինքն
բոլորովին լցեալ հոգւով ս̃բվ. և
տեսիլ ն̃ր լուսաւորեալ և պայծա_
ռացեալ իբրև զհրեշտակի. վ̃յ ա_
ռաւել ևս կրճտէին թշնամիք զա_
տամունս 'ի վ̃ր ն̃ր. մինչև զեղեալ
բազմութե̃ 'ի վ̃ր վկային՝ հարին զգլ_
լուխ ն̃ր՝ կէսք փայտակոճիւ, և այլք
սրով և քարամբ. և այնպէս կատա_
րեցաւ յամին 1390. ա̃լթ. 'ի դ̃շբի է̃
շաբաթուն աղուհացից: Հ. ճէպր. 23.

Ն.-էր. տես Եղիսաբէթ:

# Բ.

Բաքոս աբէղայ (որ 'ի յունաց կոչի՝ նոր կամ կրտսեր բակքոս) էր յաւուրս թ̃գրութեն կոստանդեայ և Երինեայ, եհմացի կին պաղեստինացի. որոյ հայրն դարձեալ էր յայլազգութի, և 'ի նոյն կրթեալ զեօթանեսին որդիս իւր. բայց յետ մեռանելոյ նր՝ մայրն մանկանց, որ էր քրիստոնեայ, ուսոյց նց զքրիստոնէութի. յորոց մին կոչեցեալ դահակ՝ կամ ը̃ ամանց դեհլառ, չոգաւ 'ի վանս սբ̃յն սաբայի, և միրոնեալ կրօնաւորեցաւ և անուանեցաւ բագոս՝ 'ի հասակի ժ̃ը ամաց: Իսկ յետ կալոյ նր̃ անդ առ ժամանակ մի կատարեալ առաքինութ̃՝ զանգիտեալ հօր վանաց, զի մի յայտնի լիցի այլազգեաց, արձակեաց զնա յիւրմէ. և նա եկեալ 'ի տուն իւր՝ միրոնեաց զհնգեսին եղբարս իւր. իսկ վեցերորդն՝ որ մնայ յայլազգութեն, մատնեաց զբագոս. վ̃ն կալան զնա այլազգիք, և տարան գանիւք և Թշնամանօք առ ամիրայն. որ եւ ապտակել զծնօտ նր̃. և նա ասէ. ալէլուիա, ալէլուիա, փառք քեզ ա̃ծ. և զոր ինչ ասէր ամիրայն, բագոս զնոյն օրհնութեն երկրորդէր. մինչև

յետ

յետ բզմ խոշտանգանաց և գանից հատոյն զգլուխ երանելւոյն. իսկ քրիստոնէայք հաւաքեցին զմարմին, և առեալ զմարմին վկային՝ եդին հանդէպ սեղն սրբոյ և Տր փրկչի վանացն և ննջման Ածածնին յարևմտից կողմէ: Հ. դեկ. 19: Յ. դեկ. 17:

ԲԱՍՍԱ ԿԱՄ ԲԱՍՍՈՅ. տես Վասա:

ԲԱՍԻԼԻՍԱ ԿԱՄ ԲԱՍԻԼԻՍՈՍ ԱՆԿԻՒՐԱՑԻ. տես 'ի կարգս տօնելեաց՝ Բասիլիսկոս քահանայ:

ԲԱՐՍԱԲԱՍ ԿԱՄ ԲԱՐՍԻԲԱՍ արշիմանդրիտ՝ էր յԵգէն պարսից 'ի բնակութեան քաղաքէ՝ յերևելի տանէ. որ զկնի մահու ծնողացն՝ բաշխեաց աղքատաց զինչս իւր, և եղև աբեղայ, և այլս հայր վանաց: Զսա կալան հանդերձ եօթն աշակերտօք, և տարան առ շապուհ արքայ. և յոչ հաւանիլ նց պաշտել զարեգակն և զհուր, արկին 'ի բանտ. և յետ չորից ամաց տարան 'ի գլխատել. և կարգեցին դահիճ զոմն ուրացօղ՝ նիրսան մարայաս անուն: Տեսեալ զնա Տր հայրն բարսաբաս՝ զի այլադաւանեալ էր յահէն, սկսաւ արտասուօք յիշեցուցանել նմ զահեղ դատաստանն քի. իսկ Թշուառականն այն ոչ եկն 'ի զղջումն, այլ դ-

դա-

զալով եհար չորիցս զպատրաստանոց սոյն բաշխմանի , նոյնպէս և զեօթանց աբեղայից . և այնոքիկ կատարեցան նք 'ի քն յամի տն 375 . և պսակեցան փառօք . իսկ Ներսէսն անկաւ յայլ եւս չարիս , և սրամահ կորեաւ ։ Հ. տպր. 4 ։ Յ. տպր. 9 ։ Աճառ. տր. Եռագէտ ։

Բաղդ կին թագաւ Ճգնաւոր' էր ազգաւ պարսիկ 'ի գեղջէն պերգամայ , զաւակ քրիստոնէից' սնեալ 'ի բարեպաշտութն . որ վն քնի թողեալ զն և զընտանիս իւր' գնաց 'ի տեղին կոչեցեալ բիգոդադոն , ուր էր վանք Ճգնազգեաց կրօնաւորաց . և եղեալ աբեղայ' եկաց խստակրօն վարուք զամս Ը. բայց թեթև համարէր զամ Ճգնութն , և տենչայր մարտիրոսութե . և տն յաջողեաց նմ . զի 'ի լինել հալածանաց (որոց ժամանակն չէ յայտ) , և 'ի մեկնիլ հօրն վանից նմ աբեղայիւք 'ի տեղի անքոյթ , բատ կամակար մտօք մնաց 'ի վանս միայնակ , և ըմբռնեալ ածաւ առ յուղիտ քաղաքապետն . և յոչ առնուլ յանձն զերկրպագուն արեգական և հրոյ , տասն արք քարշեցին զերկոսին ձեռս բատոյ' հինգ յաջմէ և հինգ 'ի ձախմէ , մինչև փրթուցին յանձնէն զերկոսին բազուկսն թևօքն . և արկեալ յորսայս' զայլ քատմնելի տանջանս ետուն .

տուն. և 'ի վախճանի հատին զգլուխն: Եւ քահանայ մի դանխել անուն յափշտակեաց զմարմին սրբոյն, և տարաւ 'ի մծբին. և տ̃ր աբրահամ եպ̃ս քաղաքին եդ զնա պատուով 'ի տապանի. ոմանք համարին՝ թէ անդ 'ի մծբին իցէ նահատակեալ: Հ. ապր. 29: Յ. հոյ. 1:

Ռոբէաղէն՝ էր եպ̃սապետ պարսից 'ի սղակ և 'ի տիպրոն, քեռորդի և յաջորդ սրբոյն շմաւոնի պարսից եպ̃սի. և եղև զնմանէ ամբաստանութիւն առ շապուհ արքայ հալածիչ՝ թէ արհամարհէ զհրաման արքային, չկամելով պաշտել զարեգակն և զհուր, այլ և խափանելով զայլս ևս: Կոչեաց զնա շապուհ առաջի իւր, և խոստացանէր նմ ինչս բազումս՝ եթէ դարձցի 'ի դենս պարսից. և յանարգել սրբոյն զմեծութիւն՝ ետ հրաման մերկացուցանել զնա, և տանջել չարաչար. և ապա բանտարգել արար զնա կապանօք և սաստիկ սովու ամիս մետասան, և ոչինչ օգտեալ՝ ետ գլխատել համդերձ ժ̃գ աշակերտօք կամ ընկերօք, յամի տ̃ն 346: Հ. յուն. 10: Աշխար. առ. Եւոդիոսի:

Բադդիշա կմ Բարդիշա՝ էր եպ̃ս պարսից, որ ըմբռնեցաւ 'ի նոյն հալածանս

ծանս Շապհոյ, որ և սափիւռոս կո_
չի. և դաւանեալ դքն յատենի ար_
քային՝ հարաւ յերկար փշալից բրօք.
և վէրք նր շփեցան խոշոր խորդով.
յետոյ եդին զոտս նորա 'ի մամուլս
հիւսանց, և խորտակեցին. ապա ե_
դին խունկ 'ի ձեռս նր, զի արկցէ 'ի
հուր՝ զոր պաշտէին պարսիկք իբրև
ած, իսկ սբն ցրուեաց զխունկն յեր_
կիր. և բարկացեալ Թգրն՝ ետ քաշ_
քաշել զմատունս ձեռաց նր: Եւ տե_
սեալ զհամբերութի սբյ եպսին՝ երեք
երիտասարդք յարքունեաց, հաւա_
տացին 'ի քս. և բանտարկեալ՝ գաղտ
կատարեցան 'ի տր: Իսկ զեպսին ըղ_
լեղուն ընդ ծոծրակն հանին վն հա_
մարձակ յաղթահարելոյ զԹգրն. և
'ի գալ առ նա ձայնի 'ի վերուստ,
հաւատացին անձինք յհգ. և արեամբ
իւրեանց մկրտեցան. ապա գլխատե_
ցաւ և որ եպսն: Հ.հոկ. 19: Ծառընփ:

Սարգիսայ կմ Բաքքոսայ, Յովհան և Շմա_
ւոն՝ էին պարսիկ քրիստոնեայք. զորս
ըմբռնեալ հրապարակից 'ի հալածանս
Շապհոյ՝ ստիպէին յուրացութի. իսկ
նոքա քաջութբ խոստովան եղեն զքս:
Եւ յանել Շապհոյ յետ բազում քըն_
նութեց՝ Թէ երդնում 'ի գիս չարչա_
րել զձեզ խստագոյնս, ասեն վկայքն.
և մեք երդնումք 'ի Յիսուսի ածն
մեր՝

մեր՝ Միածնիւ, ք֊ լսել քեզ ։ Տանջեալ զնա թագաւորն բազմօք, եւ ծակել զպճղունս նր և կախել. դարձեալ բրածեծ արար զնա. Նեղեաց բանտարկութ֊ և անսուաղութ֊. և ՚ի հուր եւս էարկ. և ՚ի պահելն կենդանի՝ եւ հատանել զգլուխս նր ։ Հ. մյ. 16 ։ Յ. մյ. 15 ։

Բարուք մարգարէ՝ որդի Ներեայ, և ԱԲԴԵՄԵԼԵՔ կմ ԱԲԴԻՄԵԼԵՔ Ներքինին եթեովպացի՝ էին աշակերտք երեմիայ մարգարէի. որք օգնական եղեն նմ ՚ի բազում իրս, և չարչարակից ՚ի հալածանս նր. որոց գովութին յածաշնչի անդ է ։ Հ. մյ. 1 ։

Բարսամա՝ էր եպս եդեսիոյ առ արքայիւնովն, այր ո֊ք և առաքինի. որոյ տեսեալ զոճն հեթանոսաց ՚ի քաղաքի անդ ՚ի պատիւ պղնձ կռոց, ըն ծայլին նախանձու կշտամբեաց զքրմապետն սարբիլոս. մինչև դարձուցանել զնա և զքոյր նր ՚ի հաւատս քի. ոմ և նոքա եւ զայլս յոլովս դարձուցին. զոր իմացեալ լուսիոյ դատաւորին՝ նահատակեաց բազմահնար տանջանօք զսարբիլոս՝ որ կոչեցաւ Թէոթոյէլ, և զքոյր նր՝ որ կոչէր Բէբէա ։ Նոյա կալաւ և զնր եպսն բարսամա. և քննեալ զհա֊ տա֊

տատութեն հաւատոց նր՝ ետ քերել երկաթի եղնգամբք. և մինչդեռ կա-մէր այլևս տանջանս 'ի վր ածել, էառ հրովարտակ 'ի կայսերէ՝ յետս կալ 'ի չարչարելոյ զքրիստոնեայս. զի ծանեայ ասէ՝ թէ նոքա ոչինչ վնաս առնեն թագաւորութե մերում. և այս-պէս ազատեցաւ խոստովանող հայ-րապետն բարսեղ. և կեցեալ այլ ևս ժամանակս ինչ՝ ծաղկեցոյց զեկեղե-ցի իւր ածպաշտութբ. և լի արդեամբք հանգեաւ 'ի քս: Զսա երևի թէ նախ-նիք մեր անցուցեալ էին և 'ի կարգ-տօնացուցի է արքիփոնի վկային. այլ յետոյ վրիպակաւ փոփոխեալ է յայլ անուն օտար: Հ. դէկ. 14: Յ. Լ. յն. 30:

ՍԲԱՐՇԱԲԱ էր եպիսկոպոս յԾլին պար-սից, կմ արքեպս գորդիոյ. որ ձեռ-նադրեաց զսրն մելի եպս. և յետ կատարման նր նաև ինքն նահատա-կեցաւ: Հ. նոյ. 12:

ՍԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԱԲԲԱՅ՝ հրեշտակակրօնն հայրն մեր, օրհնեալ անուամբ և ար-դեամբք, էր 'ի գաւառէն հռովմայ 'ի նորկիա քաղաքէ, ծնեալ յամի տն 480. յազնուականս և 'ի բարեպաշտ ծնողաց, և սնեալ ժուժկալ վարուք. սա յետ կալոյ սա ժամանակ մի 'ի հռովմ յուսումն՝ եթող զամ և զծնողս իւր

իւր 'ի դեռաբոյս հասակին, և առանձ-
նացաւ յանապատն ուռհայի, օգնա-
կան իւր գտեալ զմիայնակեաց ոմն
ռոմանոս անուն, որ սակաւ այց առ-
նէր նմ, և բերէր կերակուր ։ Անդ
դադարեալ 'ի խորափիտ այրի միում
սքանչելի ճգնութբ և ընտանութբ ընդ
այն՝ անծանօթ էր 'ի մարդկանէ զե-
րիս ամս. մինչև երեց մի ազդեալ 'ի
տնէ յաւուր զատկին՝ եբեր առ նա 'ի
խորտկաց իւրոց. և յայնմ օրէ գային
առ նա մարդիկ 'ի գտանել զհոգևոր
մխիթարութն ։ Երևեցաւ նմ երբեմն
դևն 'ի կերպարանս ագռաւու, և յա-
րոյց 'ի վերայ նր խորհուրդս աղտե-
ղիս. յայնժամ բենեդիկոս մերկա-
ցաւ և թաւալեցաւ 'ի մէջ տատաս-
կաց, մինչև խոցոտել զամ մարմինն
և արեամբ շաղախել. և այնուհետև
ազատ գտաւ 'ի չար խորհրդոց ։ Էր
յայնժամ իբր ամաց. և եկաց 'ի նոյն
ճգնութե նոյնչափ ևս ամս ։ Եկին առ
նա աբեղայք ոմանք, և հարկեցու-
ցին զնա լինել իւրեանց առաջնորդ.
այլ ոչ կարացեալ տանիլ խստակրօ-
նութե նր և անաչառ յանդիմանութեն՝
մատուցին նմ դեղ մահու. և 'ի խա-
չակնքել սրբյն նախ քան զըմպելն՝ հեր-
ձաւ ամանն, և հեղաւ մահադեղն ։
Իբրև դարձաւ անդրէն յայրն իւր,
բազումք ընթացան առ նա՝ աշակեր-
տիլ

ոտիլ նմ. որով՚ի սուղ ժամս կանգ_
նեաց երկոտասան վանս. և հիմնար_
կեաց յարևմուտս գիւղն կրօնաւո_
րուն ամ՛բարեկարգութ., սահմանել
լուսաւոր կանոնս. որպէս և զայլ բա_
զում մեծամեծ գործս և սքանչելիս.
մինչև յարուցանել և զմեռեալ, որք
տեսցին յընդարձակ վարս նր. և այնքան
լի արդեամբք հանգեաւ ՚ի տր՝ ՚ի կա_
սինեան լեառն, յամի 543, կմ ըս ո_
մանց 536. և յաւուր վախճանի նորա
տեսին երկու միաբանակեացք նր ՚ի
զանազան տեղիս տեսիլ, զի յերկրէ
յերկինս կազմեալ էր թափոր լու_
սազգեաց արանց ոսկեհուռն հան_
դերձիւք և լուցեալ լապտերօք. և
եղև ձայն՝ որ ասէր. այս է՝ ճանա_
պարհն բենեդիկտոսի ծառային այ՝ որ
յերկինս ընթանայ ։ Հ. Տարեգ. 22 ։ Յ.
Լ. Տարեգ. 21 ։

Ընդ սմին բենեդիկտոսի յիշատակի
և սրբակրօն քոյր նր Սխոլաստիկա կու_
սան ճգնաւոր, ծաղկեալ առաքինութ.
առ որ միանգամ՚ի տարւոջ գայր եղ_
բայր նր, և պարապէր ՚ի հոգևոր
խօսակցութիս և ՚ի քննութի նբ գրոց
ընդ նմ։ Եւ ՚ի միում նոցանէ աղաչէր
սխոլաստիկա զեղբայր իւր արտա_
սուօք՝ մնալ զգիշերն զայն, և խօսել
ընդ նմ զերկնային ուրախութեց։ Ասէ
ցն բենեդիկտոս. արտաքոյ խցին
իմոյ

խմոյ ոչ կարեմ օթել քոյր իմ: Եւ կոյսն աղաչեաց զնա • և պարզութիւն օդոյն փոխեցաւ 'ի կարկուտ և 'ի յորդ-անձրև • որով արգելաւ յերթալոյ նր. հայրն, և ասէ • զինչ է այս՝ զոր արարեր քոյր իմ: Ասէ սրբուհին • աղաչեցի զքեզ և ոչ լուար եղբայրդ իմ • աղաչեցի զնա, և լուաւ ինձ փութապէս: Հ. մրտ. 22: Լ. փետ. 10:

ԲԻԱՆՈՐՈՍ կամ ԲԻԱՆՈՐ՝ էր 'ի գաւառռէն պիսիդոնի կամ պիսիդեայ • զոր կալեալ կռապաշտից՝ տարան կապանօք յիսաւրիա առ սեւերիանոս դատաւոր • և երրեք հաստատութեն գրաււկայն 'ի հաւատս, կորատեցին ըզմարմին նր 'ի կախաղանի, և հրացեշամփրօք այրեցին զկէրսն • հանին զատամունսն, և հատին զականջս: Զարմացեալ ը համբերութե սրբոյն ՍԻՂՈՒԱՆՈՍ կամ ՍԻՂԲԱՆՈՍ զօրականն, հաւատաց 'ի քս • վսյ դատաւորն նախ զնա նահատակեաց՝ տալով հատանել զլեզու նր, և ապա զգլուխն: Յետոյ ետ քերթել զճակատ սրբոյն բիանորոսի, և հանել զակն աջոյ, և ծակել զպճղունս ոտից • և ապա գլխատեաց և զնա: Հ. յուն. 3: Յ. յուն. 9: Լ. յուն. 10:

Բ[illegible] կամ [illegible] (ը Լա՛՛ [illegible] •

ֆր

թ̃ յաղթօղ) վկայն՝ էր խոտլացի՝ յաւուրս անտոնինոսի կայսեր յերկրորդ դարու․ և դատեալ 'ի սեբաստիանոսէ դքսէ վս̃ քրիստոնէութե՝ յետ խոստակման տանջանաց՝ արկաւ 'ի հուր․ և պահեցաւ կենդանի զերիս աւուրս 'ի մէջ կայծախառն մխրոյ․ արբուցին նմ̃ և մահադեղ, այլ ոչ վնասեցաւ․ վսյ դեղատուն հաւատաց 'ի քս̃․ ապա արկին ձէթ եռացեալ ըղ մարմնով սրբոյն, և զայլ դժնդակ տանջանս եասուն, և 'ի վախճանի գըլխատեցին ։

Զարխական նահատակութիւն սբ̃ վկայիս տեսեալ կնոջ միոյ այրւոյ՝ որում անուն էր Ստեփանէ կմ̃ ստեփանիա (որ է ը̃ լա՛՛ կօրօ՛նա, թ̃ պսակ), ձայն եբարձ և ասէ․ երանի՛ է քեզ բիկտոր, և երանելի են գործակիցքն քո․ ահա տեսանեմ երկու պսակս իջեալ յերկնից, մին մեծ՝ քեզ, և միւսն փոքր՝ ինձ․ և նոյնժամայն մատուցեալ առ դատաւորն՝ խոստովանեցաւ զքս̃ աձ̃․ Իսկ դատաւորն ետ քաշ արանց խոնարհեցուցանել երկու ծառս․ յորս կապեցին զսբ̃ կինն՝ զձեռաց և զոտից յերկուց կողմանց․ և 'ի թողուլ յանկարծակի զծառսն՝ հերձաւ սրբուհին յերկուս, և կատարեցաւ 'ի քս̃ ։ Հ․ նոյ․ 9 ։ Յ․ նոյ․ 11 ։ Լ․ նոյ․ 14 ։

Գու-

## Գ.

ԳԱՂՋՆՈՍ ումն իմաստասէր վկայ՝ նահատակեցաւ գլխատմամբ 'ի կըռապաշտից, ա̅ յիշատակելոյ 'ի ձեռագիր յայսմաւուրս մեր. զոր ոչ կարացաք գտանել այլուր : Հ. յէտ. մայ. 3 :

ԳԵՐԱՍԻՄՈՍ. տես Երասիմոս :

ԳԵՐԵԱԼՔ 'Ի ՊԱՐՍԻՑ՝ կամ ՎԿԱՅՔ ԳԵՐԻՔ ասին, զորս Շապուհ արքայ պարսից
վարեաց 'ի գերութի̃ 'ի ա̅րութէ̃ հռոմոց՝ ոգիս ինն հազար, յամի տ̅ն 362.
յորս կային և արք երևելիք, և եկեղեցականք իմաստունք. և 'ի Ճանապարհի նահատակեաց 'ի նոցէ անձինս
երկերիւր և եօթանասուն և եօթն.
և զայլս դարձոյց 'ի դենս պարսից :
իսկ մի ումն 'ի նահատակաց՝ որում
անուն էր աբդիշոյ կամ էպէդյեսու
սարկաւագ, թէպէտ և անկեալ էր
արով, այլ ոչ էր վիրաւորեալ 'ի մահ.
վ̅յ յետ չուելոյ բանակին՝ յարեաւ և
եմուտ 'ի գիւղ մի. ուր գտեալ ըդդարման բժշկութե̃ 'ի ձեռն քահանայի
միոյ՝ եկն հանդերձ նովաւ, և ամփոփեաց զմարմինս վկայիցն անկելոց.
և ինքն ուսանձնացաւ անդէն յայրի
միում,

միում, և եղև կատարեալ ճգնաւոր նշանագործ. և գործոց զբաղումս յանհաւատից, մի որոյ սպան զնա ոմն 'ի կռապաշտից. և եկեալ քահանայն՝ որ առողջացոյց զաբեղէն՝ թաղեաց զնա մարմին նր: Հ. ամս. 8: ՃՀոր. ատ Էոստեսոս: Յ. ամս. 9. և օգ. 4: Լ. ամս. 22. և օգ. 4:

Գերմանոս պատրիարգ յունաց՝ էր որդի յուստինիանոսի պատրկի. զոր առ նախանձու սպան որդին հերակլի, և զգերմանոս մանուկ ներքինացոյց, և կարգեաց Է գլերս եկեղեցւոյ. որոյ յառաջադէմ լեալ 'ի մբ վարս և յամենայնի գիտութ՝ ձեռնադրեցաւ եպս կիւզիկոյ. և ապա ընտրեցաւ պատրիարգ կոստանդնուպօլսոյ. և էր ինքն այր խոնարհ և խաղաղարար, հանճարեղ և մեծիմաստ. որ գրեաց բաղում ճառս. արար և շարականս և կցորդս. ունէր և զշնորհս նշանագործութե. Առ աւ թագաւորեաց լեոն կայսր իսաւրիացի պատկերամարտ. զոր բազմօք յանդիմանեաց սբն գերմանոս՝ հովիւ քաջ և վարդապետ ուղղափառութե. այլ տեսեալ թէ ոչինչ օգտի, եհան յանձնէ զեմիփորոնն, և եդեալ 'ի վր սբ սեղանոյ՝ առանձնացաւ 'ի տուն իւր. և լեալ աւելի Ջ զինն-

սուն անոյ՝ հանդերձ խայտառակութ՟ ՚ի
քն . և Թաղեցաւ ՚ի վանս՝ զոր ինքն
էր շինեալ յեպ̃սութե իւրում : Սա սա
եկն ստեփաննոս սիւնեցի յաւուրս
պատրիարգութե նր . և սէն գերմա-
նոս ՚ի ձեռն նր առաքեաց ՚ի հայս
զԹուղԹ մարքանական սերոյ և խա-
ղաղուԹ՝ զոր գրեալ քաղցր վարդա-
պետութ : Հ. Յ. Լ. ճաչ. 12 :

Վերջանայ տե՛ր ԺԵ Ղազարիոսի .

Վերջ ակնեցի , և Խաւրիկ Գահերէցն՝
էին քաջ իշխանք հայոց նախարարա-
զունք . զորս կալեալ բուղայ ոստիկա-
նի յետ կատարման երկրորդ առով-
մեանց յամի 853 . յէ՟ , բազմօք հնարե-
ցաւ դարձուցանել յայլադղութ . և
՚ի մերժել նց զբանս նր և ՚ի հաւատա-
ձակ դաւանելն զքն̃ ած , եւ գլխա-
տել զերանելիսն : Զքաջ նահատա-
կութն սոցա տեսեալ սրբոյն յայլազ-
գեաց՝ ապաշխարեաց , Թէ և ես քրիս-
տոնեայ եմ , վս̃յ հատին և զգլուխ
նր . և ծագեաց լոյս ՚ի վր̃ երեցունց
վկայիցն : Հ. փպ. պատմ. 21 :

Վերջ մնացականն կինեցի՝ էր ե-
րեւելի Ճգնաւոր՝ ժամանակակից սոցին
գերմանոսի , բնակեալ յոլոմպոս լե-
րին ՚ի մանկութէ մինչև ՚ի խոր ծե-

րուն աքանչելի վարուք. զոր ոմանք
երկրորդ անուոն անուանէին: Սա
լուեալ զչարութն պատկերամարտ կայ-
սերն լևոնի խաւարայցւոյ՝ էջ 'ի լեռ-
նէն, և համարձակ կշտամբեաց զմո-
լորութն նր. իսկ կայսրն էարկ զնա
'ի բանտ, և ստիպէր տալ ձեռագիր
ընդէմ յարգութե նց պատկերաց. և
իբրև ոչ կալաւ յանձին, ետ տանջել
զնա բազմօք, և այրել զգլուխ նր,
և հատանել զբերթն. և այնպէս ա-
նարգանօք աւաքեաց յաքսորս. ուր
գոհանալով զաՅ աւանդեաց զոգին
'ի հասակի զն ամաց: Հ. տպր. 10: Յ.

Լ. օգ. 24:

Պետրոս աւինկայ, որ կոյր, արծինչէոյ՝ էր
ճգնաւոր կատարեալ առ ժամանակօք
շնորհալւոյն, անեալ սրբութե 'ի վանս
'ի մանկութե միով մազեղինաւ, և
միանգամ միայն յաւուրն ճաշակելով
հաց և ջուր չափով. և էր խմաստուն
մտօք՝ փոխարկեալ զակն մարմնոյն 'ի
կրկին աչս հոգւոյ: Սա յետ աքան-
չելի քաղաքավարութե ուելի ք զամս
Հ, չոքեցաւ բազում անգամ և յուխ-
տատեղիս եԷմի և այլոց տեղեաց ա-
ռաջնորդութե գրիգորի միայնակեցի.
և իբրև կամէին երթալ 'ի հռովմ,
մոլորեալ 'ի ճանապարհէ՝ մատնեցան
'ի ձեռս աւազակաց յԾին ունկռաց,

որք

որք հարին զնա և թողին կիսամահ, և առաւել եւս զԳրիգոր. այլ 'ի դիմել երանելւոյն Գէորգեայ 'ի բարեխօսութին նըյն յովհաննու կարապետի՝ անսխալ երևեցաւ վանականի ումեմն 'ի մերձակայ տեղեաց, զոր յայամաւուրքն կարտինար ասէ լինել. և եկն տարաւ զնա սայլիւք 'ի վանս իւր, ուր մեռաւ Գրիգոր. այլ թախանձագին աղօթիւք Գէորգեայ աչխկայի դարձաւ 'ի կեանս. ապա գնացեալ 'ի հռովմ՝ կատարեցին զուխտ իւրեանց, և դարձան 'ի հայս. ուր յանի ջղքի բժշկեաց Գէորգ և զանբուժելի վէրս ձեռաց կնոջ միոյ. և հրաշալի առաքինութե իւրով զարմացոյց զամենեսին, մինչև փոխեցաւ յաստեաց յանանց կեանս։ Հ. ճայ. 4։

Գէորգ Վարդապետ՝ Տէրէի կոչեցեալ, այր քաղցրաբան և իմաստուն. եբ ծննդեամբ յանալիւր գեղջէ վասպուրականի, այլ կրօնաւորել 'ի սեան զամս ծ՝ սեանեցի կոչեցաւ. սա զնմ գիշերս կիրակամտից ստանակաց որք նուէ անցուցանէր. և զնոյն կարգ եմուծ 'ի գրադարկ վանս և յանապատն սոյ. և կատարեալ զկեանս իւր ծր և ածահաճոյ վարուք՝ փոխեցաւ առ տր 'ի հասակի Հ ամաց, յամի. 1113.

շկէ. և թաղեցաւ 'ի դրաղարկ: Հ.
պտ. յուլ. 30:

Գլիկերիէ կոյս՝ ( որ ը̃ այլոց Գլիկե-
րիա, ) էր հռովմայեցի՝ բնակեալ 'ի
տրապօլիս կ՚մ 'ի տրայիանուպօլիս՝
յամս անտոնինոսի կայսեր. և եղև՝
զի սաբինոս դատաւորն 'ի տանի կռոց
զոհ մատուցանէր, և զամենեսին 'ի
նոյն յորդորէր. յայնժամ Գլիկերեայ
գրեալ 'ի ճակատ իւր զանուանն քի̃ի և
զնշան սբ̃ խաչին՝ յայտնեաց առաջի
դատաւորին զհաւատս իւր. և ստի-
պեալ 'ի նմէ մտանել 'ի մեհեանն և
զոհել, աղօթիւք կործանեաց զբա-
գինն զիսալ. վո̃յ տանջեցին զնա քա-
րամբք և քերանօք, և արկին 'ի բանտ.
ուր կերակրիւր 'ի ձեռն հրեշտակի:
Յետոյ տարաւ դատաւորն ը̃ իւր
զաղախինն քի̃ի յարակլիա՝ որ և հե-
րակլիա թրակիոյ. և անդ ևս դատա-
կալ զնա վո̃ հաւատոյ՝ էարկ 'ի հուր.
զոր շիջոյց անձրև: Ապա քերթեցին
զմորթ գլխոյ նր̃, և կապանօք ար-
գելին 'ի բանտ. ուր յողջանալ նորա
սքանչելեօք, և 'ի լուծանիլ 'ի կապա-
նացն՝ բանտապանն կ՚մ դահճն լա-
ւոդիկոս հաւատաց 'ի քի̃, և կատա-
րեցաւ սրով. իսկ սրբուհին արկաւ
առաջի գազանաց. յորոց մին էխած
զնա, և այնպէս աւանդեաց զհոգին.
և

և դոմետիանոս եպս Թաղեաց զնա անդ յարակիլա : Հ. Մայ. 14: Յ. Լ. Մայ. 13 :

Պօղոսայ Վկայք՝ էին անձինք քսան և եօթն , և գլխաւորք նոցա՝ բաթոյի և հերկոս քահանայք , 'ի կայսերութե՟ մաղեսի և մաղենտիանոսի , և'ի հալածանս զինդուրիկոյ կի՟ յինքուրինոսի կուսապաշտ արքայի գոթացւոց . քանզի սա մտեալ զօրօք 'ի մայրին՝ ետ հատանել փայտ բազում , և բերել հրդեհել նովաւ զեկեղեցին՝ ուր կային քրիստոնեայք լի՟ , զորս չկարաց մեկնել 'ի հաւատոցն քո՟ի . և այնպէս կատարեցան երանելիքն օրհնելով զա՟ծ 'ի մէջ հրոյն : Եւ այր մի 'ի քրիստոնէից՝ որ գայր բերելով ը՟ խուր ընծայս յեկեղեցին , նա ևս ըմբռնեցաւ և արկաւ 'ի նոյն բոց բորբոքե՟լ , և այնպէս մարտիրոսացաւ ը՟ այլս . զորոց զնշխարս ժողովեաց այրի տիկինն այլոյ արքայի գոթաց՝ հաւատով քրիստոնեայ , և փախեաւ 'ի տ՟րուն յունաց . և մասն ինչ 'ի նշխարաց անտի բերաւ 'ի եկեղեցին 'ի ձեռն դսաեր նոյն Թագուհւոյն : Հ. Մրտ. 11: Յ. Մրտ. 26 :

Պոհարինեանք՝ էին չորս եղբարք սեբաստացիք 'ի ժե՟ դարու՝ որդիք դաւ_

վթի ուրումն իշխանի, որ հանդերձ
երեց որդւովն իւրև անուն՝ գերի
վարեցաւ, և անկաւ 'ի հաւատոց:
Իսկ չորեքին մնացեն որդիք նր՝ Գո-
հարինէ, Հռոփսիմէ, Ծամդէնէ, և փա-
նիոս՝ մնան 'ի ձեռս բարեպաշտ մօրն
իւրեանց. և 'ի չափ հասեալ՝ եղեն
արք զօրաւորք, և կարգեցան 'ի զին-
ուորութն ձեռամբ այլազգի իշխա-
նին աշխարհաց կմ աշխարհականաց: Եւ
նախանձեն այլազգի զինուորականաց
Ե գոհարինեանն՝ չարախօս եղեն զնցէ
առաջի ամիրային աշխարհականաց, թէ
որդիք այլազգւոյ գոլով՝ պաշտեն
զքրիստոնէութի. և 'ի կամիլ ամի-
րային դատել զնս՝ արև ուրացող
եղբայր նց՝ խափանեաց զիրսն, ցու-
ցանելով ստութե և զնս համախոհս
իւր. Ե որ դժկամակ եղեն յոյժ Գո-
հարինեանք, և յայնմհետէ առաւել
յայտնապէս պաշտէին զհաւատս քնի.
և մին 'ի նցէ՝ այն է Ռատինոս կմ
Ռատիոս գնացեն կրօնաւորեցաւ 'ի
վանս ինչ նշանի: Այսպ յետ ժամա-
նակաց ինչ կոչեն զնս ամիրային առ
ինքն՝ փորձեաց զի մի խոստմամբք
և սպառնալեօք. և գտեն զնս հաս-
տատուն 'ի քս՝ եւ տանջել բաղմօք,
և ապա գլխատել. զորոց զպատ-
ուական մարմինս առեն սեբաստաց-
ւոց՝ ամփոփեցին 'ի տեղի կատարման

նց՝

նչ՝ հուսկ 'ի Ճանապարհն քառակուսի, յամի Տրբ 1136. շձե: Հ. յուղ. 28:

Պողանդրոսիփ՝ (որ է յունաց Գուլինդոսի,) էր կին մոգպետի պարսից՝ յաւուրս խոսրովու արքայի 'ի Է դարու. և եղև նմ տեսանել յանուրջս, զի ծնօղք իւր կռապաշտք կային 'ի հուր խաւարային, և քրիստոնեայք 'ի լուսաւոր դրախտի. յոր կամէր և ինքն մտանել, այլ արգելաւ վս չունելոյ զմկրտութի: Եւ զարթուցեալ գնաց առ քրիստոնեայս, և ընկալեալ զնը հաւատս՝ մկրտեցաւ, և անուանեցաւ Մարիամ: Վսյ հրամանաւ խոսրովու արկաւ 'ի վիրապ անյուշ բերդի. ուր եկաց խնամօքն այ անվնաս յօձից ամս բազումս. և ուսեալ 'ի հրեշտակէ զազգմամ՝ օրհնէր զած: Յետոյ եհան զնա որմիզդ որդի խոսրովու յաւուրս մօրիկ կայսեր. և չարչարեաց ազգի ազգի տանջանօք. այլ յաղթ զերծաւ, և 'ի բաց արձակեցաւ. և սքանչելի սրբութբ փայլեալ, և շրջեալ յուխտատեղիս եէմի՝ հուսկ յետոյ հանգեաւ խաղաղութբ մօտ 'ի մծբին: Հ. յուղ. 22: Յ. յուղ. 12:

Պուճտալապ պարսիկ՝ (որ 'ի լատ. գրի ուսթաղան, և 'ի յն. Վոյթալապ, և է ասոր. Գուճդալապ,) էր ներքինի՝ դա-

դաստիարակ չարահոյ աշխարհի, և թա-
գաւորի նր. սա քրիստոնէից եղեալ
յաւուրն՝ առա մն ահի և սիրոյ թա-
գաւորին դարձաւ 'ի գէնս կրօնա-
ւորաց. և տեսեալ երբեմն զորն
շնաւոն հեզս պարարից՝ երկիրպագա-
նէր. և 'ի կամելն համբուրել զնա՝
դարձոյց սրն զերեսս իւր 'ի նմանէ.
յորմէ զամօթի հարեալ նր, և զմտաւ
ածեալ թէ որչափ ես ծանր է անկա-
նելն յերեսաց նոյ, սկսաւ լալով
ողբալ զմեղս ուրացութե իւրոյ. և
դարձաւ բոլորով սրտիւ առ նա:
Զոր խնայեաց չարահոյ՝ ջանացաւ որ-
սալ զնա անդրէն 'ի մոլորութի. և
տեսեալ զանխախտելն միտս նր՝ ետ
գլխատել. բայց յետ աղաչելոյ նր մե-
կային՝ առ 'ի բառնալոյ զգայթակ-
ղութե բազմաց, կարգաց նախ մանե-
տիկ արքունի, թէ գուժդապատ ոչ
մն այլ յանցանաց մեռանի, այլ միայն
մն հաւատոյն քոի: 'Ի նոյն աւուր
նահատակեցան և այլ բզմ վկայք 'ի
պարսս: Հ. ճրփ. 24: Յ. Նոյ. 20: Լ.
տղր. 21: Աշխար. առ Եւսեբ. և տանեմ:

Գուրգէնոր Մէֆ՝ հատեմս հայրապետ՝ էր
որդի յորդանէս պատրկի, այր զգօն
և գիտնաւոր, և կատարեալ առաքի-
նութ. որոյ մն կարգեցաւ մերակա-
ցու քաղաքին հռոմայ հրամանաւ
երկ-

երկրորդ յուստինիանի կայսեր · այլ յետ սակաւուց հրաժարեա՛լ կրօնաւորեցաւ 'ի վանս մի̃յն անդրէի, զոր շինեա՛լ էր 'ի հայրենի տան իւրում· իսկ պապն բենեդիկտոս առաջին՝ եառ զնա առ իւր, և ձեռնադրեաց սարկաւագ · և յաջորդ նորա պելագիդիոս երկրորդ՝ առաքեաց զգրիգոր 'ի կոստանդնուպօլիս · ուր 'ի գլուխ տարաւ նա զգո̃ծ իւրս կարևորս 'ի պէտս օգտի եկեղեցւոյ, կացեա՛լ անդ յաւուրս կայսերացն՝ տիբերիոսի և մօրկայ : Եւ 'ի դառնալ իւրում՝ անդրէն առանձնացաւ 'ի վանս · ուր երևեցաւ նմ̃ հրեշտակ ա̃յ 'ի կերպարանս աղքատի, և էառ 'ի նմանէ երիցս ողորմութիւն : Յետ այսորիկ յորժամ ընտրեցաւ հայրապետ հռովմայ յամի տ̃ն 590, կոչէր զերկոտասան աղքատս 'ի սեղան իւր · և յաւուր միում գտեա՛լ երեքտասան՝ ծանեաւ, զի էր հրեշտակն տ̃ն : Գրեաց մ̃ն գրիգոր զբազում Ճառս և մեկնութիւնս և թուղթս լի ա̃ծային իմաստութ̃ · և զարդարեաց զպաշտամունս եկեղեցւոյն հռովմայ, և արար բազում ինչ 'ի շինուլն եկեղեցւոյ · սա եղև և լուսաւորիչ ազգին անգղիացւոց՝ դարձուցանելով զնս̃ 'ի հեթանոսութէ̃ 'ի քրիստոնէութի՝ 'ի ձեռն աշակերտաց իւրոց · և լի արդեամբք հանգեաւ 'ի

նոր՝ յամի տն̃ 604։ Սա է մին 'ի չորից վարդապետաց եկեղեցւոյն հռովմայ․ որ և հաստատեաց զկրօն սքեմն բե_նեդիկտոսի աբբայի․ յորմէ կարգէ համարի և ինքն։

Ընդ սմա յիշատակի և Պետրոս Նախա_սարկաւագն իւր՝ այր լի հոգւով և գործակից նորա 'ի բազում իրս․ որ և արժանի եղև բազմ անգամ տեսանել զՍ̃բ Հոգին աղաւնակերպ նստեալ 'ի վր̃ շրթանց կմ̃ 'ի վերայ գլխոյ սրբոյն Գրիգորի 'ի շարադրել նորա զգիրս։ Եւ ընդ սմին պետրոսի խօսակցե_լով զհոգևոր իրաց գրեաց զգիրս արամախօսութեան իւրոյ նա ինքն Գրիգոր պապն։ Հ․ Մրտ․ 13։ Յ․ Լ Մրտ․ 12։

Գրիգորիոսեանք և Նեղոսեանք կոչին՝ մք և իմաստունն հայրապետք և վար_դապետք հայաստանեայց, սկսեալ 'ի Գրիգորէ վկայասիրէ, մինչ թէ 'ի պետրոսէ դետադարձէ մինչև 'ի Ներ_սէս լամբրոնացին։ Յորս Պետրոս կա_թուղիկոս հայոց՝ Գետադարձն կոչեցեալ, նշանաւոր է սքանչելեօքն՝ որ եղև 'ի կատարել նր̃ զՋրօրհնէս առաջի Վա_ըն կայսեր յունաց՝ յետս դարձմամբ գետոյ, յամի 1022․ Նշա․ տն̃ Ճառ_ձակ գրեալ կայ 'ի պատմութե հայոց․ նոր Թղթից և այլ գործս նր̃, յորս

սր̃

արժանի անմոռաց յիշատակի են շարականք նր̅ հոգելիցք :

Այլ առաւել քան զնա հռչակաւոր եւ արդիւնաւոր եղեւ սբ̅ն Գրիգոր Վկայասէր մեծն՝ որ յառաջն Վահրամ կոչիւր, որդի Գրիգորի Մագիստրոսի. եւ վս̅ մեծի սրբութե̅ եւ իմաստութե̅ իւրոյ ընտրեցաւ յաթոռ կաթողիկոսութե̅ յամի 1065. ՇԺԴ. եւ բազում իրօք նորոգեալ պայծառացոյց զեկեղեցի հայաստանեայց. թարգմանեաց եւ բազում Ճառս եւ վկայաբանութիւնս 'ի յունաց եւ յասորւոց 'ի մերս բարբառ ընտիր ոճով, եւ առանձինն սիրոյ իւրոյ առ ս̅բ մարտիրոսս՝ վկայասէր կոչեցաւ. եւ վս̅ առաւել փութոյն 'ի խնամարկութե̅ հօտի իւրոյ՝ հետեւեալ շրջէր եւ քարոզէր ը̅ս նմանութե̅ առաքելոցն : Գնաց եւ 'ի կոստանդնուպօլիս եւ 'ի Հռովմ, եւ անտի եկն յեգիպտոս, յո̅ր տեղիս թողեալ զանուն սրբութե̅ եւ իմաստութե̅ իւրոյ : Եւ յետ կարգելոյ զեղբօրորդի իւր յաթոռ հայրապետական յանի՝ եկաց այլ եւս բազում ամս յանխոնջ աշխատասիրութե̅ս. եւ լի աւուրբք 'եւ արդեամբք հանգեաւ 'ի տ̅ր յամի 1105. ՇԾԴ. եւ թաղեցաւ 'ի կարմիր վանս մերձ 'ի քեսուն :

Արդիւնաւոր գտաւ բազմօք եւ տ̅ր

ԲԱՐՍԵՂ յաջորդ նր, ՚ի խաղաղութե պաշ-
տելով զհօտ իւր ՚ի ժամանակս խռո-
վութե՝ որ յերեսաց արտաքնոց և ներք-
նոց. և շրջելով անձամբ յայցելութի
վանորէից, և ծաղկեցուցանելով ըղ-
վարդապետս հայոց ՚ի գործս յան-
կաւորս պաշտամանն իւրեանց, և ինքն
փոխեցաւ առ տր յամի 1113. շկբ.
կարգեալ աւուրք ինչ յառաջ քան
զմահ իւր յաթոռ կթղկութե զԳրի-
գոր կմ զԳրիգորիս պահլաւունի,
զորդի իշխանին ապիրատայ քեռորդ-
ւոյ վկայասիրին:

ԵՒ ԵՂԵՒ ԳՐԻԳՈՐԻՍ այս յոր և նման
նախընթացն գրիգորի՝ սրբութբ և ի-
մաստութբ, ոչ և սիրով վկայիցն այ.
քանզի և սա թարգմանեաց բազում
ճառս. կարգաւորեաց և զընթերց-
ուածս ճաշոցի, և պայծառացոյց ըղ-
տօնս սրբոց այ. վսն և վկայասէր
փոքր կոչի. և որ մեծն է՝ զի ՚ի
նստին կթղկս դեռահաս էր տիօք,
այլ կատարեալ մտօք, շնորհազարդ և
հրեշտակային վարուք. որ ամենայնի
ծաղկեցոյց զհոգևոր և զարտաքին
գիտութի. և ստիպեաց զիմաստուն
վարդապետս՝ շարադրել զգիրս պի-
տանիս. յորոց մի էր և մեծն իգնա-
տիոս վարդապետ՝ աշակերտակից իւր
առ ոտս սանփաննոսի գիտնաւորի:
Եւ յերկարեալ յաթոռ հայրապետու-

Թէ բազմարդիւն վաստակօք՝ 'ի վեր-
ջին ամի իւրում ազդեցութ̄ Հոգւոյն Ս̄բ
ձեռնադրեաց փոխանակ իւր զՇնոր-
հալի եղբայրն իւր զՏ̄ն Ներսէս կլա-
յեցի. զորմէ տես 'ի կարգս տօնե-
լի ս̄բց:

Եւ Շնորհալւոյն յաջորդ եղև յամի
1173. ոիբ. եղբօրորդի Ն̄ր Գրիգոր
տղայ՝ այր հզօր բանիւք և արդեամբք,
և զարդարեալ ա̄ծային գիտութ̄. որ
գեղեցիկ 'ի գլուխ տարաւ զժողով
միաբանական սիրոյ ը̄ յունաց զհիմ-
նարկեալն 'ի Շնորհալւոյն. և արար
բազում ուղղութիւն. և բարեկարգութիւն
ազգի իւրում՝ գործակցութեամբ
ս̄բյն Ներսեսի Լամբրոնացւոյ. և զսը-
մանէ ևս տես 'ի տօնեկիս:

Երևելի եղև առ սոքօք և զկնի սոցա
նաև Գրիգոր Ապիրատ միւս եղբօրորդի
Շնորհալւոյն՝ ընտրեալ արժանաւոր
կթ̄ղկս զկնի Գրիգորի գահավիժի
յամի 1195, ոխդ. որ և օծ զԼևոն
արքայ Հայոց՝ զառաջին թագաւոր 'ի
ցեղէ ռուբինեանց: Մինչև յետ ս̄բց
Թարգմանչաց՝ գլխաւորաբար ար-
դիւնք այսոցիկ ս̄բ Հայրապետաց գրի-
գորիսեանց և Ներսիսեանց են՝ յամ
եկեղեցական բարեզարդութիւնք և լու-
սաւոր վ̄րդապետութիւնք գրոց, յոր վայե-
լեմք յազգի մերում: Հ. փղ. յուն. 30:
ռճո. օգոստ. 9:

Դաւ.

## Դ

Պաղամոն կամ Պաղամոս Ճգնաւոր՝
էր զօրական 'ի կոստանդնու-
պօլիս յաւուրս Թէոդոսի փոքու.
այր ճգնապաշտ և առաքինի. որում
հանդիպէր երբեմն ընդ հայրն խա-
հակ՝ գուշակեաց, եթէ կրօնաւոր
լինիցին, և եղև այնպէս. զի առնէր
կնոջ իւրոյ մանն յղնչիցն, և զդուս-
տրն 'ի կանանց վանս եդեալ, զմնա-
ցեալ ինչսն բաշխեաց աղքատաց. և
առեալ զերկու որդին իւր փաւստոս՝
գնաց 'ի վանս հօրն խահակայ. և
եղև միայնակեաց ընտիր՝ սքանչելի
առաքինութը̄, և հոգեւորս: Եւ զկնի
փոխման հօրն խահակայ՝ կարգեցաւ
փոխանակ նորա հայր վանից: Սա
կանխաւ գուշակեաց զչարիս նեստո-
րի, և ոչ թոյլ ետ նմ գալ յողջոյն
իւր. և 'ի ժամանակս սրբ ժողովոյն
եփեսոսի՝ յորժամ նեստոր չարա-
ուէստ հնարիւք խափանէր էր զճա-
նապարհս, զի մի հասցէ սահման ժո-
ղովոյն առ կայսրն, հարք ժողովոյն
եդին գիր 'ի մէջ գաւազանի, և 'ի
ձեռն աղքատի միոյ յղեցին առ ընդ
հայրն դաղմատիոս. և նա ճգնաւոր
հրամանաւ ելեալ յառանձնութէ՝ եբեր
զայն

ղայն Թաւղթ առ Թագաւորն։ Յետ
այսորիկ եկաց սրբն գաղմատիոս մին-
չև ցաւուրս պատրիարգութե՛ սրբյն
պրոկղի. և ընդ արդեամբք հանգեաւ
'ի քս։ Հ. Յ. օգ. 3։

Պանտափոս կիւր դանափո՝ էր ընթերցող եկեղեցւոյն աւլոնայ 'ի լիւրիկէ. և 'ի ժամանակս հալածանաց ժողովե՛լ զգիրս և զանօթս եկեղեցւոյ՝ թաքեաւ յանուր անդի ուրեք ծովահայեաց. բայց հասե՛լ կռապաշտից 'ի վր նր, առին զպագաս 'ի ձեռաց նր. և զնա սոխալէին պաշտել զդինխսոն՝ որ է բաքոս, զի նա է աստն արարիչ գինւոյ. իսկ երանելին անարգեաց զդիս նց, և խոստովանէր զքս ած արարիչ ամի. վո՛յ բարկացեալ հատին զգլուխ սրյն, և ընկեցին զնա 'ի ծով. զոր յետոյ գտեալ փիլիպպոսի ուրումն քահանայի 'ի ցամաքի՝ թաղեաց պատուով. և նոյնժամայն ձիթենի ասի բուսե՛լ 'ի վր գերեզմանի նր։ Հ. պպ. ֆէպր. 3։ յետ.
2։ Յ. յնւ. 16։

Պանիէլ օն-նուհեայ՝ էր ծննդեամբ 'ի միջագետաց ասորւոց, 'ի հինգ ամաց հասակի կրօնաւորե՛լ 'ի վանս. այլասե՛լ զօրհնութն սիմէոնի սիւնակեցի՝ եկն առ այն աղդ մամբ յանապատն մերձ
'ի

'ի կոստանդնուպօլիս. ուր նախ փա_ կեայ զանձն 'ի տաճարի կռոց, և յաղթեալ աղգի աղգի փորձանաց դիւաց. այսպ եւ եկաց 'ի վ~ր բացօ_ թեայ սեան՝ ը~ս օրինակին սիմէոնի, տանելով ա~մ արկածից օդոյ անտա_ նելի ճգնութ~ք զամս յոլովս, մինչև կծկիլ մարմնոյ ն~ր, և դնիլ խորև զկոճղ. և այնչափ մեծացաւ անուն ն~ր, մինչև լևոն կայսրն եկն անձամբ խնդրել զաղօթս ն~ր. և սո~ն դանիէլ ետ նմ~ զհոգեշահ խրատս, առաւե_ լապէս ներողամիտ լինիլ. և ինքն 'ի խորին ծերութ~ն հանգ~ փոխեցաւ առ ած: Հ. փղ. դէկ. 16: յնւ. 16, և 22:

Յ. Լ. դէկ. 11:

Պաւղոս ղորտովան՝ (ը~ս ոմանց եպս,) էր 'ի ժամանակս դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի՝ 'ի ուղղուսսուլայ կմ~ դոռոստոլայ ք~ղքէն միւսիոյ. ուր սովորուն էր կռապաշտից 'ի տօնի կռոնոսի չե~յն իւրեանց մատուցանել զոհ զմի 'ի գեղեցիկ երիտասարդաց, զոր զարդարէին և զարմանէին ութ աւուրբք յառաջ անոյշ խորտկօք, և շրջեցուցանէին մեծաւ շքով. և այս ա~մ զօրականք մատն մատն կտրատէին, և ճաշակէին 'ի մարմնոյ ն~ր: Արդ՝ 'ի միում ամի անկաւ վիճակն 'ի վ~ր դասիոսի. և նորա պատասխանի

տուե~լ

տուէլ տակ. լաւ է ինձ մեռանիլ վն անուանն քո, և ոչ 'ի պատիւ պըղծոյն կռոնոյ. վոյ ածաւ յատեան բռնոյն դատաւորին. և դատել վն հաւատոյ՝ եղ 'ի վր նորա վճիռ գըլխատման. այլ նախ տարան զնա առաջի կռոցն կռոնոյն, և եդին 'ի ձեռս նր հուր և խունկ, զի հարկաւ ձգեսցէ առաջի չքոյն իւրեանց. իսկ նա սպահեաց յափն իւր՝ մինչև 'ի տեղին, ուր հատին զգլուխ երանելւոյն: Հ. նոյ. 22: Յ. Լ. նոյ. 20:

Պետրոս, Զոսիմոս, և Գոպիոս էին քրիստոնէայք նիկոմիդացիք. որք 'ի յաւուրս հալածանաց (դիոկղետիանոսի) 'ի տօնի միում կռոց դիմեցին 'ի մեհեանն, և ցրուեցին զզոհս նց. վոյ կալան զնս կռապաշտք, և ե ամ տեսակս տանջանաց անցուցին զնս. և յոչինչ համարիլ նց զչարչարանս և 'ի թշնամանել զկուռս՝ կոտրեցին քարինս զպարանոցաց նց, և ընկեցին 'ի խորս ջուրց, և այնպէս կատարեցան 'ի քս. ե նոսին ասին նահատակեալ և այլ ժե զօրականք: Հ. փոխ. հոկ. 15: Յ. Լ. հոկ. 21:

Պետրոս և Գորգոնէն եղբարք գնունիք՝ էին իշխանազուն երիտասարդք առոյգք և գեղեցիկք. զորս տապա-

տակքն

տանկ.քն յուսփայ տաճկանի (որ 'ի Հ. վրիպակաւ դնի բուղայ) կալան ը̅ այլ բազմուէ յ̃ձէն հայոց, և կա_պեալ ձեռօք խաղացուցին 'ի դռճին. և տեսեալ տաճկանին զվայելչուն հա_սակի երկուց եղբարցն՝ խանդաղա_տէր զնոքօք, և հրապուրէր դառնալ յայլազդութի՝ մեծամեծ խոստմամբք. և յանարգել երանելեացն զչար հրա_պոյրս նր̅, և 'ի պղինդ կալ 'ի սերն .քնի, տարան զնս̅ 'ի հրապարակ, և հատին զգլուխս նց̅, նախ զկրտսե_րոյն՝ ը̅ աղաչելոյ աւագ եղբօրն, և ապա զնորա. յամի 917. յկղ: Հ. փղ. ճայ. 27: ջէռ. ապր. 16 :

Դաւիթ և Ռոմանոս՝ էին որդիք ար_քային ըռուզաց կմ̅ ռուսաց փռամի_րոսի, որ ամ̅ ծ̃աւն դարձաւ 'ի քրիս_տոնէութի յաւուրս աւէքսի կայսեր 'ի ժը̅ դարու. և յետ մահուան բարե_պաշտ հօրն իւրեանց՝ անդրանիկ եղ_բայր նց̅ ոչ համամայր, եւստապոլ_կոս անուն՝ այր ժանտ, պատրանօք կալաւ և սպան զերկոսին զնս̅ զան_մեղս և զառաքինիս. այլ ած̅ 'ի ձեռն բազում սքանչելեաց յայտնեաց զսր_բութի նց̅. և շինեցաւ տաճար մեծ յանուն նոցին հինգգմբեթեայ. ող̅ լով գրի յընդարձակ պատմուէ նց̅ :
Հ. յուլ. 8 :

Պենտեփիանոս · տէր Դոմետիանոս ։

Պէտակաւորեալ կին դեռակաւորէսի վկայն՝ էր զմիւռոնացի, զօրաւոր քաղաք հաւատոցն քնի · մինչև դարձուցանել զբաղուսն 'ի հեթանոսաց. և մկրտել ։ Իւ 'ի ժամանակի հալածանաց դեկոսի՝ 'ի թաքչել նր 'ի լերինս՝ և 'ի խնդրել զնա սպասաւորաց դատաւորի՝ մատնեաց փխկ նր զանձն իւր իրաւափառ հովուեն, և նահատակեցաւ ՔՆ սաստելոցս 'ի կարգի տօնելի սրբց ։ Զայն իմացել սրբյն գիտակորեդեայ՝ կամակար եա զանձն 'ի ձեռս խնդրողաց · որք դան հարին զնա, և կապանօք կացուցին առաջի դատաւորի · որ փորձեաց զերանելին այէսայէս տանջանօք և քերանօք և նեղութե բանտի · և գտեղ զնա անխախտելի 'ի հաւատոց՝ եա գլխատել ։ Հ· ապր·
10 ։ Յ· հոյ· 11 ։ Լ· հոյ· 10 ։

Անդրէական Հիւղոս կոչին՝ նահատակեցին 'ի հոնաց՝ փոքր մի յետոյ քան զխաչն Տէրն սրբյն մեսրոպայ · քանզի յորժամ ունդին յաշակերտաց նորա եկեղեցոյ յաղօթանս՝ յետ շրջելոյ յուխտ եմի՝ եկեալ բնակէին յարցախ Տի 'ի գաւառին խաչենոյ մեծաւ Ջգնութ. եկն արքայն հոնաց յափն կուր գետոյ ։

տոյ․ և արձակելոց զզօրս իւր է̅ ամ
կողմն յաւար և 'ի գերութի․ և մին 'ի
զօրագլխաց նր̅ օթևանս կալեալ մօտ
'ի բնակարան աշակերտաց սր̅յն Մես֊
րոպայ՝ սպան զոմանս 'ի նոցանէ առ
ատելութե առ քրիստոնեայս, է̅ նո֊
սին և զաթանաս քահանայ՝ որ եկեալ
էր է̅ նա յեկեղ․ և զայլսն չարչա֊
րեաց, և 'ի բաց եթող ։ Կայր 'ի մէջ
գերելոցն և կին մի մեծազգի՝ չքնաղ
տեսլեամբ, անուն նր̅ Թագուհի․ զոր
կամեցաւ զօրագլուխն առնուլ իւր
'ի կնութի․ և յոչ հաւանիլ նր̅ կամաց
բարբարոսին՝ գան հարին զաղախինն
քն̅ի, և քարշեցին է̅ երկիր․ մինչև
պատառ պատառ անկանիլ մարմնոյն,
և այնպէս կատարեցաւ ն̅ք թագու֊
հին․ իսկ 'ի գիշերի ծագեաց լոյս
տապանակին 'ի վր̅ կաթուածոց ա֊
րեան նր̅․ որով հաւատաց զօրա֊
գլուխն 'ի քն̅ հանդերձ զօրօք իւ֊
րովք․ և մկրտեալ 'ի քահանայից՝ ան֊
ուանեցաւ Թէոփիլոս․ նոյնպէս և
երկու որդիք նր̅՝ մանուկս և երանո֊
գիս․ այլ ժողովեցին զնշխարս սր̅
Թագուհւոյն 'ի բլրակին՝ որ կոչեցաւ
տապանակլուր ։ Նմանեալ արքային հօ֊
նոյց զանցս Թէոփիլոսի՝ կոչեաց զնա
առ ինքն է̅ արամբք պատմաւորօք,
և գտեալ զնա̅ հաստատուն 'ի հաւատս
քն̅ի՝ կտտորեաց 'ի բերան սրոյ․ իսկ

որ

որդիք Թէոփիլոսի և այլ հաւատա-
ցեալ զօրքն անկեալ էին 'ի լեառն մօ-
տակայ. որոց զհետ երթեալ անօրի-
նաց՝ կոտորեցին զնոսա անդ. և 'ի մի
վայր դիզեալ զմարմինս նահատակաց
իբրև զփայտս, կա՛ 'ի վր փայտից՝
հրոյ ետուն ճարակ. յորմէ և տեղին
դիզափայտ կոչեցաւ. և եղև տեղին
այն յետոյ վանք. ուր և նահատակե-
ցան միայնակեացք ոմանք յայլազ-
գեաց: Եւ սոքա ամենքին ընդհանրա-
պէս ասին ճը վկայք՝ որք 'ի դիզա-
փայտն կատարեցան: Հ. Նրփ. 29:

Պետրոս և Պետրոնիա վկայք՝ էին 'ի
Լաւոդիկեայ ասորւոց. զորս 'ի ժա-
մանակի հալածանաց ձգեցին յատեան
իշխանի քղքին՝ վն համարձակ պաշ-
տելոյ նց զքս, և քարոզելոյ զնա.
և իշխանն գան եհար զնս չարաչար.
մինչև 'ի նոյն հարուածս աւանդել
զհոգիս իւրեանց առ ած բարի խոս-
տովանութբ: Ոմանք դնեն նահատա-
կակից սոցա և զերրորդ վկայ Պետ-
րոնէ անուն: Հ. Յ. Լ. ապր. 11: Տես
և զմիւս եւս Դիդիմոս ընդ Թէոդորայ:

Պետրոս որ հայրն՝ էր յանտիոքայ ա-
սորւոց 'ի ժամանակս մեծին Թէո-
դոսի, կրօնաւորեալ խստակրօն վրդ-
նութբ, երկնիցս միայն 'ի շաբաթու ճա-
շա.

չափելով հաց և ջուր. սա եկեալ 'ի
կոստանդնուպօլիս՝ եգիտ յեզր քա֊
ղաքին այր մի դատարկ, որ ասէր
լինել բնակարան դիւաց. և 'ի կանգ֊
նել զգաւազան իւր 'ի դուռն այրին՝
արմատացաւ և եղև ծառ պտղաբեր.
և ծախիւք Թեոդոսի թագաւորին շի֊
նեաց զանեղին վանք, և բղխեցոյց
ջուր 'ի տեղւոջն. և զամն անկեալ 'ի
ջեռոր և մեռեալ՝ յարոյց 'ի կեանս.
արար և այլ սքանչելի գործս. և
կեցեալ մինչև յաւուրս փոքուն Թէո֊
դոսի, և Ատտիկոսի պատրիարգի՝
պատուէր լինէր 'ի նմա իբրև զմեծն
անտոն: Եւ 'ի վախճանին իւրում 'ի
մահ անշնչութ՝ յորժամ եկն առ նա
ատտիկոս ը՝ աղէքսանդրի պատրիար֊
քին անտոնքայ, եբաց զաչսն և ա֊
սաց. շնորհեաց ինձ տծ այլ ևս ժա֊
մս՝ վս կատարելոյ զշինուածն վանացս
և եկեղեցւոյ, և եղև այնպէս. զի
'ի կատարիլ ժե ամաց երևեցաւ նմա
հրեշտակ այ, և ընկալաւ զհոգի նր
'ի խաղաղութի: Հ. Յ. յուն. 19:

Պողիքրոնիոս կմ Պոլիքրոնիոս Ճգնաւոր
նահատակ՝ էր 'ի ժամանակս մեծին
կոստանդիանոսի և որդւոց նր. սա
յառաջն մոգ էր 'ի պարսիկս. և ու֊
սեալ զհաւատս քնի յոքանայ ումեմ֊
նէ՝ եթող զծնողս իւր և զինչս, և
ե֊

ելեալ 'ի մծբին՝ եմուտ 'ի վանք մի.
այլ 'ի լսել զարտուղի կրօնաւորաց
ը աւաւել ժուժկալութիւն իւր՝ գնաց
անտի 'ի վանս սարգսի և բագոսի,
և եղև նմանող վարուց հօր վանիցն՝
որ էր այր մի նուրբէն անուն. և
եղեալ նորա սարկաւագ՝ տեսանէր զա_
ղաւնի մի թռուցեալ 'ի վր մի խորհր_
դոյն. զոր 'ի սկզբան 'ի բաց վարէր
քչոցաւ. բայց յետոյ հասու եղև՝ թէ
է հոգին մի աղաւնակերպ երևեալ.
և յորժամ զնոյն տեսիլ ետես աղօ_
թիւք նորա և հայրն նուրբէն, կնքեալ
զսբն յակոբ ձեռնադրել զդոմետիա_
նոս քահանայ. այլ նա փախեաւ 'ի
լեառն աւազոտ, և եղև խոտաճա_
րակ զամս է. և տուեալ նմա յԱյ
շնորհք բժշկութե, որով յայտնի եղև
անուն նորա: Վս յանցանել յուլիա_
նոսի ը միջագետս՝ լուեալ զսըն դո_
մետիանոսէ, թէ բազումք յանհաւա_
տից 'ի ձեռն նորա հաւատան 'ի քս եւ
քարկոծել զնա հանդերձ երկու ա_
շակերտօք. և մնաց մարմին սրբոյն ը
քարակուտիւն զժամանակ ինչ. և
ապա նշանօք ինչ յայտնեցաւ, և բե_
րեալ թաղեցաւ յեկեղեցւոջ: Հ. օգ.
8: Յ. Տրփ. 7: Լ. օգ. 7: Կայ և այլ
վկայ համանուն 'ի նոյն ժամանակս,
որ յիշի 'ի յն. օգ. 7. և Տրփ. 23. և թէ
իցէ մի և նոյն:

Դ..

Պռոմետիանոս կամ դեմետրիոս վկայ՝ եր 'ի դաբուղայ գեղջէ, կամ 'ի գաւառէ տրուգենաց, 'ի հալածանս մաքսիմիանոսի և մաքսիմինոսի. և մատնեալ 'ի ձեռս պոպղիոսի դատաւորին՝ համարձակ խոստովանեցաւ եղև զքն, և գեղեցիկ ատենախօսութբ յայտնաբանեաց զխորհուրդս փրկական տնօրէնութե, և նշաւակեաց զհեթանոսացն յիմարութի. Ըն որ բարկացեալ դատաւորին՝ եա կարճել զնա 'ի կենաց սրով. իսկ մարմին սբյն ամփոփեալ 'ի հաւատացելոց՝ ծաղկեցուցանէլեօք: Հ. նոյ. 14: Յ. նոյ. 15:

Պոմնա կամ փոմփէնա վկայուհին՝ եր յանապղաբրայ կամ յանապէբխոյ (Ըն ունոյց 'ի լիկիոյ գաւառէ)· զոր կալեալ 'ի հալածանս դիոկղետիանոսի՝ կացուցին առաջի լիւսիոյ դատաւորին, և 'ի դատանին ՚Ն անտրկիւղ զքն ած, և յԸնվայր հարկանել զնուա հեթանոսաց, զան հարին զնա ուժգին, և չամիրօք խանձոզեալ զոտան՝ արկին 'ի բանտ: Արկին եւ զատել յատենին բրածեծ արարին, և քարշել քանկանցին այդ ցանաւ զնմ յօղոնանս մարմնոյն, և գարձել եգին 'ի բանտ. ուր աղօթելով աւանդեաց զհոգին իւր առ ած: Հ. Յ. Լ. հոկ. 12:

Դոմինոս կմ՝ Դոմինինոս վկայն՝ էր Թե-
սաղոնիկեցի՝ այր ջերմ յածպաշտութ .
և 'ի շինել Մաքսիմիանոսի տաճարանս
'ի Թեսաղոնիկէ՝ առեալ լուր զնմանէ ,
կոչեաց զնա առաջի իւր , և ասէ .
ընդէ՞ր իշխես պաշտել զՔն 'ի շինել
իմ առաջիկայ 'ի քղքի աստ , 'ի բաց
թողեալ զդիցն պաշտօն . իսկ վկայն
Քնի զօրաւոր բանիւք նշաւակեաց
զսուտն կռոց , և բարձրացոյց փա-
ռօք զհաւատս քրիստոնէից . վսյ հրա-
մայեաց բռնաւորն հարկանել զբե-
րան նր . ապա ետ հանել արտաքոյ
քաղաքին , և ջարդել զոլորս նր . և
այնպէս մնաց երանելին խորտակեալ
անդամօք զաւուրս եօթն՝ մինչև գո-
հանալով զՔնէ աւանդեաց զոգին :
Հ. հոկ. 19: Յ. Լ. հոկ. 1:

Դասան կմ՝ Դասան եպս՝ էր մի 'ի
քահանայից գերելոց Է լինն հազար
քրիստոնէից , զորս գերեաց Շապուհ
'ի տրուէ յունաց . և 'ի Ճանապարհի
Հեղինդորոս եպս հիւանդացեալ ձեռ-
նադրեաց եպս զԴասան . որ յետ մահ-
ուանն Հեղինդորոսի՝ անխափան կա-
տարէր զպաշտօն իւր , և քաջալերէր
զժողովուրդն՝ ուրախութեամբ տա-
նիլ գերութեն , և հաստատուն կալ
'ի հաւատս Քնի : Իբրև ոգդ եկն

շապհոյ՝ թէ դոսան եպն է, որ ոչ թողու այլոց անցանել 'ի կրակապաշտ դենս պարսից, եւ գլխատել զնա․ ամ̃ և զայլս յորքունս ՟Է ՆՖ։ Հ. հոկ. 2։ Յ. ապր. 9։

Դորոթէոս եպս տիւրոսի՝ էր այր գիտնաւոր և առաքինի․ սա 'ի հալածանս դիոկղետիանոսի և լիկիանոսի ապրեցաւ թաքստեամբ յոդեսուպօլիս․ և 'ի ժամանակս խաղաղութեան եկեղեցւոյ դարձ արարեալ անդրէն 'ի տիւրոս՝ հովուէր զհօտ իւր մինչև 'ի խոր ծերութիւն․ յորում ժամանակի 'ի յառնել հալածանաց յուլիանոսի՝ մեկուսացաւ 'ի թրակիա։ Բայց քզի հռչակեալ էր անուն վսեմական առն, հասին անդէն 'ի վր̃ նր̃ հալածիչքն․ և ազգի ազգի տանջանօք խոշտանգեցին․ մինչև կատարեցաւ խոստովանող վկայն ք̃ի 'ի հասակի հարիւր և եօթն ամաց․ որ և գրով եթող բազում ինչ օգտակար յեկեղեցւոջ․ թէպէտ և սակաւք 'ի բազմաց մնացին այժմ։ Ոմանք զսա լոկ քահանայ համարին, և ոչ եպս։ Հ. փտ. յունիս 2։ Յ. հոկ. 9։ Լ. յունիս. 5։

Դուլա կի̃ փաւլաս բազմաչարչար նահատակն՝ էր իշխան զեփիւռայ կի̃ զենեփի գաւառին կիլիկեցւոց․ և

վր̃

վ՛ր քրիստոնէութենն զրկել ՚ի պատ-
ուհոյն՝ կացուցաւ կապանօք առաջի
մաքսիմիանոսի կմ մաքսիմոսի դա-
տաւորին. և զի համարձակ խոստո-
վանէր զքն, և անարգէր զպաղղան
և զպաշտօնեայս նր, հարին զնա
բրօք՝ մինչև ջարդել զոսկերս. ծծին
և զգլուխն ձիթով, և եդին ՚ի գա-
գաթն կայծակունս հրոյ. պատառո-
տեցին զորովայնն՝ մինչև բացան ա-
ղիքն. քերեցին խեցեաւ զմարմինն,
և արկին քացախ ՚ի վէրսն. ջաղխե-
ցին զծնօտս, և խորտակեցին զատ-
ամունս: Այլ նա յանձն հաստատուն
կայր. և յայսմ առնել դատաւորին
զօրէնս քրիստոնէից՝ սկսաւ նը վկայն
պատմել զսքանչելի խորհուրդ ան-
րէնութեն քնի: Ապա բացին բռնութ
զբերան սըյն, և արկին ՚ի ներքս ՚ի
զոհից կեռոց. և քարշեցին ը̃ երկիր
ցքան մղոնս, մինչև աւանդեաց զհո-
գին. և զմարմինն ՚ի գետ ընկեցին.
այլ յետոյ գտաւ ՚ի ցամաքի, և թա-
ղեցաւ պատուով: Հ. յուն. 18: Յ.
Լ. յունիս. 15:

# Ե

ԵՂԵՒԹԵՐԻՈՍ կմ՟ ԵՂԵՒԹԵՐՈՍ եպս՟՝ էր
հռովմայեցի՝ որդի անթիայ կմ՟
աթենայ բարեպաշտ կնոջ. սնեալ առ
ստա հայրապետին հռովմայ անակ-
ղետոսի կմ՟ անիկետոսի. յորմէ ձեռ-
նադրեալ սարկաւագ և քահանայ՝
փայլէր սրբութ՟բ և զօրութ՟բ նշանա-
գործութե. վ՟յ 'ի Ե ամաց հասակի
ձեռնադրել եպս՟ Իլլուրիկեցւոց՝
դնաց անդր, և դարձոյց զբազումս
յանհաւատից: Առաքեաց ադրիա-
նոս կայսր 'ի վ՟ր նր՟ զփէլիկիս նա-
խարար. որոյ լուեալ զքարոզութ՟ն
սր՟յն՝ եղև քրիստոնեայ: իսկ սր՟ն
եղևթերիոս անձամբ եկն առ կայսրն.
և համարձակ դաւանել զք՟ս ած՟՝ ե-
դաւ 'ի վ՟ր հրացել պղնձի մահճաց.
յորմէ անվնաս պահել մատնեցաւ
'ի ձեռս կորեոսի եպարքոսին մեռ-
սանոյ. և սա կամէր արկանել զսր՟ն
'ի վառել թոնիր երկաթի. այլ շնոր-
հօքն ած՟յ հաւատաց քարոզութ՟ սր՟յն,
վ՟յ ինքն արկաւ 'ի թոնիր անդր վ՟ր
ք՟նի. և անարատ պահել զօրութ՟ն
ած՟յ կատարեցաւ սրով, ը նմին և
այլք 'ի նոր հաւատացելոց. սոյնպէս
և մ՟ր եղյն յետ արկանելոյ 'ի կաթ-
սայ

սայ եղայցէ, եւ և առաջի առիւ-ծուց՝ գլխատեցաւ ը̄ երջանիկ մօր իւրում: Հ. դէկ. 17: Յ. դէկ. 15: Լ. ապր. 18:

ՍՂԷԿԱՆԻԴԱ կմ ԵՂԷԿԱՆԻԱ աղախինն քրիստոսի՝ էր Թեսաղոնիկեցի՝ յաւուրս կայսերացն գործիանոսի և փիլիպ-պոսի 'ի Գ̄ դարու. զոր կալեալ պե-րինոս կմ պերեննիոս դուքսն կորն-թոսի, և յաղթահարեալ յխմաստութե-նէ՝ եա կապել զոտս նր 'ի լուծ ե-զանց, և պատառոտել ընթերքանս ոտիցն. ապա հրամայեաց գերծել զգլուխն, և ձիւթ կայծախառն մա-տուցանել. յետոյ իբրև տարան զսր-բուհին 'ի տաճար կռոց, աղօթիւք խորտակեաց զարձանն աթենայ. վսյ պատառել զստինսն նր արկին 'ի բանտ: Յետ աւուրիկ եկն փոխանակ պերի-նոսի՝ յուստինիանոս դքեչին կմ յուստինոս անթիպատոս. սա սաստ-կեր զսբ կինն՝ զոհել կռոց. և ոչ կարացեալ հաւանեցուցանել՝ էարկ զնա 'ի հնոց. բայց հուրն ոչ մխա-սեաց սրբուհւոյն, այլ 'ի կռապաշտ-տից այրեաց արս եօթանասուն: Այս տարածեցին զնա 'ի վր հրա-ցեալ մահճաց. և իբրև յոգիս ա-պաստան կայր, էջ առ նա հրեշտակ տյ, և 'ի վեր առեալ 'ի մահճաց՝ ող

Քացոյց զնա ։ Արկաւ և առաջի գա-
ղանաց ․ բայց ոչ մերձեցան 'ի նա այլ
փխնկ նր̃ զԹշնամիս նր̃ ծախեցին ․
հուսկ յետոյ որով կատարեցաւ սրբ-
բուհին՝ լսելով և բարբառ աւետեաց
յերկնից, և փխնկ արեան՝ կաթն բղ-
խելով ։ Հ․ Յ․ Լ․ Նոյ․ 28։

Ադդէ առաքեալ՝ էր աշակերտ սբ̃յն
Թադէոսի առաքելոյ, և գործակից
նր̃ 'ի քարոզութ̃ե ․ և յետ կատարման
նր̃ ձեռնադրեցաւ եպս 'ի յաթոռայ եղբօ-
րէն տն̃՝ եկն անդրէն յուռհա, և
սերմանեաց զբանն կենաց յԾն Հայոց,
մարաց, և աղուանից ․ շինեաց եկե-
ղեցիս, և կարգեաց քահանայս ․ և
'ի կատարիլ միոյ յաշակերտաց իւրոց
'ի սահման քղքի ուռհայեցւոց, եկեղ
'ի դեօղն դիտ, և անտի 'ի գաւառին՝
կատարեցաւ քարկոծմամբ 'ի կռա-
պաշտից ․ որք ընկեցին զնա 'ի գուբ
մի, և անյայտ արարին ․ մինչև յետ
ժմկց երևեցաւ սբ̃ն արանց ծա-
պաշտից 'ի տեսլեան, և ծանոյց զտե-
ղի մարմնոյ իւրոյ ․ զոր առեալ նշ̃
տարան և հանգուցին պատուով 'ի
դիւղն ուռեկան ․ ուստի փոխադրե-
ցաւ փառօք 'ի վանքն Ջրվշտին կո-
չեցեալ ․ ուր առնէր բժշկ̃ սքանչելիս ։
իսկ 'ի վ̃ր դրոյն կանգնեաց վաչա-
գան արքայ աղուանից սիւն մեծ 'ի

յե․

յիշատակ սբ առաքելոյն եղիշէի. և յայնր սեան մր ճգնեցաւ սենեկա_ պետան արքայի։ Հ. սեպտ. 21։

Եղիսաբեթ նոր վկայուհին՝ աւեր կին աւերաղձն ասացեալ, էր արճիշեցի՝ 'ի խառաբաստ գեղջէ, որ փորձանօք չարին յայլազգու ի դարձել՝ մատնեաց զանձն 'ի սպծուն. և 'ի դալ խորում 'ի վան՝ 'ի խօսելն ը. ումեք երդումաւ 'ի մր իրիք բանի, ասելով. այն ոչ ծածանին՝ որ այս այսպէս է. զոր լուեալ այլազգեաց՝ սաստեցին նմ. իսկ նա երկրորդեաց ասելով. յայտ_ նապէս ասեմ, և ոչ ամաչեմ. զի ես ծառայ եմ ոչ ծածանի, և հաւա_ տամ 'ի մխածին նր որդին յս քս՝ 'ի խաչելեալն թգր վս մերոյ փրկուե։ Յայնժամ եղև ամբոխ, և տարան զնա յատեան դատաւորաց. և անդ ես համարձակ զաւանեցաւ երանելի կինն զքս ած. վսյ և հրամանաւ տիկնոջ բդեշխին քարկոծեցաւ յա_ ւուր տօնի սբց քառասնից, յամի 1391. ամի։ Հ. պս. ապր. 24։

Մանինա, պալինա, և պինա, կին ը յու. էննաա, ախնաա, և պիննաա, էին 'ի քաղ_ քաքաղաց Ցէն՝ 'ի հիւսիսային գա_ ւառէ սկիւթացւոց, աշակերտեալք սրբն անդրէի առաքելոյ. զորս կալեալ

ազգականաց նց՝ մատնեցին իշխանին
խուժադուժ ազգին իւրեանց, վն
քարոզելոյ նոցա զքս, և դարձու-
ցանելոյ զբազումս . և նա եւս կամել
զնս 'ի մի մի ցից 'ի մէջ դետոյ յա-
ւուրս սառնամանեաց ձմերայնոյ .
ուր սառնապատ եղեալ երանելեացն
գրեթէ մինչև ցպարանոցս իւրեանց՝
անհնարին չարչարանօք կատարեցան
'ի քս : Հ. փոք. ճէփ. 4: Յ. յնվ. 20 :

[illegible] ԵՓԵՍԱՑԻ՝ երիտասարդ գե-
ղեցիկ և զօրաւոր՝ էր 'ի ժամանակս
հալածանաց դեկոսի 'ի սելեւկիայ. բա-
զմքէ . սա տեսեալ յաղեքսանդրիա
զչարչարանս վկայից, և մանաւանդ
զորբուհւոյն եւտրոպիայ՝ որ փոխա-
նակ տապանալոյ 'ի ջերմ ջրոյ՝ զովա-
նայր սքանչելեօք, վառեցաւ հոգւով .
և դիմեալ 'ի տաճար կռոց՝ խորտա-
կեաց զբագինսն . վսյ կալան զնա զօ-
րականք և ածին կապանօք առաջի ա-
պիլիանոսի դատաւորի . որ եւս ար-
կանել զնա 'ի բանտ ընդ այլ երանելի
կապելոցն . յայնժամ զօրաւոր բանիւք
եպիփանիոսի դարձան բանտապանքն
առ քս, և կարդեցաւ քն ամ աւին հա-
մարձակութ մեծ . վսյ 'ի վաղիւն անդր
կացեալ յատենի՝ աներկիւղ յանդի-
մանէին զպղծութ կռապաշտութե .
մինչև վաղվաղակի եղև հրաման հա-
տա-

տանել զլեզուս ամէն, և ապա ըղ-գլուխն: Յետ այսորիկ առանձինն տանջեցին զեպիմաքոս քերանօք. և 'ի ցայտել յարենէ նր̅ 'ի կուրացեալ աչս աղջկան միոյ՝ անդէն բացաւ և ետես զլոյս. Է̅ որ բարկացեալ դա-տաւորին՝ ետ վաղվաղակի գլխատել զքաջ նահատակն: Այլք ասեն՝ թէ հրով կատարեցաւ ընդ աղէքսանդրի ումեմն վկայի: Հ. հոկ. 31: Յ. հոկ. 30: Լ. դեկ. 12:

Սողջմափոս և Գորդիանոս հռովմայեցիք՝ էին 'ի ժամանակս յուլիանոսի. և ըմբռնեալք 'ի դատաւորէն հռովմայ՝ մատնեցան 'ի գանս և 'ի քերանս վ̅շ̅տ̅ անոճանն ո̅ն. և ապա արգելան 'ի բանտ զաւուրս բազումս, զի թերևս առ նեղութեն յանձն առնուցուն ըղ-պաշտօն կռոց. բայց երբե անդըր-դուճելի գտան 'ի սէրն ք̅ի՝ գլխատ-մամբ պսակեցան. և մարմինք նոցա թաղեցան 'ի հաւատացելոց 'ի հռովմ՝ 'ի լատին անուանեալ Ճանապարհի: Են՝ որք ասեն՝ թէ այս եպիմաքոս իցէ նոյն Է̅ նախընթացին բազմօք յա-ռաջ նահատակելոյ. երբ զի մարմին նր̅ բերեալ յաղէքսանդրիոյ՝ թաղեալ իցէ 'ի հռովմ. և ապա 'ի նահատա-կիլ գորդիանոսի 'ի հռովմ՝ մարմին սորա ես 'ի մի վայր ամփոփեալ իցէ

Է եպիսկոպոսքն : Հ. մայ. 14 : Յ. մայ. 9 : Լ. մայ. 10 :

Ի պոնտոսական Խերսոնայ է սրբոցն՝ կատարեցան նահատակութք եւ խոստովանողական վկայութք ի չորրորդ դարու. քանզի առ Դիոկղետիանոսիւ Երմոն հայրապետն եղմի առաքեաց զԵփրեմ եպս ի Թուրքաստան. եւ զՎասիլէոս եպս ի Քերսոն մն քաղաքն. իսկ քերսոնացիք կալան զերանելին Վասիլ, եւ գան հարեալ արտաքսեցին ի քաղաքէն. եւ նա երթեալ ճգնէր ի քարանձաւ Պարթենոն լերին. այլ ի յարուցանել մեռեալ զմիուեալ որդի իշխանին՝ հաւատաց իշխանն եւ մկրտեցաւ հանդերձ բազմաւք. եւ սակայն ոմանք յանհաւատից անօրէն արարեալ՝ կապեցին զերանելին յոտս վասլի, եւ գան հարկանելով քարշեցին մինչեւ յաւանդումն հոգւոյն : Յետ այսորիկ եկին անդր այլ եպիսկոպոսք՝ Եւգենէոս, Ագաթոդորոս, եւ Ելպիդիոս. եւ նք եւ նահատակեցան ի հեթանոսաց : Յայնժամ առաքեաց անդր Երմոն հայրապետս զաշակերտ իւր Եթերիոս կամ Աեթերիոս եպս, այր մի եւ առաքինի. եւ թէպէտ զնա եւս ոչ ընկալան քերսոնացիք, բայց զի ի նոյն աւուրս եղեւ դարձ մեծին Կոստանդիանոսի,

'ի

'ի դաշտին 'ի բիւզանդիոն՝ դիմեաց առ
նա եթերիոս. և առեալ 'ի նմանէ
արքունի զօրականս՝ եհան 'ի քերսո-
նայ զմնացեալ անհաւատս, և եբեր
անդ այլ բնակիչս քրիստոնեայս. շի-
նեաց եկեղեցիս, և կարգեաց քահա-
նայս. և ինքն յետ միւսանգամ գնա-
լոյ առ կայսրն վասն շնորհս ունելոյ
նմ՝ 'ի դարձին վախճանեցաւ 'ի բա-
լոն կղզի դանաբրիս գետոյ, և ծաղ-
կեցաւ գերեզմանն նորա սքանչելեօք։
Ապա առաքեաց կոստանդիանոս 'ի
քերսոն զայլ ևս եպիսկոպոս՝ կապի-
տոն անուն. որ 'ի խնդրոյ յամառեալ
կռապաշտից եմուտ 'ի հուր բորբո-
քեալ. և կացեալ անդ ժամ մի՝ ելից
զեմիփորոնն կայծակամբք, և ել 'ի
բոցոյն անկիզելի. որով և դարձոյց
զանհաւատս. և ինքն հանգեաւ 'ի
բարւոք ծերութե։ Ընդ սոսին պա-
տուէի յիշատակ և եփրեմի եպիսն նա-
խայիշատակելոյ, և այլոց երկուց ե-
պիսկոպոսաց՝ նեստորիոսի և արկա-
դէոսի։ Հ. տպր. 19։ Ն. մրտ. 7։ Յ.
մրտ. 8։ Լ. մրտ. 4։

Լուկիան և Ղուկիոս՝ էին աշակերտք
որք ծերոյն դանիէլի ասորւոյ՝ աշա-
կերտի որք լուսաւորչին մերոյ. և սը-
նեալ յանապատի զամս բազումս՝ ե-
ղեն հոգեւոր և նշանագործ. և յոք

փոխման սբյն Ներսէսի մեծի առաքելին
զհոգի նր վերացեալ յերկինս հրեշ-
տակօք: Սբն շաղխաա՝ որ էր ամդե-
ցի ասորի, բնակէր 'ի լերինն կորդ-
ուաց խոստաճարակ կենօք 'ի մէջ առ-
իւծուց, որք հնազանդ կային նմ. և
'ի կրել զցաւս ինչ՝ ըն ունէին բժշկու-
թն 'ի սբցն. գային առ նա և բժշկ
'ի հեթանոսաց՝ կրօս ածային բանիւք
և զօրութբ նշանաց դարձուցանէր 'ի
հաւատս. և եթէ դէպ լինէր նմա
անցանել ըն գետ, գնայր անթաց ո-
տիւք 'ի վր ջրոց: Եւ զի այսպիսի ս-
քանչելի վարուք ծաղկեցաւ մինչև 'ի
ծերութն, ամքին ցանկային առնուլ
զմարմին նր. վսն ըն խնդրելոյ սբյն
'ի տնէ, մարմին նր եղև անդիւտ 'ի
մահուան, զի ծածկեցաւ 'ի յատուկ
գետոյն. մինչզի թէպէտ և մարդիկն
ըն այլ կողմն դարձուցին զջուրն, այլ
զմարմին նր ոչ գտին: Իսկ սբն եպի-
փան՝ որ էր 'ի յունաց, բնակէր 'ի
գաւառն ծոփաց յանապատին մամբ-
րէի. և առ սա եւս ժողովէին գա-
զանք, և առնէր ած բազում նշանս
'ի ձեռն սբյն, մինչև բազմաց յանհա-
ւատից դառնալ 'ի քր, և բազմանալ
վանականաց 'ի գաւառն անդ: Եւ
'ի կատարել երկուց եղբարց վն որոց
ձկանց՝ որ եկանէր յակունս մամուղ
գետոյ մօտ 'ի բնակարան սբյն, և 'ի

այսպ.

տապանանել մեոյ ղմիւսն , անիծիւք սբ֊ին դառնացաւ ձուկն տեղւոյն , և եղև այնուհետև անուտելի ։ Եւ 'ի բազմանալ աշակերտաց սբ֊ին՝ գնաց նոքօք հանդերձ յերկիրն յունաց , և բնակեցաւ 'ի կղզի մի ծովու մինչև 'ի վախճան իւր՝ սքանչելի քաղաքավա֊րութ֊ ։ Հ․ ճէփ․ Յ ։

զբազում հիւանդս և զախտաժէտս անուանմբն քո՛ի : Վ՛յ բանտապանն հիպողիտոս կի՛ պօղիքտոս հաւատաց 'ի քս , և մկրտեցաւ : Յետ երկին դատելոյ զլաւրենտիոս՝ և չարչարելոյ ազգի ազգի կտտանօք , երբև գտին զնա հաստատուն 'ի հաւատս , տարածեցին զնա 'ի վ՟ր հրացեղ կակարայի . և կայր առաջի նո՛ր մայր իւր՝ աւետարան 'ի ձեռին , և քաջալերէր զորդին . որ և ասաց ցիշխանն . մի կողմն մարմնոյս խորովեցաւ յերկար , այլ դարձո զիս 'ի միւս կողմն , զի և այն խորովեսցի . և այսպիսի արութ՟բ աղօթելով աւանդեաց քաջ նահատակն զհոգին՝ յամի տն 258: Եւ բանտապանն թաղեաց զմարմին սր՟յն . վ՛յ կալան և զնա , և յետ քերանաց կապեցին 'ի ձի խըժատերախ . յորմէ ձգեալ ը̅ քարս և ը̅ թուփս՝ կատարեցաւ 'ի քս , և թաղեցաւ ը̅ լաւրենտիոսի : Հ. օգ. 12: Յ. օգ. 10: Լ. օգ. 6. 10. և 13: և յուլ. 30 :

## Լուսոյ . տօն Ղուքրոս :

Լեւոնդէոս կի՛ լէոնտիոս կրօնաւոր , (որ է ը̅ լա. լեւոնտեննոս ,) էր աշակերտ սրբոյն սնորատաւի սքանչելագործ աբբային , և գործակալ նո՛ր 'ի փու

փունտեան վանս կամպանիոյ , յաւուրս Տոտիղայ արքային գոթացւոց. և եղև 'ի գնալ լեւերտինոսի երիվարաւ 'ի պէտս ինչ վանաց , զօրք գարդայ կոմսի գոթացւոց յափշտակեցին 'ի նմէ զերիվարն . այլ 'ի կամիլ իւրեանց անցանել ը գետն վուլտուրնոն՝ կասեա՛լ կացին երիվարք ամցն , և ոչ կարացին յառաջ խաղալ , մինչև դարձուցին զձի առն այ : Դարձեա՛լ 'ի դիմել երբեմն աւազակաց 'ի վանս սրբոյն ոնորատոսի , աչօք բացօք ոչ կարացին տեսանել զսրբն լեւերտինոս՝ որ կայր յանդիման նց յաղօթս , և ոչ մի ինչ կարացին գողանալ : Սա ինքն լեւերտինոս ստիպեալ երդմամբ 'ի կնոջէ ումեմնէ՝ յարուցանել զորդի նր , զոր տանէին 'ի թաղել , եհան 'ի ծոցոյ իւրմէ զհողաթափ վարդապետին իւրոյ ոնորատոսի , և եդ 'ի վր մեռելոյն . և յաղօթելն առ ածՙ նոյնժամայն յարեաւ մեռեալն : Այսպիսի քղքավարութբ և սքանչելի խոնարհութբ ելից զաւուրս իւր երանելին լեւերտինոս , և փոխեցաւ առ անձկալին իւր քս : Հ. օգ. 23: Գր. պապ. ,Ի տրամ. ա. 2: Բարոն. յամ. 543. և 555:

Լուկիոս կմ Լէւկիոս , և Կաւլինիկոս վկայք առ դեկոսիւ՝ եղեն նահատակակից սրբոյն Թիւրսոսի բազմաչարչար

չար վկային, զորմէ տատացաւ 'ի կարգի տօնելի սրբոց։ Լեւկիոս այր ջերմ յաճախապաշտութեան՝ յանդիմանել զդատաւորն կոմբրիկիոս վասն անդթութեան նր ընդէմ քրիստոնէից, եւ նախատել զկուռս, յետ չարաչար քերանաց գըլխատեցաւ. կին երկնային ձայնիւ հըրաւիրել աւանդեաց զհոգին՝ յառաջ քան զսուրն Թիւրսոս։ Իսկ կալլինիկոս՝ որ էր քուրմ կռոց եւ խորհրդական դատաւորին, 'ի տեսանելն ըզհանդէս նահատակութեան սրբոյն Թիւրսոսի՝ հաւատաց 'ի քս. եւ յետ նր կատարեցաւ եւ ինքն սրով յապամիա։

Հ. Յ. տէկ. 14։ Լ. յնկ. 28։

Լուկիա՝ որ եւ սրբուհին լուսինա մեծանուն կոյս եւ վկայ, էր 'ի սիրակուսայ քղքէ սիկիլիայ կղզւոյն 'ի հալածանս դիոկղետիանոսի. ծնօղք սորա էին հեթանոսք, վասն խօսեցան զնա առն հեթանոսի. բայց ինքն ծանեաւ զճշմարտութիւն, եւ հաւատաց 'ի քս, եւ ցանկայր սիրով որբութեան նմանօղ լինել սրբուհւոյ կուսին ագաթեայ նահատակելոյ 'ի նմին կղզւոջ. եւ զի մայր իւր տեսանէր էր ախտիւ, առեալ տարաւ զնա լուկիա 'ի կատանա քղք 'ի տապան ագաթեայ կուսի՝ յաւուր տօնի նր, եւ խնդրէր 'ի նմէ զբժշկութիւն մօրն. եւ ագաթի երեւեցաւ

նմ

նմ 'ի տեսլեան երկու հրեշտակօք , և տաց ցնա · քո՛յր իմ լուկիա , ը՞է՛ր խնդրես յինէն՝ զոր հանդերձեալ ես դու այլոց տանել · և զարթուցեալ լուկիայ՝ եգիտ զմայր իւր ողջացեալ · և հաստատեալ 'ի հաւատս՝ մկրտեցաւ հանդերձ մարբն : Եւ 'ի դառնալ իւրեանց 'ի տուն՝ բաշխեցին զինչս իւրեանց աղքատաց : Յայնժամայրն՝ որում խօսեցեալ էր զլուկիա , իմացեալ զքրիստոնէութի նր , և ոչ կարացեալ խափանել զնա , մատնեաց պասքա-սիոսի դքսին սիրակուսայ · և նա յետ փորձելոյ զհաստատութի հաւատոյ նր և սիրոյն որ առ քն , հրամայեաց տանել զնա 'ի տուն պոռնկութե , այլ ոչ ոք կարաց քարշել զնա և տանիլ , զի հոգին սբ անշարժ հաստատեաց զնա 'ի տեղւոջն · մինչզի թէպէտ և բազմութիք զօրականաց պարանօք ձգեցին զնա , եւ և բազում լծս եզանց բերեալ՝ նոքօք քարշեցին , այլ ոչ կարացին խախտել զնա 'ի տեղւո-ջէն : Ապա հրաման ետ բռնաւորն հուր բորբոքել զնովաւ նաւթիւ և ձիթով , և կենդանւոյն այրել զկոյսն · բայց և հուրն ո՛չ ազդեաց նմ · իսկ յորժամ ետ հրաման գլխատելոյ զնա , ինքնին կամաւորութբ կանգնեցաւ , և ձգեաց զպարանոց իւր , և այնպէս կատարեցաւ սրով · և մայր նր թա-

ղեաց

ղեաց զնա 'ի նշանաւոր տեղւոջ: Հ. տէկ. 14: Ց. Լ. տէկ. 13:

Լուսնիա միւս եւս երջանիկ կոյս՝ էր 'ի կամպանիայ գաւառէ մերձ 'ի Հռոմ. զոր կալաւ վմն 'ի քն հաւատոց թուլքան կմ ալքսիոս ոստիկան տեղւոյն. եւ ոչ կարացեալ սանձանօք հաւանեցուցանել զնա, հրամայուրէր զնա բազում պարգեւօք ամուսնանալ ը իւր: Իսկ սրբուհին մերժեաց զպարգեւս նր, եւ ասէ. ես հանդերձեալ եմ քնի հարսնանալ: Յայնժամ ծագեաց լոյս շնորհաց 'ի սիրտ իշխանին, եւ անկաւ 'ի սիրտ նր գութ 'ի վր աղախնոյն քնի. մինչզի ետ նմ տուն առանձին մօտ յապարանս իւր՝ կարգել նմ աղախնայս, զի ազատ լիցի եւ համարձակ պաշտել զհաւատս իւր պահօք եւ աղօթիւք. եւ ինքն յերթալն 'ի պատերազմ առնոյր զաղօթս կուսին, եւ նովաւ յաղթող լինէր. մինչեւ աղօթիւք կուսին արդարացաւ հաւատոց 'ի քն. եւ փափաքեալ նահատակութե՝ եթող զիշխանութն իւր, եւ կացեալ յատեան դատաւորին կամպանիոյ հանդերձ լուկիոյիւ, եւ այլ եւս քսան եւ մի նահատակօք՝ կատարեցաւ ը նս: Հ. փտ. յուլ. 25: յէա. 30: Ց. Լ. յուլ. 6:

Լուկիա տիկին հռովմայեցի և այրի՝ էր առ Դիոկղետիանոսիւ և Մաքսի-միանոսիւ, անցեալ զաւուրբք. որ 'ի ջանալն մայրենի գթով դարձուցա-նել զկռապաշտ որդի իւր զՊրոբոս 'ի հաւատս քնի, մատնեցաւ 'ի նմէ յատեան կայսեր վն քրիստոնէութե. և քաջութբ դատանեալ զչարչարութիւն՝ արկաւ 'ի կաթսայ եռացեալ. և յան-մնաս ապահիլն տբ՝ շրջեցուցին զնա ը. քաղաքն ծաղանօք և ծաղկանօք: Որում ը. առաջ եկեալ Գեմինիանոս կմ. Գերմանոս ումն 'ի հեթանոսաց՝ զարմա-ցաւ ը. համբերութն նր. և գնացեալ զհետ նր՝ հաւատաց 'իքն և մկրտե-ցաւ, և կոչեցաւ հոգևոր որդի Լու-կիայի. և ը. նմ եղ յատեան, և չար-չարակից լեալ նմ՝ ընքն կատարեցաւ սրով. իսկ սրբուհին Լուկիա յափշ-տակեալ ձեռամբ հրեշտակի՝ եդաւ 'ի լեառն տոռոմենայ, ուր խաղաղութբ հանգեաւ 'իքն: Հ. հոկ. 19: Յ. սեպ. 17: Լ. սեպ. 16:

Լուկիանոս կմ Լուկիլլիանոս՝ քուրմ էր կռոց 'ի կողմանս Նիկոմիդեայ յաւուրս օրեղիանոսի կայսեր, և 'ի ծերութե իւրում հաւատաց 'իքն. վյ կալաւ զնա Սեղբանոս կմ Սիղուանոս կոմն, և ետ խորտակել քարամբ զկզակսն, և

և գլխիվայր տանջել գանիւք և քե-
րանօք, և 'ի բանտ արկանել: Անդ-
անկան յոտս ն՞ր չորս մանկունք՝ Նիղ-
ոս, Հերապիոն, Թէոդոս և Դիոնէսիոս,
և խնդրեցին զաղօթս ն՞ր՝ լինել պսա-
կակից նմին. զի տեսաք զքեզ ասեն
'ի խաչին, ուր եդ ո՞րն մեր 'ի գլուխ
քո պսակ պայծառ՝ երևել բազում
հրեշտակօք. և ս՞րն ուրախ եղև, և
քաջալերեաց զն՞ս 'ի հաւատս: 'Ի
վաղիւն կացուցին զնա և զորդոյսն
առաջի կռմսին, որ ետ արկանել զն՞ս
'ի հուր. և 'ի շիջանիլ հրոյն յանձրևոյ՝
հատին զգլուխ ն՞ց մանկանցն. և
զս՞րն լուկիանոս տարան 'ի քիւզան-
դիա, և բևեռեցին 'ի խաչ գլխիվայր:
Յետ կատարման սոցա ամբաստանել
եղև առաջի կռմսին բարեպաշտապար
ն ծառայէր կոյս ո՞մն Պաւղա անուն,
թէ նա եղև պատճառ դարձի լու-
կիանոսի, և յորդորիչ մանկանց 'ի
նահատակութիւն. և դարմանիչ ն՞ց 'ի
բանտի. և 'ի խնդրել զնա զօրակա-
նաց՝ եկել գտին զնա յաղօթս 'ի տե-
ղին, ուր զլուկիանոս խաչեցին. ար-
կին շղթայս 'ի պարանոց սրբուհւոյն,
և տարան 'ի քարշ առ կռմսն. յորմէ
հարցել՝ քաջութ՞ք ետ պատասխանի,
թէ աղախին եմ ք՞սի, և դուստր
հոգևոր հօրն իմոյ լուկիանոսի, և
զպատառնալիս մահուն, ինձ երախտիս

ասէ

տալ համարձակութիւն զերծեալ ՚ի վշտաբեր կենացս՝ զանմահականն հանդիստ ժառանգեմ: Այդ հայրին զնա դալար բոջ, և հրով փորձեցին. և հրեշտակ մն պահեաց զնա, և ծանոյց նմ թէ բարեխօս են մն քո լուսիանոսն և մանկունքն՝ զորս դու հաւատացեր այն՝ ղխսի փառաց. այս տարան զպա-լա, և գլխատեցին ՚ի տեղի կատար-ման լուսիանոսի: Հ. Յ. Լ: յանիս. յ:

Լուկիոս. տես Ղուկիոս:

Լուրենտիոս. տես Լաւրենտիոս:

## Խ

Խանդալ. տես Է Աթանասի:

Խաչատուր նորընծայն՝ էր ՚ի տերգրաման-կերտոյ, որ և ամիդ կմ տիարբեքե-քիր, պատանի քաանամեայ՝ աղօթա-սէր և ընթերցասէր. որ ՚ի լրոյ վա-րուց սրբոց վառեալ ՚ի սէր մարտիրո-սութե՝ տեսանէր յանուրջս զինահատա-ծուն իւր. և յաւուր միում եկեալ ՚ի տանէ՝ ասէ. երթամ ՚ի շուկայն, և կարծեմ թէ ոչ ևս դարձայց ՚ի տունն իմ մր կոչէ զիս: Եւ յայնմ աւուր թշնամանեալ յայլազգւոյ ումեմնէ՝ ոչ

է այլ

ոչ ինչ սաստ. բայց միայն պախա_
րակեաց զգետսն նշ իբրև սուտ: Յայն_
ժամ կուտեցաւ բազմութիւն. և ձգե_
ցին զնա 'ի դատաստան իբրև հայ_
հոյիչ. և դատաւորն խրատ տայր նմ
ուրանալ զհաւատս և ապրիլ. իսկ
նա ասէ, թէև քերթեսջիք զիս' ես
ոչ դառնամ 'ի Քրիստոսէ: Վնյ յետ
բազում տանջանաց և սպառնալեաց'
ել վճիռ սպանման. և դահիճքն նախ
քերթեցին զմորթ նր մինչև 'ի լանջս
և 'ի քամակն, և ապա խարանեցին
կացնով 'ի վր միսն զբաղլուկսն և զո_
րքսն, և թողին զնա այնպէս ոգե_
սպառ մինչև ցերեկոյ. և մր խնդրելոյ
նահատակին' յղեցին առ նա ծանրկա_
ոփես քահանայք զնր հաղորդութեն'
եդեն 'ի մէջ հորոյ. զոր ընկալեալ դո_
հացաւ զնյ, և 'ի մէջ գիշերի աւան_
դեաց զհոգին. և էջ լոյս պայծառ
'ի վր մարմնոյ նր 'ի տեսիլ պահա_
պանաց. ապա հրամանաւ դատաւորի
բարձին զնա. և թաղեցին միաբան
ամ ազգք քրիստոնեից' որք կային 'ի
Ջուղքի անդ. և այս եղև յամի 1652.
ՌՃԱ. յօգոստ. 20: Հ. փք. մրք. 10:

Սուքիկ կմ խալափար Լ̄պս հոգետես'
էր ի յաշակերտաց սբց թարգման_
չաց միրոց սահակայ և մեսրոպայ.
և յետ կատարման նց շրջէր առաքե_

լաբսր , և ուսուցանէր զբանն այ զամ աւուրս իւր ։ Սա 'ի տօնի յայտնութեան զատեղի առեալ 'ի գիւղն ակոռի յորոյն մասեաց՝ ետես 'ի գիշերի տեսիլ, զի ժողովք բազմութեան ննջեցելոց կենդանացեալ՝ բազմեալ էին մեծաւ փառօք 'ի կօչունս անպատմելի ուրախութեան 'ի դարպասի միում. յորոց և զոմանս ճանաչէր 'ի կենդանութեան նց ։ Այլ տեսեալ զոմն ղազար անուն ակոռեցի՝ զի կայր տխուր արտաքոյ դարպասին, եհարց և խնդրաւ զպատճառն , զի այլք յիշատակաւ թողթից և ողորմութեան փոխեալ էին 'ի հանգիստ երանութեան . իսկ ինքն թէպէտ և բազում ինչս էր թողեալ , բայց ընտանիք նր անհոգանային կատարել զյիշատակ հոգւոյ նր , և ոչ տային ողորմութիւն աղքատաց և քահանայից ։ Ապա յարուցեալ ը առաւօտն՝ որ էր օր մեռելոց , պատմեաց զայս երանելին խաչիկ 'ի քարոզի . յայնժամ դաւիթ որդի ղազարու վախճանելոյ խոստովան եղև զանհոգութի իւր . և արար 'ի նմին աւուր ըունելութի մեծ քահանայից և ժողովրդոց վն հոգւոյ հօր իւրոյ , և ետ առատ ողորմութիս և պատարագս ։ Եւ դարձեալ ետես նը վարդապետն խաչիկ զնոյն տեսիլ, և զղազար մտեալ յուրախութին ը սբս նր ։ Եւ ինքն յետ այլոց

տաւաքինի վկայակաց՝ հանդերձ 'ի
Տր : Հղ. փղ. յհն: 7:

Սարգիսնոս և Նէոփիտոս . տէս յՅ Թա֊
նաս :

Սուրբ Փոթինէական . տես Է Գևորգայ
ակեապացոյ :

Սուրբ Փանջակեցի՝ էր պատանի գեղե֊
ցիկ. յոր այս արձակեցին դատեր պարս֊
կի սուրբ մն դրացւոյ, և ոչ կարացեալ
որսալ զնա . այսպ դշարիան՝ զոր դոր֊
ծեաց ը եղբօր իւրում, եարկ 'ի վր
խոսրովայ ողջախոհ մանկանն , վՅ
կոչեցին զնա պարսիկ քյատեան . իսկ
նա համարձակ եւ պատասխանի, թէ
օրէնք մեր զերբուել քարոզեն , բայց
ձերդ ոչ այդպէս : Ընդ որ բարկացեալ
տանջեցին զնա , և արկին 'ի բանտ .
զի կամ ուրասցի զքն , և առցէ զադ֊
ջիկն , և կամ չարաչար սպանցի : Իսկ
խազրովհ համատաութ եկաց 'իքն , և
ոչ խոտորեցաւ զինի բազմապատիկ
հնարից և հրապուրանաց տարաց և
բռնաւորեաց : Վսյ և կրկին ածեալ
յատեան զայս եւ ոլենի . եւ զքն
ոչ ուրանամ, այլ պատրաստ եմ 'ի
մեռանիլ վն անուան նր : Յայնժամ
տարան և կապեցին զնա հաստակն 'ի
թթենի մի, և ամ բազմաւ պարսից

քարկոծեցին զնա՝ հոսելով զքարինս իբրև զտեղատարափ, և զմարմին նր̅ արկին 'ի հուր. բայց ոչ այրեցաւ և ոչ մազ մի 'ի գլխոյ նր̅, ոռ̅ և ոչ կապանքն: Արդ ծնօղք նր̅ բարձին և թաղեցին զնա. և երկիցս լոյս սաստիկ ծագեաց 'ի վր̅ գերեզմանին, և այս եղև յամի 1399. պխը: Հ. յան. 26

Սուսաննա (որ թարգմանի ոսկեծաղիկ) էր աղեքսանդրացի՝ դուստր պատրոնեոսի հեթանոս իշխանի. Ը̅ որում եկեալ 'ի հռովմ 'ի ժամանակս Նումերիանոսի կայսեր, և հանդիպեալ կարպոփորոսի ք̅հ եղ̅օրն բրնակելոյ յայրի միում ուսաւ 'ի նմէ զհաւատս ք̅ի, և մկրտեցաւ. վ̅ն դանեաց զնա հայրն, և բանտիւ և քաղցիւ տանջեաց զնա. այս ՟Է̅ խրատու այլոց հանէ զնա 'ի բանտէ՝ եդ 'ի պայծառ սենեակս Ը̅ աղջկունս՝ մ̅մ փափկու թ̅: Յայնժամ սրբասէր երիտասարդն դիմեաց աղօթիւք առ ած. և նա էարկ թմրութն 'ի վր̅ աղջկանցն, մինչև ոչ կարել նց զրկել զնա 'ի սարկեշտութէ կմ̅ խափան լինել աղօթիցն: Յետոյ գտեալ հօր նր̅ զօրինորդ մի գեղեցիկ և իմաստասէր՝ կիրթ յաթենական ուսմունս Դոսրէհ կմ̅ տարխասնուն, եւ խռուստնթոսի 'ի հարսնութ̅. զի յաղթեսցի կամ̅ 'ի

դե-

դեղոյնք և կէս 'ի գիտուէն. իսկ իմ_
աստնութեամբ յաղթելոյ դարեհի մեծա_
յին բանիւք, և դարձոյց 'ի մբ̄ հա_
ւատս. մինչդի ուխտ եդին կալ առ
միմեանս անարատ կուսութե̄ իբրև
եղբայր և քոյր. և եղեն երկուքին ևս
քարոզ Ճշմարտութե̄ և սրբութե̄ առ
այլս. մինչև եղև ամբաստանութն ա_
ռաջի կեղերիոսի եպարքոսի, թէ
խոստանութեամբ որոշէ զայս 'ի կանանց
իւրեանց, և դարձէ զկանայս յարանց
իւրեանց. և նա կալաւ զնո̄, և ոչ
կարացեալ փոխել 'ի հաւատոց՝ մատ_
նեաց 'ի ձեռս կլոդիոսի արքունի,
որ բեւեռեաց զսո̄ն 'ի փայտի. և
գտել զնո̄ անաստան և անվնասելի,
հաւատաց 'ի քս̄՝ ինքն և կին իւր
ֆլաբիա, և երկու որդիքն յատուն և
միասին կմ̄ մաւրոս, հանդերձ եօթա_
նասուն զօրականօք: Զայն լուեալ
կայսեր՝ զկլոդիոս ընկղմեաց 'ի ջուր,
և զայլսն ետ գլխատել. իսկ զխոստո_
սանթոս և զդարեհ յետ այլոց լլկա_
նաց հրամայեաց թաղել կենդանւոյն:
Որ̄ և զայլ բազմութի̄ քրիստոնէից՝
որք կային յայրի միում ը̄ թէոդո_
րոսի քահանայի կմ̄ դիոդորի, և մա_
րիանոսի սարկաւագի, 'ի ներքս ար_
գելլին՝ փակելով զդուռն, և փլուզին
զայրն 'ի վե̄ նց: Հ. Յ. եռ. 17: Լ.
եռ. 25: եւ և դեկ. 1. և 3:

# Ս

Սուքիասն կմ՛ կայսերաւորն՝ էր 'ի սեր-դեայ պամփիւլիոյ՝ որդի Թեոկ-ղեայ բարեպաշտ և մեծատուն տիկ-նոջ. որ 'ի հալածանս դիւակերպա-նոսի և մոգախմբանոսի առաքեալ զորդի իւր 'ի պանդխտութիւն կիլի-կիոյ. ուր մանկացաւ նա վն՛ 'ի քն՛ հաւատոց 'ի ձեռս մոգախմբանի դա-տաւորի. և յետ դանից և խախտե-լոյ յօդից ոտիցն և ձեռացն, կապե-յանիւս հոլովեցաւ, և արկաւ 'ի հուր. այլ ազատեալ 'ի ձեռն հրեշ-տակի՝ արկաւ շղթայիւք 'ի բանտ: Զայն լուեալ մօրն՝ բաշխեաց զամ՛ ինչս իւր աղքատաց, և եկեալ 'ի պանդխտութիւն՝ եմուտ 'ի բանտն, և արտասուախառն խնդութ՛ մխիթա-րական լինէր որդւոյ իւրում, և սըր-բէր զարիւն վիրաց նր՛. ուր և 'ի սպանանել նց՛ 'ի մէջ գիշերի լոյս ծա-գեաց 'ի բանտն, և եկն ձայն աւե-տեաց յերկնից: Ապա յաւուր մեծի հինգշաբաթուն խոշտանգեցին զորդն կա-լնդոսս. և մայր սրբյն ետ դահճաց հինգ ոսկի դահճացն, զի մի խոշտա-ցեն զնա կանգուն, այլ գլխիվայր. և մնաց սրբն կալնդոս կենդանի մին-

չև

չև յերրորդ ժամ ուրբաթուն , և յայնժամ աւանդեաց զհոգին : Իսկ երանելին Թէոկղիա ետ իջուցանել զմարմին որդւոյ իւրոյ , և գիրկս արկեալ զնովաւ՝ աւանդեաց և ինքն զհոգին իւր առ ա՛ծ . և հաւատաց_եալքն Թաղեցին զերկոսին 'ի միում տապանի : Հ. տպ. 5 : Յ. Լ. տպ. 7 :

Սայինդոս խոստովանող վկայն՝ էր փախուցայի՝ առ Որեղիանոս կայսե_րաւ , այր առաքինի . որոյ եկեալ 'ի գաւառն Ոլոնիդայ՝ առնէր ողորմու_թի՛ կարօտելոյ , և բժշկէր զա՛մ ցաւս անուամբն քի՛ի : Կալաւ զնա Ռուփինոս դատաւորն . և 'ի նեղել զնա ուրանալ զհաւատս՝ հարաւ յայ_սոյն չարէ . և աղաօթեալ աղօթիւք սր՛յն՝ արձակեաց զնա ըստ պատուով , և ինքն գնաց 'ի Պերգամոն . և 'ի լի_նել շարժման և 'ի կործանիլ մեհե_նին՝ փախեան անհաւատք , և կային_դոս միայն աղատ . բայց յետ ի՛ա ա_ւուրց կալաւ զնա Կղէարքոս իշխանն , և ետ խորտակել զորունս ն՛ր , իսկ հրեշտակ տ՛ն ողջացոյց զնա , վ՛ր 'ի բաց արձակեաց զնա իշխանն . և նա եկեալ 'ի տուն իւր՝ եկաց առաքինի Ճգնութե՛բ զամս Ճ . և խաղաղութե՛բ հանգեաւ 'ի տ՛ր : Հ. տպ. յուլ. 1 .

Կապիտոլինէ աղախին Քի էր կապա_ դովկացի յերեւելի տանէ առ Դիոկ_ ղետիանոսիւ. եւ ըմբռնեալ 'ի դա_ տաւորէն եւ հարցեալ՝ ասաց. անուն իմ քրիստոնեայ է, եւ հայր իմ Քս, եւ քաղաքն իմ վերինն Եմ. ապա ու_ սայ 'ի Փերմփլիանոսէ եգպտացեանն կեսարու. վ՜յ որկին զնա 'ի բանտ. ուր եկն առ նա աղախինն իւր Երո_ փինէ կամ Երոտինէ, եւ ցանկայր չար_ չարակից լինել նմ: Այսպ կրկին քննեցաւ կապետողինէ, եւ գլխա_ տեցաւ. իսկ երանուհին վ՜ առաւել համարձակութեն՝ նախ քերանօք տան_ ջեցաւ, եւ ապա արկաւ 'ի հուր. յորմէ անկէզ պահեալ՝ կատարեցաւ եւ ինքն սրով: Հ. Յ. Լ. հոկ. 27:

Կարպոս եպս Թիւատիրայ, եւ պապի_ լաս կմ պապիլոս սարկաւագն՝ էին 'ի հալածանս դեկոսի, կմ վերոսի. զորս կալեալ բդեշխին ասիացւոց, և ոչ կարացեալ շրջել 'ի հաւատոյ՝ կապեաց զնս 'ի ձի, եւ վարեաց ա_ ռաջի իւր մինչև 'ի սարդիս քաղաք. եւ անդ ետ քերել զնս, եւ բեւեռեաց ը մխեանս. եւ 'ի ժողովել ամե՛ն կար_ դոսի՝ իբրեւ հարցաւ, ետ ողինի. ան_ սի զփառսն ով, եւ ուրախացաւ. յե_ տոյ արկին զնս 'ի հուր. յորում ա_

ղօթելով կատարեցան 'ի քն ․ Յայն-
ժամ քոյր սրբյն պապիղասայ կին կար-
պոսի Ագաթոնիկէ անուն, ինքնակամ
ընթացաւ 'ի տանջանս՝ ասելով․ Ճաշս
այս և ինձ պատրաստեալ է ․ և ինք-
նին տարածեցաւ 'ի վր խարուկին ,
և երիցս կարդաց, տր տր տր օգ-
նեա ինձ, և աւանդեաց զհոգին ։
Սոյնպէս և Ագաթոդորոս ծառայ սրբցն,
որ եկեալ էր զկնի նց, համարձակ
այլովք վկայիւք նահատակեցաւ զա-
նազան տանջանօք 'ի սարդիս կմ 'ի
պերգամոն ։ Հ․ հոկ․ 12 ։ Յ․ հոկ․ 13 ։
Լ․ ապր․ 13 ։

ԿԷՓԱՍ ԵՐԿՐՈՐԴ՝ բաց 'ի սրբյն պետրո-
սէ, և ԱՊՈՂՈՍ Է նիմ, յիշին 'ի յայսմ
աւուրս յունաց և հայոց իբրև աշա-
կերտք քնի կմ սրբյն պօղոսի․ զորոց
ասեսցի յԷ արձակն գործոյս 'ի տօնի
եօթանասնից ։ Հ․ սեպ․ 25 ։ Յ․ դեկ․ 9 ։

ԿԻԿԻԼԻԱ կմ ԿԷԿԻԼԻԱ , այն է սրբուհին
ՉԻՉԻԼԻԱ կամ ՉԷՉԻԼԻԱ հռչակաւոր
կոյսն՝ էր հռովմայեցի՝ դուստր մե-
ծատան, բայց կռապաշտի, առ ա-
ղեքսանդրոս կայսերաւ 'ի Գ․ դարու․
և էր խօսեցեալ Վաղէրիանոսի ազնուա-
կան երիտասարդի ։ Մինչև լեալ
էին հարսանիք, կիկիլիա հաւատաց
'ի քս, և մկրտեցաւ 'ի սրբյն ուրբա-

 նո-

նուէ հռովմայ հայրապետէ. և 'ի կատարիլ հարսանեաց՝ իբրև եղև կիկիլիա առանձինն ը վաղերիանոսի, ասաց նմ՝ թէ կայ երկնաւորին այ հրեշտակ՝ որ սիրէ զիս վս՟ կուսութե իմոյ, մինչդի 'ի մերձենալ քո յիս՝ կորուսանէ զքեզ. իսկ 'ի պահել քո զիս անարատ՝ սիրեսցէ և ըզքեզ ոմ՟ զիս, և ցուսցէ քեզ զփառս իւր և զմ՟յն իւրոյ: Եւ 'ի խնդրել վաղերիանոսի տեսանել զհրեշտակն՝ ասէ կիկիլիա. տեսցես, եթէ հաւատասցես 'ի քս, և մկրտեսցիս. և նա չոգաւ և մկրտեցաւ յուրբանոսէ. և եկեալ 'ի տուն՝ եգիտ զկիկիլիա յաղօթս, և զհրեշտակն այ մօտ առ նա, բացափայլ և հրաթև. որ եդ մի մի ծաղկեայ պսակս 'ի վերայ գլխոց կիկիլեայ և վաղերիանոսի: Յայնժամ խնդրեաց վաղերիանոս 'ի հրեշտակէն, զի և աւագ եղբայրն իւր Տիբուրտիոս լիցի քրիստոնեայ, և եղև այնպէս. զի ը մեկնիլ հրեշտակին՝ յորժամ եմուտ տիբուրտիոս (կմ՟ տուբերտիոս) յողջոյն նորոյ հարսին և փեսային, էառ զհոտ անուշութե վարդի և շուշանի 'ի գլխոց նց. և խնդրեց զպատճառն՝ դարձաւ և նա 'ի քս. և մկրտե՟ յուրբանոսէ՝ արժանի եղև տեսանել զհրեշտակ այ օրըստօրէ: Յետ այսորիկ 'ի նահա_

տա_

տանել ալմակիոսի եպարքոսի զբազում վկայս, Թաղէին զնոսա երկոքին եղբարքն՝ սուրբն վաղերիանոս և սուրբն տիբուրտիոս․ որք ըմբռնեցան և բրածեծ եղեն, և ապա գլխատեցան․ ընդ և դահճապետն մաքսիմոս, և այլք բազումք՝ որք նոքօք հաւատացին, կատարեցան սրով։ Կոչեցաւ և սրբուհին կիկիլիա յատեան․ և յետ դարձուցանելոյ աստուածային բանիւ զբազումս յարանց և ՚ի կանանց, արկաւ ՚ի ջեռուցեալ բաղանիս, ուր կրեաց զտագնապ մահու․ այլ յետ երից աւուրց տակաւին կենդանի գտեալ՝ նահատակեցաւ սրով։ Հ․ Նոյ․ 28։ Յ․ Նոյ․ 24։ Լ․ Նոյ․ 22․ Ն տպր․ 14։

Սէկնդէոս կմ Սէկնդիոս քահանայ՝ էր ապամիւլացի ՚ի գեղջէն տալմինոյ՝ երէց եկեղեցւոյն սիգայ․ զոր առ դիոկղետիանոսիւ կալաւ ստրատոնիկոս դատաւոր վն դարձուցանելոյ նր̄ զբազումս քարոզութբ, և ետ բևեռել զերկաթի կօշիկս յոտսն, և գան հարկանելով շրջեցուցանել․ ապա իբրև կամեցան այրել զնա, քաջ նահատակն ինքնին վճարեաց զդին փայտին՝ զոր կամէին խլել ՚ի ձեռաց աղքատի միոյ․ և բարձեալ զփայտն յուս իւր՝ տարաւ ՚ի սահմանէ տե-

զնն. ուր կացեալ 'ի մէջ բոցոյն՝ ու-
սուցանէր զհաւատապաշտս հաւատալ
յամ կենդանին. և եղեալ ամբողջ 'ի
հրոյն՝ յաղօթել խոսուն աւանդեաց
զհոգին. յայնժամ հաւատաց 'ի քս
քուրմ կռոց հանդերձ կնաւն և ա-
զախնաւն. և ամփոփեաց պատուով
զմարմին սր. քահանային : Հ. պպ. յուն.
24 : յեռ. 30 : Յ. Լ. յուն. 11 :

ՍԵՐԱՊԻՈՆ կամ ՍԻՐԱՊԻՈՆ անապատաւոր
կորնթացի՝ էր առ մեծն Թէոդոսիւ,
որդի յովհաննու քահանայի, և ըն-
թերցող եկեղեցւոյն կորնթոսի. որոյ
վառեալ 'ի սէրն քսի եթող զա̃ 'ի ժա̃
ամաց հասակի. և յետ շրջելոյ յա-
ղօթս յեէմ՝ ընկալաւ զսքեմ միայնա-
կեցաց 'ի վանս եւթիմիոսի. և յա-
ռաջադէմ գոլով յամի՝ յաղթահա-
րեաց զհետեւօղս որոգինի. և ընկա-
լեալ զհոգի մարգարէութե և ծածկա-
գիտութե՝ քաղցրութբ ուղղեաց զմեղա-
ւորս, յայտնելով նոցա զխորհուրդ-
սրտից նց, և յետ ճգնելոյ զբազում
ամս 'ի փառաւորս վնեաց՝ փոխեցաւ
առ տր 'ի խոր ծերութե, ձն ամաց: Հ.
հոկ. 4 : Յ. սեպ. 29 :

ԿԻՐԱԿՈՍ և ՊԱՐԱՍԿԵՒՈՍ (որք և դրին
կիրակէ և ուրբաթ) էին աղեքսանդ-
րացի 'ի Է դարու. կիրակոս յետ
մահ

մահուան ծնողացն՝ թողեալ 'ի տան
զքոյր իւր զպարասքեւի , կրօնաւո_
րեցաւ 'ի սկզբանէ առ ոտս մեծին Դա_
նիէլի , և պարասքեւի եւս զանձն 'ի
մեղս պոռնկութե · զոյն լուեալ ծե_
րոց՝ սանուցեցին զկիրակոս՝ երթալ և
շահիլ զքոյր իւր , որ և յաջողեցաւ
'ի նմնէ · զի Է լսել պարասքեւայ
զհոգելից բանս եղբօրն իւրոյ՝ դար_
ձաւ կատարեալ զղջմամբ , և գնաց
թոյադրութ և թակոան զկնի կիրա_
կոսի յանապատ դժուարին , մինչզի
'ի Ճանապարհի հերձան ներբանք ո_
տից նր , և արիւնն իբրև զաւա_
հոսէր , նոյնպէս և արտասուք յա_
չացն : Եւ յանցանել զՃանապարհայն
այլոց անապատաւորաց , խոտորե_
ցաւ պարասքեւի 'ի թաքուն վայրս մի
հրամանի եղբօր իւրոյ · ապա իբրև
եկն կիրակոս 'ի կոչել զնա՝ եգիտ
վախճանեալ · և 'ի թաղելն անմխի_
թար սգով առ չգիտելոյ զկատարած
նորա , յայտնեցաւ նմ հրաշալի տես_
լեամբ , թէ երանելին պարասքեւի
վն Ճշմարիտ ապաշխարութե իւրոյ ,
արդարացաւ յահեղ ատենին այ , և
պսակեցաւ ծիրանազգեստ փառօք ·
և եկեղ պատմեաց զայս հօրն Դա_
նիէլի և նմ եղբարցն · և նք փառս ե_
տուն այ , և գրեցին զպատմութի նր :

Հ. յունիս · 16 :

ԿԲ

Աբիւրակոս կամ Կիւրոս և Յովհաննէս տե-ղացիք Եգիպտի՝ էին յաւուրս դիոկ-ղետիանոսի : Կիւրակոս էր աղեք-սանդրացի , և գնացեալ 'ի բաբելոն՝ բժշկէր զամ̃ ախտաժէտս , և փոխէ վարձուն դարձուցանէր զանհաւատս. և ապա խոյս տուեալ 'ի ձեռաց յա-ջաղկոսաց՝ եկն յարաբիա , և յետոյ կրօնաւորական զգեստուք դարձաւ յաղեքսանդրիա : Իսկ յովհաննէս՝ որ էր եդեսացի , եկեալ յեմ̃՝ և լուեալ զսքանչելի գործս կիւրակոսի՝ գնաց առ նա յաղեքսանդրիա , և եղև նր̃ բնակակից և գործակից յամ̃ առա-քինի վաստակս : Յաւուրսն յայնո-սիկ սիրիանոս իշխան քաղաքին չար-չարէր վս̃ հաւատոց զոբբուհին աթա-նասիա , և զդստերս նր̃ . որք կոչէին Թէոդոտիա , Թէոկտիստէ , և Էւդոքսիա . յայնժամ կիւրակոս և յովհաննէս եկին 'ի քաջալերել զնս̃ , վս̃յ նաև ինքեանք ըմբռնեցան , և կրեցին կարծրագոյն տանջանս , և ապա գըլ-խատեցան հնդ̃ձ նոքօք : Իսկ քրիս-տոնեայք թաղեցին զմարմինս սբ̃ցն կիւրակոսի և յովհաննու մօտ 'ի հան-գիստ աւետարանչին մարկոսի . զորս յետոյ սբ̃ն կիւրեղ աղեքսանդրացի փոխադրեաց յեկեղեցին՝ զոր նուի-րեաց յանուն նց̃ , և պատուեաց ներ-

բո-

բողական Ճաւուխք , և արարած բա-ղում սքանչելիս բարեխօսութ̃ անար-ծաթ բժշկացս ․ յորոց զոչ սակաւս 'ի գիրս անցոյց սոփրոնիոս հայրապետն Եմ̃ի , որ եկեալ 'ի տապան սրբցս՝ ընկալեալ էր զառողջութ̃ի վտանգել̃ աչաց իւրոց ։ Բայց են ոմանք՝ որք նոյնանուն վկայս 'ի հռովմ ասեն նահատակեալ ։ Հ․ ճեփ․ 6 ։ Յ․ յնւ․ 31․ և յնս․ 28 ։ Լ․ յնլ․ 31 ։

Սեւերէս եպ̃ս․ գորտինոյ քաղաքի կրե-տայ կղզւոյն՝ էր այր ծեր 'ի հալա-ծանս դեկոսի , կմ̃ դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի ․ զոր դատեալ զու-կիոսի իշխանին՝ կապեալ ձեռօք և ոտիւք ընկէց 'ի հուր ․ ուր այրեցան կապանքն , և փայտն վառեալ՝ յա-ճիւն դարձաւ , այլ սր̃բն ել 'ի հրոյն ամբողջ ․ Ը̃ որ զարմացեալ իշխանին՝ արձակեաց զնա , մեղադիր լինելով հրամանաց թագաւորին՝ որ Ը̃դէմ քրիստոնէից ․ բայց յետոյ լուեալ՝ թէ 'ի ձեռն սր̃յն կիւրղի բազումք 'ի կռապաշտից դարձել են 'ի հաւատս քս̃ի , առ ահի թագաւորին ետ վե-րստին ունել զնա և գլխատել ։ Հ․ յուլ․ 12 ։ Յ․ Լ․ յուլ․ 9 ։ տես և Կիւ-րեղոս ։

Սեւերեան կմ̃ Սեւերիանէ աղախինն քս̃ի՝

էր

էր տարսոնացի. զոր 'ի հալածանս մաքսիմիանոսի կայսեր վն̃ քրիստոնէութեն մարկիանոս դատաւոր. և գտեալ զնա անփոփոխ 'ի հաւատոյ՝ եւ դերծուլ զհերս գլխոյն և զարտեւանունսն. և կախեալ 'ի Ճակատա նր̃ գիր նախատանաց՝ եւ նստուցանել յէշ մի՝ սփածել զենջակաւ եւթ, և ձաղելով և ձաղկելով շրջեցուցանել ը̃ մէջ տարսոնի. այլ յաղօթել նր̃՝ ոչոք 'ի կռապաշտից եւես զմերկունն նր̃. և այնպէս ածեալ 'ի ռուսա կէմ ուեգեստոն քաղաք՝ արկաւ երանելին 'ի հուր, ը̃ նմին և այլ կին մի քրիստոնեայ յուլիանէ անուն 'ի նոյն քաղաքէն ըռուսայ. և այնպէս կատարեցան 'ի քս̃: Հ. Նոյ. 6 : Յ.
Լ. Նոյ. 1 :

Սեղբեստրոս կմ̃ Սեղբեսդրոս Եպս̃ գորտինոյ կրետացւոց՝ էր 'ի հալածանս մաքսիմիանոսի. սա էր այր աղնոճական և ա̃ծ. որ 'ի գնալն ը̃ երկուց ծառայից՝ թէոփանէսի և թէոքարխստոնի 'ի վանս ուրեք, տեսեալ զկռապաշտսն զքաղեալ 'ի հանդէս զոհից կռոց, յոգւոց եհան և անէծ զնա, վն̃յ կալան զնա և արկին 'ի բանտ. որ աքանչելեօք ելեալ անտի՝ գնաց 'ի վանս առ Ճգնաւորն փելիքսիոս, և լռեալ 'ի նմա՝ թէ ունելոց ես զկրկին պըսակ.

սակս, մի վն եղիցուք, և մեռ այլ վն մարտիրոսութե. և աղգամամբն այ Ճանապարհ արար 'ի հաւոյմ՝ յաղթելով փորձանաց դիւէին ըՃանապարհայն. և եղև զօրացուցիչ բանտարկելոց վն անուանն քի 'ի հաւոյմ: Իբրև կամէր գնալ անտի յեւէմ, հրամանաւ հրեշտակի դարձաւ 'ի կրետէ. և յայսմ միջոցի սաղ ձեռնադրեալ եղև. և յետ վարելոյ զպաշտօն քաջ հովուի մինչև 'ի խոր ծերութե, ըմբռնեցաւ յադրիանոսէ դատաւորէն կրետայ. և վն 'ի քն հաւատոց ընկալաւ զՃիռ գլխատման, 'ի հասակի ղէ ամաց. և զի այնպիսի ծերութե չկարէր քայլել մինչև 'ի տեղին կատարման, եդին զնա 'ի վր սայլի. և այնպէս տարեալ մինչև 'ի տեղին ռազման կանչեցեալ՝ անդ հատին զգլուխ նր: Հ. յունիս. 5: Յ. յունիս. 14:

Կղէմէս. էպս՝ բազմաչարչար նահատակն՝ էր առ դիոկղետիանոսիւ յանկիւրիոյ գաղատացւոց, զաւակ հօր հեթանոսի, և մօր քրիստոնէի եփրոսինեայ. որ սնոյց զորդին 'ի մբ հաւատս, և 'ի ժամ մահուն իւրոյ մարգարէացաւ զմարտիրոսութի նր, թողեալ զնա մանուկ ժբ ամաց 'ի խնամս սոփիայի մեծատունն և բարեպաշտ կնոջ: Իբրև անձեաց մանուկն՝

կրօնաւորեցաւ, և ձեռնադրեալ քահանայ՝ ժողովէր զորս մանկունս հեթանոսաց, կերակրէր զնոսա, և ուսուցանէր զհաւատս քրիստոսի, և մկրտէր։ Այս քսան ամաց ձեռնադրեցաւ եպիսկոպոս անկիւրիոյ քաղաքին, և համարձակ քարոզէր զքն̃ ած̃. վասն որոյ մատնեցաւ 'ի ձեռս դոմետիանոսի բռնաւորի, ք̃ փոխանորդի. որ յետ քերել տալոյ զնա մինչև յոսկերս, և խորտակելոյ զատամունսն՝ յղեաց կապանօք 'ի հռովմ առ դիոկղետիանոս. յորմէ հոլովեցաւ յանիւս և արկաւ 'ի բանտ. ուր դարձոյց ըզբազումս սքանչելեօք և մկրտեաց. որք և սպանան հրամանաւ արքայի. միայն զերծաւ սա 'ի նոցանէ՝ Աղաթանգեղոս անուն։ Իսկ զկղեմէս գանեցին, և հրացեալ շամփրօք այրեցին զկողսն, և յղեցին կապանօք 'ի Նիկոմիդիա առ Մաքսիմիանոս՝ հանդերձ Աղաթանգեղոսիւ։ Եւ անդ երկոքին եւս զկնի գանից կրեցին զբերանս հրամանաւ ագրիպպինոսի դատաւորի, այլ 'ի բանտի ողջացոյց զնոսա հրեշտակն. և ա̃մ բանտարկեալքն դարձան 'ի տ̃ր, և ազատեցան աղօթիւք սրբոյն կղեմայ։ Իսկ ինքն կղեմէս և Աղաթանգեղոս արկան առաջի գազանաց, և ապա 'ի ծով, այլ զերծան. և առաքեցան անդրէն յանկի-

կիւրիա • ուր կիւրեղոս դատաւորն
ադոյց նշ սաղաւարտս հրացեալս ։
Այպա տարան յամփառն քաղաք ատ-
դամետախանոս դատաւոր , որ էարկ
զնո 'ի մէջ կրոյ • և 'ի գիշերին պահա-
պանքն տեսեալ լոյս 'ի վր նշ՝ մախն
է նո 'ի կիրն • և յանձնեաս պահել ա-
մենեցուն՝ զխաստեցան նոր հաւա-
տացեալքն • իսկ սբն կղեմէս և ա-
գաթանգեղոս եդան 'ի մէ հրացեալ
մահճաց ։ Յետոյ յղեցան 'ի տարսոն
առ մաքսիմիանոս դատաւորն • և 'ի
ճանապարհի ջուր բղխեաց աղօթիւք
սբյն կղեմայ ։ Եւ յետ կրելոյ անդ
ես բազում չարչարանս՝ դարձեալ ա-
ծեալ եղեն յանկիւրիա • ուր ղուկիոս
դատաւորն ետ ղնդել զոսս նշ 'ի
կօշիկս բանտի • և ապա առանձին
դատեալ զագաթանգեղոս՝ ետ մխել
շամփուրս յունկանէ յունկն , և հա-
տանել զգլուխ նր • և առեալ ա-
փիայի զմարմին սբյն՝ թաղեաց յառ-
տիճանս եկեղեցւոյ ։ Եւ 'ի տօնի յայտ-
նուէ տուեալ կաշառս բանտապա-
նաց՝ եհան զսբն կղեմէս , և տարաւ
'ի տուն իւր • և զգեցեալ սբյն եղ-
ջարդ եպսկութե իւրոյ՝ մատոյց զսբ
պատարագն • և յայնմ վայրի 'ի վերայ
հասին անհաւատք , և հատին զգլուխ
սբյն կղեմայ , և երկու սարկաւա-
գայն՝ քրիստափորի և խարիտոնի • զորս
թա-

Թաղեաց պատուով մարտիրոսանեքն սոփիա. և առնէ տր անպակաս բժշկութս՝ որոց գնան հաւատով 'ի սապան սրբյն կղեմայ յեկեղեցւոջ որ խաչին մինչև ցայսօր: Հ. յնչ. 24 : Յ. Լ. յնչ. 23 :

Կղաւդիոս, աստերիոս, և նէոն կամ նէոնէսոս՝ էին երեք եղբարք՝ երիտասարդք ընտիրք և առաքինիք, առ դիոկղետիանոսիւ 'ի խորանդոն քաղաքէ իսաւրացւոց. և զի զրկէր զնս 'ի հայրենի ընչից կուապաշտ մօրու նց՝ ելին յատեան լուսիոյ դատաւորի 'ի մամեստիա. ուր իբրև պարտաւոր դատու մօրու նց՝ մատնեաց զնս վս քրիստոնէութեն. և 'ի ստիպել դատաւորին զնս ուրանալ զքս, առ ոչինչ համարեցան նք զինչս իւրեանց, և մերժեցին զանօրէն հրաման բռնաւորին. վսյ փորձեցան մի առ մի դառնակսկիծ տանջանօք քերանաց և ջահից, խորտակման և քակտման անդամոց, և ընկելոյ 'ի մամուլս. և ապա 'ի փայտի բեւեռեալ աղօթելով աւանդեցին զհոգիս իւրեանց: 'Ի նմին ժամանակի անդ 'ի մամեստիա դատեցաւ վն 'ի քս հաւատոյ և սրբուհին Թէոնիլլա. զոր կախեալ զհերացն՝ դան հարին և տանջեցին յերկար՝ մինչև յաւանդումն հոգւոյն ։ Ընդ նմին

ա.

սան նահատակեալ և սրբուհին դըս-
տերքն : Հ. հոկ. 27 : Յ. հոկ. 29 . Լ.
օգ. 23 :

Սոփիա և դստերաց . տես 'ի Տօնելն :

Կոնոնոս այրահովուած , որ և Ջոնան խաշ-
րածէ՝ սա լինէր 'ի ժամանակս առա-
քելոց 'ի գեղջէն Բիդանոյ կմ Եգա-
նեաց՝ որդի նեստորիոսի և ան-
նայ հեթանոս ծնողաց . որք ածինն զնա
կին . բայց կոնոնն խրատեալ 'ի ձեռն
միքայելի հրեշտակապետի , և ընկա-
լեալ զկնիքն քնական , հաւանեցոյց
զհարսն իւր կալ անարատ պարկեշ-
տութբ առ միմեանս իբրև եղբայր և
քոյր , նոյնպէս և զծնողս իւր դար-
ձոյց 'ի քրիստոնէութի . մինչև հայր
նր մարտիրոսացաւ իսկ : Արար և
այլ գործս սքանչելեաց առաջի հե-
թանոսաց , և կործանեաց բանիւ զբ-
բագինս նց , և զդևսն բնակեալս 'ի
նս հնազանդեցոյց 'ի ծառայութի իւր ,
մինչև փախչել անտի . միայն անուն կոնո-
նոսի էր յաղթող . և այնպէս դարձան
բազումք յանհաւատից 'ի նր : Վնյ
մատնեցաւ կոնոնոս 'ի ձեռս մագնո-
սի դատաւորի , և ձաղկեցաւ արեան
չափ , և ապա արձակեալ ածաւ 'ի
տուն մի . ուր փոխանակեալ զնյ աւան-
դեաց զհոգին : Հ. մրտ. 5 : Յ. մրտ. 6 :

Կո.

Աննանոս տարփինգեան այր բարեմիտ՝ էր ՚ի Նաւաղարեթէ գալիլեացւոց ՚ի հալածանս դեկոսի. որ յաշխատելն ՚ի պարտիզն խուրում՝ ըմբռնեցաւ դաւաճանութք երկուց զօրականաց որոգինեալի և նաւուգորոսի. և կապեալ ը̅ ձի՝ ածաւ ՚ի քաղաք առ պոպղիոս դատաւոր պամփիլեայ. յորմէ տանջեալ ՚ի պաշտօն կռոց՝ յոգւոց եհան և ասէ. իցէ՞ թէ ով դատաւոր՝ դու ես իբրև զիս պաշտեիր զք̅ս, որ է ճշմարիտ ած՝ օրհնեա՛լ յաւիտեանս։ Բարկացաւ դատաւորն, և ետ հարուլ յոտս նր̅ բևեռս, և ընթացուցանել առաջի կառաց խորոյ, մինչև եհաս ՚ի գիւղ մի. ուր վտանգեալ սր̅յն ծունր կրկնեաց, և աղօթելով աւանդեաց զհոգին։ (Սա յոմանց վերպակաւ կիպրացի կարծեցաւ՝ վս̅ կոչելոյ նր̅ յունարէն գիբուրօս, որ է պարտիզպան)։ Հ. Տրփ. 2 : Յ. Լ։ Տրփ. 6 :

Նոպրէ. տե՛ս ՚ի Պատերմութէ։

Ալօղրէա, կամ Նէաղրէա աղախինն ք̅ի՝ էր կիւրենացիաւ դիոկղետիանոսի. սա յետ կալոյ ը̅ աւն ամս երկու՝ այրի մնացեալ, կրէր շղթայսաւ. և ոչինչ օգտեալ ՚ի բժշկաց՝ գնաց առ

սր̅ն

սր՟ն Թէոդորոս եպս՟ Կիւրենոյ, որ էր 'ի բանսն վն՟ քն՟ի. և աղաչեաց զնա՝ դնել զձեռն 'ի վր՟ գլխոյ իւրոյ և աղօթել, որով առ ժամայն փարատեցաւ ցաւ նր՟. և այնուհետև դարման տանէր սր՟յն ը՟ երկուց կուսանաց որդւոյ և լուսկեա: Եւ եղև յետ նահատակութե՟ սր՟յ եպսին՝ կալաւ դստաւորն և զկոպրիլա. և ոչ կարացեալ որսալ զնա հրապուրանօք 'ի չար կամս իւր, եա դնել 'ի ձեռս նր՟ կայծակունս հրոյ և կնդրուկ, զի ակամայ խնկեսցէ կռոց. իսկ սրբուհին ալինդ փակեաց զմատունս իւր, և յանձն էառ այրել չարաչար. ապա կախեցին զնա, և քերեցին չարաչար. և իբրև իջուցին 'ի վայր, աղօթելով աւանդեաց զհոգին: Հ. մրթ. 20: Յ. Լ. յուլ. 5:

Սուրբն կն՟ Նոյլուբն էր 'ի Թեբայիդ քաղաքէ եգիպտոսի առ մաքսիմիանոսիւ. և ըմբռնեալ վն՟ քրիստոնէութե՟ ածաւ առ դատաւոր տեղւոյն. յորժամ լուեալ՝ թէ զոհեա՞ դից, ոչինչ ետուր պատասխանի. և մինչդեռ կարծէր դատաւորն՝ թէ նա խորհի յանձն առնուլ, ասաց սր՟ն երիցս. կռոց ոչ զոհեմ, զդևս ոչ պաշտեմ, և զքն՟ ոչ ուրանամ, այլ քաղցր և անոյշ համարիմ զչարչարանսն՝ որ վն՟ քն՟ի: Վս՟յ

կա

կախեցին զնա գլխիվայր՝ հարկեալ
վէմ ծանր զպարանոցէն․ և յետ դա-
նից՝ տարան 'ի մեհեան․ և յոչ կամիլ
նորա զոհել, այրեցին զերանելին կեն-
դանւոյն ։ Հ․ փտ․ մայ․ 22 ։ Յ․ մայ․ 19 ։

Աւունէլիոս այր ծերունի՝ էր 'ի նի-
կիա քաղաքի 'ի ժամանակս հալածա-
նաց կռապաշտից․ զոր վն̃ անօրէնն
քնի քարշեցին ը̃ փողոցս քաղաքին․
և յետ սաստիկ դանից՝ հատին ըզ-
գլուխ սրբյն ։ Հ․ ոկտ․ 15 ։

Աուբերիոս քահանայ՝ էր 'ի կեսարիա
կապադովկացւոց 'ի հալածմանս դիոկ-
ղետիանոսի․ և բազում ճգնութ̃ նա-
հատակեալ կատարեցաւ վն̃ անուանն
քնի ։ Հ․ փտ․ յնվ․ 23 ։

Ալեքսենդրոս կամ Ալեքսէս ազնուական
ծերունի՝ ծաղկեալ ալեօք՝ էր 'ի քա-
ղաքէն զմիւռնայ կամ միւռայ լիկեա-
ւոց 'ի ժամանակս կռապաշտից․ և 'ի
խոստովանել զնա 'ի բաց կալ 'ի մոլորու-
թէ , կալան զնա և ածին առ դա-
տաւորն․ յորմէ բազմօք հարցեալ՝ ոչ
այլ ինչ ասաց , բայց միայն՝ քրիստո-
նեայ եմ․ վսյ փանեցին զնա , քերե-
ցին , և խանձողեցին զկողս , և տապա-
արկին 'ի հուր բորբոքեալ․ ուր քաղց-
րու̃ է աւանդեաց զհոգին 'ի ձեռս այ̃․

և մազ մի 'ի նմանէ ոչ այրեցաւ • զոր
աւել հաւատացելոց՝ ժառանգելին պսա-
կով: Հ. պար. 12: Յ. պար. 13: Լ.
պար. 15:

Ո

Աշերք և չխտան վարդապետք՝ էին ե-
կեղեցականք և Ծառայք առ-
դիոկղետիանոսին • Հարբերն 'ի սղէ
էին եղխպտացիք, և գլխաւորք նց՝
պետրոս կմ աղեքսանդրոս, Նեղոս,
պատերմութէոս և եղիա եպսունք •
որք 'ի կեսարիա պաղեստինոյ դատա-
նեցին առաջի դքսին ընդ մի բերան
գ.քն ած • վզն բրեցին զաջոյ ակննց
կմ հատին զակամնան, և ջլատեցին
զաջղջղունս ձախոյ ոտին, և այսպ ար-
կին 'ի հնոց: Խանկյիւունքն էին պա-
ղեստինացիք • որք յետ բանտարկու-
թե՝ կրեցին նոյնպիսի խեղութն ան-
դամոց, և աշխատեցան 'ի մետաղս Ծ̄-
այլ մահապարտս • և հաստատուն դք-
տեալք 'ի սէրն քի՝ նոյնպէս ողջա-
կեզ եղեն հրով: Հ. Յ. Լ. ժեպ. 19:

ԼԵՄԵՈՍ, ԱԵՂԻՓՈՍ, և ՓԻՂՓԱՅԻՏՈՍ՝ ազ-
գականք էին չորից զինուորացն, բա-
սոսի, եւսեբի, եւտիքի, և բասիլե-
գեայ • և յետ կատարման նց 'ի դիոկ-

ղետախանոսէ՝ 'ի գնալ կայսեր 'ի կապետոլիոնն՝ աներկիւղ համարձակութբ թշնամանեցին զնա և զդիս նր, խոստովանելով և զինքեանս քրիստոնեայս . վսյ յետ բազում սղոքանաց և սպառնալեաց հրամայեաց կախել զնս 'ի լեզուացն, և 'ի ներքոյ հուր վառել, որով կատարեցան 'ի քս : Հ. օգ. 13 :

Հինգ հազար կուսանք՝ էին 'ի սահմանաց տրութէյունաց, զորս գերեաց խոսրով առաջին որքոյ պարսից յաւուրս յուստինիանոսի կայսեր . և տարաքեաց զնս 'ի Թուրքաստան՝ ընդ այլ ընծայս, վս տանելոյ յնէ անոր զօրս յօգնականութի : Եւ եղև յերթալ նց զճանապարհայն՝ իբրև հասին 'ի գետ մի մեծ, զմտաւ ածեալ կուսանաց զկորուստ հաւատոյ և պարկեշտութե՝ զոր ունէին կրել յերկրի բարբարոսաց, և պատճառանօք լուանալոյ 'ի գետն՝ հեռացեալ 'ի պահապանաց, միաբան յաղօթս կացին արտասուօք . և ելեալ 'ի վր կամրջաց՝ արկին զանձինս 'ի գետն . որ ոչն արդարանայր՝ եթէ չլինէր մանաւոր ազդմամբն այ, ոչ 'ի դէպ է հաւատալ . միայն թէ յայնպիսիս ժմ տուածի հարց սբց՝ առաւել զարմանալ արժան է, քան հետեւիլ : Հ. սեպ. 6 :

Ճ։ Պրոխորոս․ յէ․ պաշտօնէական սարկաւագաց
Դ․ Գործ․ Զ․ Գլ․ Ե։

Հիպատիոս ( որ և գրի Հիպատոս, կմ̃ պատիոս ) սքանչելագործ եպս̃ գանգ-րայ՝ էր մին 'ի հարց ն̃ք ժողովոյն Նիկիոյ․ սա բաց յայլոց նշանաւոր գործոց՝ սպան զվիշապ օձն բռնեալ 'ի գանձարան արքունի․ զի 'ի փախչիլ օձոյն՝ եկեալ 'ի տեղին ուր հիպատիոս ը̃ աղաչանաց մեծին կոստանդիանոսի՝ հրամայեաց հուր վառել 'ի հրապարակի, և ինքն զօրութ̃ աղօթից 'ի դուրս բերել զօձն, և կարկառել 'ի նա զգաւազան իւր՝ ծագիւ նորին էառ և ընկէց 'ի հուր․ որ վն̃ կայսրն ետ նկարել 'ի մուտս գանձատան զպատկեր սրբ̃յ եպսին։ Իսկ 'ի դառնալ նր̃ յաթոռ իւր՝ արիանոսք կմ̃ նովատիանոսք ընկեցին զնա 'ի խորափիտ մի․ ուր 'ի կնոջէ ումեմնէ հարեալ գլուխ նր̃ քարամբ, և այնպէս կատարեցաւ 'ի մէ̃ր ուղղափառ հաւատոյ։ Հ․ Նոյ․ 9։ Յ․ Լ․ Նոյ․ 14։

## Ղ

Ղազարոս ( որ է̃ այլոց Լազարոս, և 'ի մեզ Խազարոս կմ̃ Խորոս ասի ), և Ծերոս՝ էին երկոտասանեակ եղբարք՝ ար-

ոճեստին քարահատք 'ի բիւզան-
դիս. ուր իբրեւ նահատակեցան վար-
դապետք իւրեանց պրոկղոս և մաք-
սիմոս, մեկնեցան անտի յուլպանիա
քղք դարդանիոյ կի լիւրիկիոյ, և
անդ վաստակէին 'ի գործս իւրեանց.
յայնժամ եա նշ լիկիանոս ոմն իշխան
կի արքայորդի ինչս և գործաւորս՝
շինել զտաճար կռոց. իսկ նք զար-
ծաթն բաշխեցին աղքատաց. և զշին-
ուածն 'ի գլուխ հանել՝ նուիրեցին
ճշմարտին այ, խորտակել զարձանս
կռոց. Է որ բարկացել լիկիանոսի՝
եարկ զնս 'ի հուր. և գտել զնս ան-
վնասս 'ի բոցոյն՝ եա ձաղկել զնս,
և ընկենուլ 'ի գուբ մի խորագոյն,
և լնուլ աւազով: Իսկ յետ ոչ բա-
զում ամաց 'ի ծաղկիլ քրիստոնէութե
ան մեծն կոստանդիանոսի, յայտ-
նեցին սրբքն տեսլեամբ զտեղի նշ-
խարաց իւրեանց. որք և բերել ե-
ղեն 'ի կոստանդինուպօլիս, և եդան
յեկեղեցւոջ պատուով: Հ. փք. օգ.
17: յէտ. 18: Յ. Լ. օգ. 18:

Ղեոնդէս կի Ղեոնդիոս պօրոշան եր-
եկլի՝ էր 'ի տրապօլիս փիւնիկեցւոց,
ծննդեամբ յելլադայ, առ վեսպա-
սիանոս կայսերաւ. յորմէ առաքե-
ցաւ 'ի դատաւորութն փիւնիկիոյ ադ-
րիանոս ոմն. և լուեալ վն զղեոնդեայ՝
Թէ

թէ է քրիստոնեայ . առաքեաց զհե-
ղապատս զօրագլխաւն և զՄեղապաւլոս զօրա-
կանն՝ ածել զնա առ ինքն : Իբրև
հասին սոքա 'ի տրապօլիս , կալաւ
զհիւպատոս ջերմ սաստիկ . և խրա-
տեալ 'ի հրեշտակէ տն՝ գոչեաց ե-
րիցս , ած սբյն ղևոնդեայ օգնեա
ինձ , և առժամայն ողջացաւ : Վսյ
'ի դատանելն զղևոնդիոս՝ հաւատաց
'ի քս , և մկրտեցաւ ինքն և թէոդու-
լոս ը նմ : Զայն լուեալ դատաւորին՝
ետ բերել զերեսին զնս , և նա հրա-
մայեաց սրածեծ առնել և քերել
զմարմին սբյն հիւպատոսի և թէո-
դուլոսի , և յետոյ գլխատել : Ապա
մատոյց և զսբն ղևոնդիոս 'ի քերանս .
և կապեալ վէմ ծանր 'ի պարանոցն
էարկ 'ի բանտ . ուստի հանեալ յետ
աւուրց կապեցին զնա յորսայս 'ի
չորս ցիցս . և այնչափ հարին՝ մինչև
աւանդեաց զհոգին , և թաղեցաւ 'ի
նաւահանգիստն տրապօլեայ : Հ . յնո.
23 : Յ . Լ . յնո. 18 :

Ղ ԵՒՈՆԴԷՍ կմ ՂԵՒՈՆԴԷՍ Հիւսին էր
յեղլադայ գաւառէ , որ 'ի ժամանակս
կռապաշտից համարձակ քարոզէր
զքն . և 'ի տօնի յարութեն 'ի նոճա-
գեալ նր զերգս սաղմոսաց բազմութն
քրիստոնէից 'ի տարգինէ քաղաքի ,
կալան զնա կռապաշտք հանդերձ

ջօքն խոստանօք, և տարան 'ի կորնթոս. ուր գտանէ զնո՝ քերեցին զմարմին սրբոյն զԼեոնիդէսի, և զոր կանայսն գան տարին, և ապա ծովահեղձոյց արարին զամենին: Հ. ապր. 13: Յ. ապր. 16:

Պուլխերիա. տես 'ի Թէոդորոս:

Պուլխերոս (որ և գրի Բուլխերոս) էր 'ի կիւրենայ լիբիոյ, այր իշխանաւոր՝ վերակացու կալանաւորաց, միանգամայն և աթոռակից դատաւորի, թզաւ երկայն քան զայլ մարդիկ և թիկնեղ: Սա յաւուրս նահատակութե սրբոյն Թէոդորոսի կիւրենոյ եպսին հաւատաց 'ի քս. հաւանեցոյց և զդիգնիանոս դատաւորն լինել քրիստոնեայ. և նաւեաց հանդերձ նովաւ 'ի կիպրոս, ուր գտեալ հալածումն մեծ. և խոստանեալ զանձն 'ի թիւս կապելոցն վն անուանն քի. և մտեալ 'ի տաճար կռոց՝ կործանեաց զբագինսն. և հրապարակաւ խոստովանեալ զքրիստոնէութիւն իւր՝ կատարեցաւ սրով: Իսկ դիգնիանոս ամփոփեաց զմարմին սրբոյն. և յետ աւուրց միոյ երբև բացին զտապանն նր գտաւ 'ի վր կրծոց նր ծաղիկ վարդի. և 'ի կամիլ տեսողացն առնուլ զայն՝ անյայտ լինէր. և 'ի թողուլն՝ դարձեալ էր.

րբէր վարդն · վո̅յ չինեցին վկայա-
րան 'ի վ̅ր տապանի սր̅յն : Հ. մրգ.
30: Յ. օգ. 21: Լ. օգ. 20:

## Ս՝

Ս՝ակարէոս հռոմայեցեանս Մարկոս ·

Ս՝ակրէնա աղօխինին ք̅ղի էր քոյր
սր̅յն բարսղի կեսարացւոյ և սր̅յն
գրիգորի նիւսացւոյ, անդրանիկն 'ի
տան զաւակս՝ ծնողաց իւրոց. և իբր
մայրապետ խնամօղ հարազատացն
ե̅ր մարմնոյ և ե̅ր հոգւոյ · իսկ ինքն
թէպէտ և էր առնեալ առն, բայց
հաւանութ̅ ն̅ր զկուսակրօն կեանս
վարէր ա̅մ պարկեշտութ̅ և սքանչելի
սրբութ̅ · Ճգնէր 'ի պահս և յաղօթս՝
երկաթապատ մարմնով, և առնէր
բժշկութիս անձնամբն ք̅ղի · և ըն հոգ-
ւով ա̅ծային գիտութ̅՝ օգնական լի-
նէր եղբարց իւրոց յա̅մ առաքինի
վաստակս · մինչզի 'ի բերանոյ ն̅ր ա-
ռեալ գրեաց գրիգոր նիւսացին ոչ
սակաւ բանս զխորին խնդրոց հո-
գւորաց · և այսպիսի զարմանալի ա-
ռաքինութ̅ ընե̅լ սրբուհւոյն մակրի-
նայ զաւուրս իւր՝ գնաց առ անձկա-
լին իւր ք̅ս : Հ. յուլ. 5: Յ. Լ. յուլ. 19:

Մակրոբիոս կապադովկացի, և Գոր-դիանոս պափլագոնացին՝ էին ծաղկա-հասակ երիտասարդք որք ծառայէին սեղանոյ լիկիանոսի կմ մաքսիմիանո-սի կայսեր, սիրեցեալք յոյժ նր վն բարի տեսլեանն՝ և յաջողակ սպասա-ւորութե իւրեանց. բայց իբրև գիտաց բռնաւորն զքրիստոնէութի նց, ոչ կարացեալ հրապուրանօք և սպառնա-լեօք որսալ զնս 'ի մոլորութի կռոց, աքսորեաց յերկիրն սկիւթացւոց (կմ ըստ այլոց 'ի գաղղիա). ուր հասեալ նց 'ի տոմիտոն (կմ 'ի նովիոդոմ) քաղաք՝ յաւելան Դ քաջ նահատակս, որք ձգնէին վն հաւատոյ. և անուանք նց՝ զոտիկոս, ղուկիանոս, հեղիէ և վաղե-րիանոս. յորոց զոտիկոս և ղուկիանոս կատարեցան սրով. իսկ այլքն ար-կան 'ի բանտ. ապա գլխատեցաւ և հեղի. իսկ մակրոբիոս և գորդիանոս հրով այրեցան. և վաղերիանոս լա-լով 'ի վր գերեզմանի նց աւանդեաց զհոգին։ Հ. սէպ. 19։ Յ. սէպ. 13։ Լ. սէպ. 13. և 17։

Մամելթա կմ համելթա՝ էր քուրմ ար-տեմեայ դից 'ի պարսս, բայց ունէր քոյր քրիստոնեայ. և յաւուր միում տեսեալ յանուրջս զհրեշտակ մի որ ուսուցանէր նմ զխորհուրդս քրիս-տոս,

տոհմէութն, շարժեաւ անհին. և գնացեալ ը֊ քեռ իւրում առ եղբն՝ հաւատաց 'ի քն և միրոնեցաւ. զոր իմացեալ կուապաշտից՝ կալան զմամէլքա. և յետ բազում խոշտանգանաց՝ քարկոծ արարին, մինչդեռ յանձին կրէր զհանդերձ միրոնուն, և զմարմին նր արկին 'ի գուբ խոր. յորմէ հանաւ 'ի ձեռնքրիստոնէից, և թաղեցաւ պատուով, և շինեցաւ եւ եկեղեցի յանուն նր: Հ. սեպ. 28: Յ. հոկ. 5: Լ. հոկ. 17:

Մանուէլ կոմնենոս՝ որ և կիռմանուէլ կայսր յունաց՝ էր որդի յովհաննու պերփիւռոժենայ և յաջորդ նր. սա բաց յայլոց գործոց բարեպաշտութե՝ փոյթ մեծ կալաւ ածասէր մտօք վն միաբանութե և սիրոյ 'ի մէջ յունաց և հայոց. և յետ թղթակցութեց ը֊ շնորհալւոյն և ը֊ գրիգորի կթղկսի՝ ետ առնել ժողով մետրապօլտաց 'ի կոստանդնուպօլիս վն սոցին իրաց. այլ մինչև էր ընկալեալ զպխնի 'ի ժողովոյն հայոց, անկաւ 'ի մահիճ մահու. և ութ աւուրբ յառաջ քան զվախճան իւր զգեցաւ զձև միայնակեցի, և նստաւ 'ի վր փսիաթի. և յետ մաքրելոյ զանձն յամ արատոյ 'ի ձեռն սբ խորհրդոց՝ փոխեցաւ առ ած յամի 1180: Եւ հայք կարդեցին զյիշատակ

նր՟ է՟ բարեպաշտ Թագաւորս . ոչ՟ նա լինքն մնացեալ կայսր տուեալ էր կարգել զյիշատակ շնորհալւոյն է՟ սբ հայրապետաս: Եւ թէպէտ ոմանք 'ի յոյն եւ 'ի լատին հեղինակաց անգէտ ցուցանեն զինքեանս գործոց բարեպաշտութե մնացեալ կայսեր, բայց ազգ մեր ոչ մոռացաւ զբարի յիշատակ նր՟ : Հ. Չէպ. 25: Տէս եւ Մանուէլ վկայ՝ է՟ Սամուէլի :

Մանուշակ սրբուհին հռոմկլայեցի (որ 'ի յն. եւ 'ի լտ. Իա կոչի, է՟ որում մանուշակ ծաղկին է՟ յն. Իօ՛ն, եւ է՟ լտ. Վի՛օլա ասի), էր մի 'ի գերելոց անտի ինն հազարաց, զորս վարեաց 'ի տրաւթէ յունաց շապուհ արքայ պարսից. եւ զի էր անցեալ զաւուրբք, խրատէր մայրաբար զմանկագոյնս՝ հաստատուն կալ 'ի հաւատս, մինչ մատնեցաւ 'ի ձեռս մոգպետին. որոյ չկարացեալ տալ նմ՟ ուրանալ զքս՟, գանեհար ուժգին, եւ եթող 'ի բանտի զամ մի ողջոյն՝ վտանգել 'ի սովոյ եւ 'ի ծարաւոյ եւ 'ի ցրտոյ: Ապա կրկին քննեալ զաղախինն քսի՝ եւ ձաղկել զնա նռնենի գաւազանաւ, եւ կիսամահ կարկ դարձեալ 'ի բանտ զամիսս ԺԵ : Յետոյ վերստին դատեցաւ սրբուհին յատենի մոգուց, եւ կապեալ բարակ չուանօք՝ արկեցաւ մինչեւ 'ի

Ճար-

ճարճատումն ոսկերաց. հարաւ փո-
կովք ՟Է կուրծս և ՟Է որովայնն, և
ապա գլխատեցաւ, և թաղեցաւ 'ի
բարեպաշտ կնոջէ ումեմնէ. ուր և
զարիւնախառն հողն 'ի տեղւոջէ կա-
տարման ժողովեցին այլք, որ լինէր
դեղ ամ՟ ցաւոց: Հ. Յ. ստեփ. 11: Ն.
օգ. 4:

Մ՝աշտոց Վարդապետ Երէցորդ (քզի ա-
ռաջին մաշտոցն է սբն մեսրոպ,) էր
եղիվարդեցի 'ի կոտէից, որդի քա-
հանայի, կրօնաւորե՟լ նախ 'ի վանս
մաքենոցաց, և ապա Ճգնե՟լ 'ի կղզին
սևանայ ամ՟ առաքինութ՟, և փայլե՟լ
իմաստ գիտութ՟. որ և բազում
վիշտս կրեաց 'ի յաչաղկոտաց և 'ի
ադխտաց վս՟ ունելոյ զհոգի միաբա-
նական սիրոյ ՟Է ամ՟ եկեղեցիս. բայց
իմաստունք և առաքինիք ճանաչէին
զյարգ նորա, և վայելէին 'ի հոգե-
բուղխ վարդապետութե՟ նր՟ ոչ միայն
մերձաւորք, այլև հեռաւորք 'ի ձեռն
խրատական և մխիթարական թղթոց,
զորս գրէր, մինչև արժանի եղև նըս-
տիլ յաթոռ կաթուղիկոսութե՟. այլ
ոչ յերկարեալ 'ի նմին՝ յետ եօթն
ամսոց գնաց առ անձկալին իւր քս՟
յամի 897. յհիզ. և թաղեցաւ 'ի գառ-
նի: Բայց 'ի սակաւ ժամանակի անդ-
րոբար բազում ուղղութիւս և բարե-

կարգութս · մինչզի սմա ընծայն յու-
մանց և վերջին կարգաւորուԹ մաշ-
տոց գրոց, որ կանխաւ էր յօրինել
՚ի մէջն մեսրոպայ և յաշակերտաց
նր : Հ. հոկ. 13 :

Մ՝ աշխնոս այր իմաստասէր և հան-
ճարեղ՝ ծաղկեալ էր բարեպաշտուԹ
՚ի ժամանակս կռապաշտից · և տե-
սեալ զնա՝ զի ոչ միայն զանասունս,
այլև զմարդիկ զոհէին ՚ի պատիւ
կռոց, նախանձեցաւ զնախանձ տն,
և առս արձակեալ տապալեաց զսե-
ղան զոհից նց · և նշաւակեաց զմոլո-
րուԹ հեթանոսաց՝ խոստովան եղև
առաջի բազմուԹ զՃշմարտուԹ քնա-
կան հաւատոյ : Յայնժամ գիտեցին
անհաւատք ՚ի վր նր, և խոշտանգել
զնա փայտիւ և քարամբ՝ և փետելով
զհերս նր, ածին առ դատաւորն ·
որ եւս հարկանել զնա չոր արջա-
ռաջլօք · և յետ խանձողելոյ զկողս
նր՝ հրամայեաց գլխատել · որ և կար-
ծի լինել ՚ի հռովմ՝ յաւուրս նահա-
տակուԹ սրբյն կալխատրատոսի և ըն-
կերաց նր : Հ. սեպ. 27 : Յ. մրտ. 17 :

Տէս և Մարինոս :

Մ՝ ակրոնս ազախինն քնի՝ էր սնա-
ծին ՚ի սերգեայ պատրիկիոյ · և առ-
եալ զդուստր իւր միանձն՝ եկն ՚ի
կոս-

կոստանդնուպօլսոյ յաւուրս Լևոնի
կայսեր սաւառնոյ. ուր յանձն առեա_
լ էր զգուստրն պարկեշտ կուսի միոյ
շուշան անուն՝ ինքն գնաց և կրօնա_
ւորեցաւ իբրև ներքինի բարբիլոս ան_
ուամբ, 'ի վանս ոք հօրն բասիանո_
սի. որոյ առեալ յայտնութի՝ թէ կին
է մատրոնա, յղեաց զնա յամասիա
'ի վանս կուսանաց. ուր պայծառա_
ցեալ սրբութե և փառաւորեալ յամէն
փոխեաւ յերմ, և անտի եկն 'ի բիւ_
րիտոն, և բնակեցաւ յաւերակս մե_
հենի՝ հալածեալ անտի զդևսն. և
յետ ծաղկելոյ անդ ևս սքանչելեօք՝
դարձաւ անդրէն 'ի կոստանդնուպօ_
լիս, և նստաւ յեզեր քաղաքին 'ի
խուց մի. ուր եկն թագուհին 'ի տես
նր, և շինեաց զտեղին վանս կանանց.
իսկ մատրոնայ կեցեալ ցխոր ծերու_
թի՝ հանգեաւ 'ի քս հարիւր ամաց:

Հ. նոյ. 5: Յ. նոյ. 8:

Մատրոնա Վկայուհին էր թեսաղոնիկե_
ցի՝ աղախին պորպլեայ կին պուտիլեայ
կնոջ հրեի, որոյ այրն ունէր աշտանիճ
զօրավարութե: Սա յետ կատարելոյ
զա՛մ ծառայութի տիկնոջ իւրոյ՝ 'ի
գնալ նր 'ի ժողովարան հրէից, ինքն
խոյս տայր և երթայր յեկեղեցին
քրիստոնէից: Զոր իմացեալ տիկ_
նոջն՝ մատնեաց զնա 'ի ձեռս հրէից.

որք

որք գանեցին զնա ուժգին, և ար֊
կին 'ի բանտ անտոնճաղ զաւուրս ե֊
րիս, զի ուրասցի զՔն· այլ գտեալ
զորբուհին հաստատուն 'ի հաւատս,
կրկին եւս գան հարին արեամբ չափ·
և թողին 'ի բանտի սովեալ, մինչև
աւանդեաց զհոգին առ ած· իսկ
զմարմինն ընկեցին արտաքոյ քղքին
թեսաղոնիկոյ 'ի կերակուր շանց·
զոր անարատ գտեալ քրիստոնէից՝
թաղեցին ուրեք պատուով· և ապա
աղեքսանդրոս եպս քղքին՝ շինեաց
մատուռն 'ի մէջ քաղաքին յանուն
սրբուհւոյն մատրոնայ, և անդր փո֊
խեաց զմարմին նր, որ ծաղկեցաւ
սքանչելեօք բժշկութեց: Իսկ տիկին
նր չար՝ անկաւ 'ի յետին մուրացու֊
թն· և 'ի սովոյն եմուտ 'ի հնձան
մի՝ ժողովել զկուտ ձմերաւ խաղո֊
ղոյ· յայնժամ անկաւ գերան հնձա֊
նին 'ի վր նր, և կորոյս զնա: Հ·
մրտ. 21: Յ. մրտ. 28: Լ. մրտ. 15:

Մարթա՝ էր անուն՝ ոմն բարեպաշտ
մօրն սիմէոնի սիւնակեցի առաջնոյ,
նոյնպէս և երկրորդին բնակելոյ 'ի
սքանչելի կոչեցեալ լերին, մինչև չփո֊
թել ումանց զգործս երկոցունց· բայց
այս լինչ որոշ աւանդի վս երկրորդ֊
մարթայի, թէ էր ջերմեռանդն յոյժ
և ընտանի նր ածածնի· և 'ի հա֊
ւա

ւատարիմ պաշտաման նր վճարեալ
զկեանս իւր՝ ծաղկեցաւ սքանչելեօք
զկնի մահուան . քզի երևէր 'ի տես_
լեան՝ որոց գխմէին 'ի սպասման նր ,
և բժշկել զցաւս նոցա ըն մարմնոյ՝
խրախուսէր զնս յանմահականն կեա_
նըս , խօսելով առ նս ղանձառ բա_
րեաց արքայութեն երկնից ։ Հ. փղ.
յուլ. 19։ Յետ. յուլ. 25։ Յ. յուլ. 5 ։
տես և 'ի Մարխամ։

ՄԱՐԻՆ կամ ՄԱՐԻՆԷ էր աղախին
կուսապաշտ կնոջ միոյ այրւոյ , յորմէ
բաղում չարչարանս կրեալ վն ան_
ուանն քի . և յորժամ կամէին սպա_
նանել զորբուհին , յաղթել նր՝ պա_
տառեցաւ վէմն , և ընկալաւ զնա 'ի
ներքս , և այնպէս կատարեցաւ 'ի
տր ։ Հ. օգ. 13 ։

ՄԱՐԻԱՄՈՒ ԱՄԵՆԱՍԲ ԱԾԱԾՆԻ՝
մանանուոր յիշատակք , բայց 'ի գըլ_
խաւոր տօնից իւրոց , գտանին 'ի
կարգի յայսմաւուրաց՝ չորեքկին . որ են։
ծն . ՏՕՆ [illegible] 'Ի [illegible] .
որ 'ի կործանել զարձան անահիտայ
չծնուհւոյն՝ առ 'ի խափանել զպար_
շելի յիշատակ նր , կարգեաց 'ի նմին
աւուր կատարել զտօն 'ի պատիւ
ամենօրհնեալ ածածնի , որ է պար_
ծանք և յոյս հաւատացելոց ։ Այլ

այս

այս տօնախմբութիւն վ̄ լինելոյն յամ-
սեանն օգոստոսի՝ երևի միացեալ ը̄
տօնի վերափոխման, որ է հանդի-
սաւորագոյնն 'ի տօնս ա̄ծամօրն․ և
միայն յիշատակ մասնաւոր տօնիս
վերծանի 'ի յայսմաւուրս յետ իննօ-
րէից վերափոխման ։ Հ․ օգ․ 25 ։

Է․ Տօն պատկերին տիրամօրն, զոր ձևացոյց
սբ̄ աւետարանիչն յովհաննէս 'ի վ̄ր
կիպարիս փայտի․ և սբ̄ ա̄ծածինն
'ի ժամ փոխման իւրոյ՝ առեալ զայն
ը̄ աղաչելոյ առաքելոյ՝ մերձեցոյց
յերեսս իւր, և օրհնեաց, զի լիցի
յիշատակ իւր 'ի մէջ հաւատացելոց,
և դեղ ա̄մ ցաւոց ։ Իսկ զի ոչ էր անդ
ներկայ բարթուղիմէոս առաքեալ,
յետ վերափոխման կուսին էառ զայն
պատկեր 'ի մխիթարութի իւր․ զոր
և ը̄ իւր բերեալ 'ի հայս՝ արար նո-
վաւ նշանս երևելիս․ և այսպէս եդ
զայն յեկեղեցւոջ՝ զոր շինեաց յանուն
սբ̄ ա̄ծածնի 'ի վասպուրական Տ̄ի,
և առ նովաւ զկուսաստանն՝ որ կոչե-
ցաւ հոգւոց վանք ։ Հ․ փպ․ օգ․ 20։
յէտ․ 17 ։

Գ․ Գիւտ պատուական գօտւոյ Ա̄ծածնի․
որ պահիւր զբաղում ժամանակս
հանդերձ հանդերձիւք նորին առ
ումեմն կուսի յՆէմ․ և կայսրն Ար-
կադէոս որդի մեծին Թէոդոսի 'ի
խնդիր լեալ ը̄ գօտւոյն՝ եւ գտա-
նել

նել և բերել զայն 'ի կոստանդնու_
պօլիս . որում ը̄ ամաց եղել Թափօ_
րապէս՝ ընկալաւ զայն . և ապա եղեւ
'ի փառաւոր գըրոցի՝ ի̄ 'ի փոքրիկ
արկեղ, և կնքեալ արքունի մատա_
նեաւ՝ համդերձ յիշատակագրութե̄
տարւոյ և աւուր գիւտին, եւ պա_
հել 'ի նորաշէն եկեղեցին ա̄ծածնի :
Իսկ յետ իբր յիսուն ամաց 'ի տան_
ջիլ զոյի Թագուհւոյն լեոնի կայսեր
յայսոյն չարէ, եբաց կայսրն զայն
գըրոց . և առեալ պատրիարգին զմ̄ր
գօտի տիրամօրն՝ մերձեցոյց 'ի զոյի,
որով ազատեցաւ նա 'ի ցաւոց իւ_
րոց : Հ. Յ. օգ. 31 :

դ̄ . Գիւտ պատուական գօտւոյն՝ յորում
եդեալ էր գլխադիր ո̄յ կուսին . կի̄
ը̄ յունւաց՝ փոխադրութի̄ պատուա_
կան զգեստու ամենաս̄ր կուսին :
Քանզի յաւուրս Նախասացեալ լեոնի
կայսեր՝ որ Թագաւորեաց յամի ա̄ն
457, եղբարք երկու պատրիկք՝ գաւ_
բիոս և կանդիտոս, 'ի ձեռն շնոր_
հաց ամենօրհնելո̄ ա̄ծածնի դարձե̄լք
յարիոսի աղանդոյն յուղղափառու_
թե̄, ողջունեցին զկայսրն և գնացին
յեէ̄մ վս̄ ուխտի . և 'ի շրջիլ իւր_
եանց 'ի գալիլեա՝ տեսին առ դուրս
պառաւ կնոջ միոյ այրւոյ հրէի ըզ_
բազմութ̄ն ախտաժետաց, և 'ի ներքս
'ի տան տապանակ մի, և մօտեցեալ

լոյց

լուցեալս և լուսնկ ծխեալ. և քաղում ողոքանօք բանադատեալ զկինն հրեայ պատմել նց զիրսն՝ լռեան 'ի նմէ, թէ 'ի տապանակի աստ է գլխագիրն կին հանդերձ մարեմայ մօրն յսի, յորմէ լինին սքանչելիք յամ նեղելոց : Յայնժամ իջևանս կալան 'ի տան անդ երկու այն իշխանք. և հնարիւք եդեալ 'ի տեղւոջն զայլ տապանակ համաչափ և նմին նման առաջնոյն՝ բարձին զայն, և բերին 'ի կոստանդնուպօլիս. զոր մեծաւ հանդիսիւ ընկալեալ թագաւորին և պատրիարգին, տարան և եդին յեկեղեցին սրբ աստուածածնին՝ որ 'ի տեղին վլախեռնաս կոչեցեալ, կատարելով տօն ցնծուէ ը̄ գիւտ պատուական գանձուն : Հ. Յ. յուլ. 2 :

Մարիամ Եգիպտացի՝ էր յաղեքսանդրիայ քաղաքէն 'ի Ե կամ 'ի Զ դարու. որոյ գեղ մարմնոյն եղև նմա և այլոց առիթ մեղաց. զի ընդ հասանելն 'ի չափ ժբ ամաց՝ անարգեալ զծնօղս իւր՝ ետ զանձն 'ի պոռնկութիւն. և զամս ժէ 'ի նոյն շաղեալ յեփղծուտս՝ գնաց ապա ընդ ուխտաւորս յԵմ ոչ ուղիղ միոքք. և 'ի տօնի վերացման խաչին՝ յորժամ կամէր մտանել յեկեղեցին, արգելլաւ աներևոյթ զօրութեամբ որ խաչին՝ յետս ընկրկեալ երիցս և չորիցս :

Որոյ հայեցեալ 'ի պատկեր նր ածած-
նին՝ ածորդւոյն 'ի գրկի, որ կայր
'ի վերայ դրան, զղջացաւ 'ի բոլոր
սրտէ հաստատուն ապաշխարութբ,
և կալաւ երաշխաւոր դարձի իւրոյ
զտիրամայրն. որով յաջողեցաւ նմ
մտանել յեկեղեցին, և երկիրպա-
գանել փայտին կենաց: Ապա ազդ-
մամբ ամենօրհնեալ կուսին՝ դիմեաց
յանապատ, ունելով ընդ իւր երիս
նկանակս հացի. և խոստովանեալ և
հաղորդեալ 'ի վանս սրբոյն յովհաննու
մկրտչի առ ափն յորդանանու, էանց
յայնկոյս. և ձգնեցաւ յանապատի
զամս խէ՝ խոտաբուտս կենօք և ան-
տանելի համբերութբ, անտես 'ի
մարդկանէ: Իսկ 'ի մերձենալ վախ-
ճանին՝ առաքեաց ածծ առ նա զսբ
հայրն զոսիմոս. որ էր խնդրոյ երա-
նելի կնոջն եբեր նմ զսբ հաղորդու-
թին մինչև յափն յորդանանու, ընդ
որ էանց մարիամ իբրև ըն ցամաք.
և ընկալեալ զսբ խորհուրդն՝ դար-
ձաւ սքանչելի երագութբ 'ի տեղի
իւր, և 'ի նմին աւուր փոխեցաւ առ
ածծ. քանզի 'ի գալ ամին միւսոյ՝
անցեալ զոսիմայի ըն յորդանան, և
գնացեալ ի օր ըն անապատն՝ եգիտ
զմարիամ վախճանեալ, ունելով գիր
'ի սնարից՝ թէ ես ննջեցի յապրիլի
Ա՝ յաւուր չարչարանաց քսի ածյ մե-
րոյ.

րոյ. որ այն իսկ էր օրն հաղորդելոյ նր 'ի Նախընթացս ամի, ի յամի տն. 427, կամ ը այլոց՝ 527: Եւ 'ի խորհիլ զսախմոսն՝ թէ զիարդ ամփոփեացէ զՏր մարմինն նր, առեալ մի փորեաց զանեղի գերեզմանի. և հայրն զսախմոս թաղեաց զնա անդ սաղմոսիւք և օրհնութբ: Հ. Յ. առք. 1: Լ. առք. 2:

